



Բ Ա Գ Ի Ն

Ե. ՏԱՐԻ 1966 Ա. Գ. Բ. Ի. Լ.  
digitised by A.R.A.R.®

ԹԻԻ 4

**پاكين**  
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية  
 مدير المسؤول  
 السيد اوتين كارنيك قزانيان

•

**PAKINE**  
 REVUE MENSUELLE  
 LITTÉRAIRE & ARTISTIQUE  
 Propriétaire  
 Dr. A. KAZANDJIAN

•

**Բ Ա Գ Ի Ն**  
 ԱՄՍԱԳԻՐ  
 ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
 ԵՒ ԱՐԹԻՍՏԻ

ՎԱՐՔԻ ԽՐԱԳԻՐ  
 Կ. ՍՍՍՈՒՆԻ  
 ԽՐԱԳԻՐՆԵՐ  
 ԵՅ. ՊՕՅԱԶԵԱՆ, Պ. ՍՆԱՊԵԱՆ

ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ  
 ԱՆԴԱՄՆԵՐ  
 Յ. ԳԵՂԱՐԴ  
 Յ. ՈՍԿՈՆԻ  
 Բ. ՓԱՓԱՅԵԱՆ  
 Վ. ՇՇԱԿԱՆ

ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԷ  
**G. SASSOUNI**  
 Rue Sélim Boustany, Beyrouth - Liban

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

- Ս. ՍԱՀԱԿԵԱՆ
- Ա. ՍԵՒԱՆ
- Յ. ԿԱՐԱՊԵՆՅ
- Ա. ԵՐԿԱԹ
- Կ. ՍԱՍՈՒՆԻ
- Լ. ԲԶՆՈՒՆԻ
- Ա. ՍԵՒՈՒՄԵԱՆ
- Փ. ՀԵՐԱՆԵԱՆ
- Շ. ՏԷՐ ՄԵԼՔՈՆԵԱՆ
- Ա. ՍԵՆԵԱՎՍԿԻ
- ԵԴ. ՊՕՅԱԶԵԱՆ
- Պ. Ս.
- Բ. Փ.
- .....
- ՆՇՄԱՐՆԵՐ

# Բազմը

## ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

Ե. ՅԱՐԻ, ԹԻԻ 4

Ա Պ Ր Ի Լ, 1966

ՊԷՏՐՈՒԹ

### ԱՎԱՀԱԿԵԱՆ

## ԱՐՁՈՒ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ

Առձեռք, որ ազգ մը արտում էր գտնեն, կը  
կրկնեն զնա:

ԱՐՓՈՐ ԱՐՓՈՐԱՆ

Կարենայու համար արքիլ այսուհետև

Օտի, զուրի հացի մըմամ

Մեճ պլուս ունիճ հպարտութեամ:

ՎԱԼԱՆ ԹԷՏԵՆԱՆ

Քսանական թուականներուն, բիէս  
Պընուա, իր մէկ գրութեան մէջ, նկարա-  
պրած էր սպանդի տեսարան մը, որ կը  
ներկայացուէր այսպէս.

Հայերը, տեղ մը, խոշոր փոս մը  
փորած եւ լեցուցած են տեղւոյն վրայ  
իրենց խողիտղած թուրքերու գիւղնե-  
րով: Այն պահուն, երբ փոսը ծածկել  
պիտի սկսին, անոր շուրջ հաւաքուած  
բազմութեան մէջէն դեռատի հայուհի մը  
առաջ կ'անցնի եւ զայստեղ տակաւին  
մէկ հողի տեղ կայծ կ'ըսէ, մատնանը-  
շելով փոսին մէկ անկիւնը: Արդարեւ,  
կը ըբերին թուրք մը եւս, կը մորթեն ու

կը տեղաւորեն հոն ուր մէկ հողի տեղ  
կար տակաւին... եւ...:

Երբ ականատես Փրանսացին, որ  
դէպքը հեղինակին պատմողն է, շփտել  
կու տայ օրիորդին՝ արարքին անմարդ-  
կանութիւնը — «Ա՛խ, պարո՛ն, դուք  
չէ՛ք գիտեր...», կը հառաչէ Հայուհին:

Արդ, իր այս ելոյթին համար փո-  
խանակ Առլանտիթ-ի հեղինակը անմի-  
ջապէս հայ ժողովուրդի մեծագոյն բա-  
րեկամներէն մին հռչակելու եւ անոր  
տեղ յարգարելու ընդ աջմէ Փրիտտֆ  
Նանսէնի, Արլան Զօպանեան հաւար մըն  
է փրցուց, արտամտիկ նամակներու տա-

րափ մը տեղացնելով Հեղինակին եւ Ֆլորանսերէն թերթերու խմբագրութիւններուն գլխուն։— Ո՛չ, սխալ է, սո՛ւտ է, վրպարտութիւն է։ Մենք ատանկ բան չըրինք։ անո՛նք ըրին, միայն անոնք ըրին...

Այն աստիճան, որ Պընուա, ճարահատ, Հրապարակաւ ներողութիւն խնդրեց (ամնստ օճորապլլը ըրաւ) անշուշտ մազէն ըսելով։— Թանկ փի ըուր վու! (աւելի գէշ ձեզի համար)։ Ապա թէ ոչ, Հայութեան ուխտակալ թշնամի իր ծանօթ քանի մը տխրահոշակ Հայրենակիցներուն ցանկին վրայ պիտի անցնէր իր անունն ալ...



Առաջին աշխարհամարտի ընթացքին, Տարսեան լեռներուն մէջ տեղ մը, Հայ որբացած պատանի մը ներկայացուցին կառուցուող երկաթուղադժի բաժանմունքներէն մէկուն գերմանացի շքանային բժիշկին։

— «Հէ՞», բացականչեց այծի ժօրուքով ու խոզի վիզով Տեւտոնը, «Քուրքերը դեռ քեզ չմորթեցի՞ն» (էէ՛սմէտի, էէ՛սմէտի...) ու որտանց կը ծիծաղէր։ Թէ՛ն, ափսո՛ս, խոզի վիզով այդ խոզը շտեաւ — կանխաւ կծկած էր — Հայկական լեզուի կորիւնները, որոնք Զինադադարին եկան զբաւելու երկաթուղադժի մինչեւ Պոզանդի, բայց Հայ պատանին այդ օրէն Հասկցաւ, թէ վիճակ մը, որ մինչեւ այն ատեն գրեթէ բաղձալի ցոյց տրուած էր իրեն (ճեւհատակաց յիշատակը օրհնեա՛լ ըլլայ յաւիտեան...) Ի՛նչ աստիճան ծիծաղելի կրնար ըլլալ օտարականի մը՝ նոյնիսկ քաղաքակիրթ եւրոպացի, նոյնիսկ համալսարանական օտարականի մը համար։



Երկրորդ աշխարհամարտի ընթացքին, Մոզիպոսի մէջ, նախկին Հայ պատանին կը ծանօթանար Հերբ Կասթէրի մը հետ, որ իր սենեակի ընկերն էր Գազիբէի եւրոպական մէկ Հիւսիսային Եւրոպայի մէջ։

Ինք Հիւսիսային մտած էր վերաբուժական գործողութեան մը համար, իսկ գերմանացին, իբր թէ Հիւսիս, Հոն ազատանած էր կեղծոնացման կայանի ոչ-Հանգստաւէտ պայմաններէն որքան հնար է երկար ատեն խուսափելու յոյսով։

Հայը Հայերէն գիրքեր ունէր հետը։ Իր սենեակիցը անոնցմէ մէկ երկուքը թղթատիչ էր, հետաքրքրուեցաւ թէ ի՛նչ լեզուաւ գրուած էին անոնք։

— Հայերէն։

— Հայերէն... հը՛մ։ Աջէն ձա՞ի կ'ընթանան տողերը, թէ ձախէն աջ։

Կարճ քանի մը եւրոպական լեզուներու ծանօթ այդ Տեւտոնը, որ սոսկական մէկը չէր անշուշտ, ոչինչ, բացարձակապէս ոչինչ գիտէր Հայ ժողովուրդին մասին, բացի այն միակ բանէն թէ ան ժողովուրդ մըն էր, որ... որ...

Բայց այս մէկը գոնէ չէր ծիծաղէր. թերեւս աւելի բարեկիրթ էր կամ թերեւս տեւական հսկողութեան տակ զանուոյ քաղաքային կայանաւորի իր Հանգամանքը թո՛յլ չէր տար որ ծիծաղէր իր գազառ (լը մոնսիէօ իւպրը) սենեակիցին վրայ։


Եւ սակայն Հայութեան, անոր անցեալին, պատմութեան, մշակոյթին մասին տրուած բոլոր նպաստաւոր տեղեկութիւնները, նոյնիսկ անոր արիւակամ ժողովուրդ մը ըլլալու փաստը կ'ընդունէր այնպիսի միապաղաղ անտարբերութեամբ մը, որ շատ կը մօտենար արհամարհանքի սահմաններուն։

Ու նախկին Հայ պատանին անգամ մը եւս անդրադարձաւ, որ մշակոյթի եւ նման բաներ անգոր են ջնջելու իր ցեղին ճակտին դրոշմուած նահատակի խարանդ։



1964-ի ամառը նախկին Հայ պատանին, այժմ արդէն իր աշունքին մէջ, կը գտնուէր Ժընևե, արձակուրդով, իր Հարադատներուն մօտ։

Օր մը մուտքի գանդը Հնչեց ու կարճ միջ երեսներով յիշունոց մարդ մը յայտարարեցաւ դրան սեմին։



— «Կեղբոնական ջերմութեան կադ- մածները ստուգելու կու գամ»՝ ըսաւ:

Մարդը ժամերով աշխատեցաւ, քա- կելով ու վերատեղաւորելով ծանր խը- տարանները, միշտ փպտուն ու գոհու- նակ, հեւայով ամէն փոքր դադարի, մինչ տան նոր քայլի սկսած փոքրիկը, իր երկու դիրուկ սրունքներուն վրայ հաղիւ իր հաւասարակշռութիւնը պահե- լով, կը հետեւէր անոր աշխատանքին ու տեղափոխութիւններուն, հակառակ որ- նեցիկներուն զգուշութեան խրատներուն, զորք անշուշտ չէր հասկնար...

Վերջապէս, մէկ կողմածէն միւսին անցնելու պահուն, մարդը, շատ քաղա- քավարութեամբ.

— Կը ներէջ, ի՞նչ լիզու կը խօսիք փոքրիկին հետ».

— «Հայերէն. մենք Հայ ենք»:

— «Ա՛հ... ըսաւ պատուական մար- դը, անկեղծօրէն ցաւակից արտայայտու- թիւն մը բնդունելով, զհետեւ, որ ահա- ուր բաներ պատահած են ձեր ժողովուր- դին հետ»:

Վա՛յ յան որդի, այս մէկին ալ զի- տէր ուրեմն:

Նախկին հայ պատանին պղտիկ նա- իրնըրիք մը պատրաստել տուաւ աղնի. Զուիցերիացիին համար: Անցաւ դիմա- ցը, խօսանոցին մէջ, սեղանին միւս կող- մը եւ սկսաւ իր շան քարոզին:

Պատմեց Հայութեան անցեալէն՝ Աք- տաչէս աշխարհակալի զարևը խաւարե- ցընող՝ նետաձիգներէն, մեծն Տիգրա- նէն, որ մինչեւ Պաղեստին ընդարձակեց հայկական կայսրութեան սահմանները. Հեթում թագաւորէն, որ թաթարներու հետ դաշնակցած մինչեւ Դամասկոս արը- շուեց... ու, ուսումով մը զէպի ներկայ ժամանակները, իրարու հետեւ շարեց աշ- խարհահռչակ աստղաբաշխ Համբար- ձումեանը, մեծ երաժիշտ Պաշտուրեան- նը, համբաւաւոր քաղաքագագէտ Մի- կոյանը, որ այդ օրերուն Սորհրդային Միութեան նախագահութեան կոչուած էր:

Պահ մը վախցաւ ան, որ իր խոսա-

կիցը հարց տայ յանկարծ թէ «Ձեր զօ- րավարները իրարո՞ւ կէ՞մ կը կռուին ու- րեմն», բայց հէգ պատուական Հելվոլդը, արդէն պէտքայար, այնքան շժած էր, որ հեռուոր կանկածն իսկ չունեցաւ, թէ օյիմ մը կը խաղցուէր իր դիտուն:

Ձի դիտոր նախկին հայ պատանին, թէ յաջողեցա՞ւ համոզել կիցո՞մ Թեյի եւ զօրավար Տիգրուրի համետ այս ճեւղը, թէ հայ ժողովուրդը միայն տանջուած, հալածուած, ջարդուած ժողովուրդ մը չէր, այլ ունեցած էր եւ ունէր այլ ար- ժանիքներ, այլ առաքինութիւններ:

Բայց ի՞նչ օգուտ, մէկ հողի մըն էր եւ սոսկական անհատ մը իր պատահա- կան խօսակիցն ու նոր բարեկամը: Մինչ- դեռ, անդին, Թրնեի՞ թէ Ծրանայի մեր Պեյօք Դաւիթները զգուշեցի զաղա- փարը ունեցած՝ էին Փրանսիայի տեա- րակով մը՝ Լը տէօյ մասիոնալ արմէ- միլեմ, — որուն ով զիտէ քանի՞ հազարե- րորդ օրինակին վիճակուած էր ինչպէս այս պարզ, բարի մարդուն նամակատու- փին մէջ, — տանիքներու վրայէն պոսա- լու մեր մօտաւոր անցեալին պատմու- թիւնը:

\*\*\*

Նրկու հայ երիտասարդներ — մին՝ բժիշկ, միւսը՝ ՄԱԿ-ի պաշտօնեայ, ի Զուիցերիա, որոնք, կարծեմ, բաժին ու- նիկին Լը տէօյ մասիոնալ արմէմիլեմ-ի խմբադրութեան մէջ եւ որոնց դիտել կու տայի Հայկական Դատ հետապնդե- լու համար որդեգրած եղանակին ձա- խաւերութիւնը:

— «Հապա ի՞նչ ընենք, ձեռքերնիս ծալած նստի՞նք», աղաղակեցին:

Ո՛չ պատուական աղաք, ո՛չ. մեր ձեռքերը ծալած չնստինք, բայց գոնէ շահակցենք աշխարհին, թէ իրենց ձեռ- քերը ծալած նստան մեր հայրերը (յար- դանք ու պաշտամունք՝ մէկ ձեռքի մատ- ներուն վրայ համբուող սիրայի բացա- ռութիւններուն) երբ թշնամին իր արեւ- նոտ սուրբ բարձրացուցիւ էր իրենց վը- րայ, մեր վրայ:

Որովհետև, եթէ ունինք բան մը օտարներուն աչքը խօթելիք իրեն ազնււած թուղթ (թիթրլ տը Յօւլլէս) ատիկա այդ սիրալի բացառութիւններն են միայն:

•

Կիպրոսի արտաքին գործոց պարոն նախարարը ՄԱԿ-ի ընդհանուր ժողովին մէջ, Հերքելու համար իր թուրք պաշտօնակցին Կիպրոսի յոյներուն դէմ արձակած ցեղասպանութեան ամբաստանութիւնը, ոգեկոչեր է 1915-ի մեր «մէկ ու կէս միլիոն» զոհերը, եւայլն:

Այլ խօսքով՝ պարոն Գիրրիանու մեր մեռելներուն կմախացած ձեռքերը օգտագործեր է կրակէն շագանակ քաշելու համար ի նպատակ իրեններուն» պիտի մտածէի, եթէ կիպրացի տետական մարդը յայտարարած չլլար, թէ բազում վարանումներէ ետք ու ճարահատ՝ կը դիմէ այդ միջոցին, ըմբերանելու համար իր հակառակորդը:

Բայց եւ ո՛հ՝ շնորհակալութեան, երախտագիտութեան հեռագիրներու տարաբի մը, որ կը թափի պարոն նախարարին վրայ, պաշտօնական, անպաշտօն, մեծ, միջակ թէ փոքր շարք մը հայ ամէն զոյնի կազմակերպութիւններուն կողմէ:

Այս ինչ հիւանդագին համեմատութիւններ ստացած է՝ մեր խեղճութիւնը, մեր ջարդուած ժողովուրդ մը կզած բլլալը արար աշխարհին, Ափրիկէի եօթանասներկու նորագատ ազգերուն այ այժմ, շեփորելու անըմբռնելի սւնակութիւնը:

•

Անգլիական զինուորական գրասենեակ մը, Միջին Արեւելի մէջ, Անգլիացի սպան զիբք մը ունի ձեռքին, զոր ցոյց կու տայ տարիներու իր հայ պաշտօնակցին, նայուածքը սեւեռած տնոր աչքերուն: Ու հարցումը.

- Իբր՞ է...

Ուշագրութիւն, իմ հայ եղբայր, ջան եղբայր, մի՛ պատասխաներ անմի-

ջապէս. նախ լա՛ւ նայէ օտար քարեկամիդ աչքերուն. ափսո՛ս, չհասկցա՛ր ու անապարհցիք պարզամտօրէն պատասխանել:

- ... Այո՛... դժբախտաբար...

Դժբախտաբար չհասկցա՛ր, որովհետև շնայեցար աչքերուն: Անպիտակացի ուղեց փափկանկատ ըլլալ եւ հարցր չգրաւ այնպէս ինչպէս ան կը ներկայանար իր մտքին:

Ի՞նչ կարծեցիր, թէ ան ըսել կ'ուզէ - «միբաւ, թուրքերը ըրի՞ն այս ամէնը», մինչ ան, անոր նայուածքը, կ'ըսէր - «միբաւ մեր հայրերը, դուք թողուցի՞ք, որ թուրքը ձեզի ընէ այս ամէնը...»

Գիրքը.- «Հոգիներու վաճառքը», անգլերէն...

•

Ասկէ քանի մը տասնակ տարիներ տառջ, ամերիկացի պատուելի մը, որ շրաւերուած էր մեր եկեղեցիին մէջ մեղի հետ աղօթելու մեր նահատակաց հոգիներուն համար (արեւին տակ նորութիւն չկայ) մեղմութեամբ, բողոքական պատուելի շեշտով, հատիկ հատիկ արտասանուած հետեւեալ բառերով սկսաւ իր քարոզը.

- «Մենք չի՛նք մեղադրեր ձեզ, որ մեռաք Յիսուսի համար...»

- Ինչո՞ւ սուտ կը խօսիս, պատուելի՛:

•

Մինչև քանի մը տարի տառջ սովորութիւն էր պաշտօնապէս դիմել ուր որ անկ է, որպէս զի մեր քաղաքին օտար վարժարաններ յաճախող հայ աշակերտները արձակուրդ տանային վարպանացի օրը (Քամմեթրասիսի տը լա կէր արմեթի-քերասի տը 451) թէ եկեղեցական արարողութեան, թէ՛ զանազան սրահներու մէջ տեղի ունենալիք այլ հանդիսութեանց մտանակցիլ կարենալու համար:

Նման առիթով մը՝

- «է՛հ, յաղթեցի՞ք», կը հարցնէ ամերիկացի վարժուհին՝ քծիծաղ՝ վե-

բի իմաստով նամակը իրեն ներկայացնող հայ աշակերտուհիին:

— Ճիշտացանք, կը պատասխանէ արթնածիտ հայ աղջիկը:

Ի՞նչ պատասխան կու տան արվեստը նման հարցումի մը Պէյրուսթի օտար վարժարան յաճախող հայ աշակերտները, երբ արձակուրդ կը խնդրեն Ապրիլ 24-ի առիթով...



Ամէն հայ պատանի, որ առաջին անգամ կը հանդիպի առձեռն կառուս Փլորանտինի բառարանին, հոն կը փնտռէ անպայման այն 3-4 բառերը որոնք կը վերաբերին իր ժողովուրդին. Մոլոսէս Խորենացի, Մհոն Տիգրան, Հայաստան:

Աչքիս առջև ունիմ այդ բառարանին 1946-ի հրատարակութիւնը: Ահա՛, բառացի, ինչ որ կ'ըսուի հոն «Հայաստան» բառին գիմաց — «Լեռնային երկիր Արոյ՝ կովկասի հարաւակողմը եւ Եփրատի եւ Տիգրիսի ակերտն, երկար ժամանակ անկախ թագաւորութիւն, ետքն բանուած թուրքիոյ, փուսիոյ եւ Պարսկաստանի մէջը: Անկախ՝ 1918-էն 1921: Այս փրոստին ինկած՝ հոս՝ թուրքերու տիրապետութեան, հոն՝ ռուսերու պերիշանութեան տակ, շուրջ երեք միլիոն ընտանիքներ (Հայեր): ռուսական մասը խորհրդային հանրապետութիւն մըն է, Խորհրդային Միութեան անդամ պետութիւն (1936): մայրաքաղաք՝ Երեւան. թրքական մասին մայրաքաղաքն է Կարին: Փոքր Հայաստան կը կոչուի այն թագաւորութիւնը, զոր կիլիկիա գաղթած հայերը հիմնեցին Խալկիդոնքոս շրջանին»:

Արդ, վերջերս տեսայ նոյն բառարանին նոր, գեղարուեստական հրատարակութիւնը, ուր նոյն «Հայաստան» բառին գիմաց տրուած ծանօթութեանց մէջ աչքը բացին մէկը թիմել տուեր է նաեւ, իրբեւ փառքի տիտղոս անասուկոյս, ջարդերու պատմութիւնը:

Որչափ գիտեմ, 1946-էն առջին ջարդեր տեղի չունեցան: Ո՛վ կրնայ ըլլալ

այդ աչքը բացը եթէ ոչ Հայութեան թշնամի... Հայ մը: Մեր այս ընթացքով պիտի չզարձ օր մը, ուր Հայութեան եւ Հայաստան բառերը դադրին յատուկ անուն ըլլալէ ու դառնան կոտորածի համանիշ հասարակ անուններ:



Երբ մեր մտայլ անցեալին անլուր պատկերներէն որեւէ մէկուն վերջերսն տնդամ գիտ խելագարութեան դռները կը հասցնէ, չեմ հասկնար, պիտի չհակնամ երբեք, թէ ինչպէ՛ս կը գտնուին մարդիկ, հայ մարդիկ, որ կրնան ժամերով խօսիլ բեմերէն այդ մասին, գրել այդ մասին, պալիստին, որ գրուի այդ մասին...

Իսկ անոնք, որ տարիներով գրեցին, պահանջեցին որ գրուի մեր գողգոթային պատմութիւնը (կը խնայեմ իրենց անունները, այս աշխարհէն չեն այլեւս անոնք) ինչ չէին արհաւիրքի օրերուն: Անոնք Պոլսոյ ձեղնայարկերուն թէպէտ արհաւիրքեան մէջ երիտասարդ տանտիրուհիին հետ հովուերգութիւն մը ապրելու կամ երազելու վրայ էին... մինչ գրեթէ ամբողջ արեւմտաստանութիւնը իր խաչի ճանապարհը կը քայլէր:

Իսկ անոնք, որ այսօր նոյն պահանջը կը յամտին կրկնել (եւ անոնց մէջ համալսարանական փրոֆեսէօրներ ալ կան) չեմ գիտեր, թէ զոյրութիւն ունէին 1915-ին, թէ մանուկներ էին արտասահմանի խաղաղ մէկ անկեան մէջ աճող, բայց ինչ որ վստահաբար գիտեմ, այն է, թէ անոնք զոչ գիտեն զինչ պարծեն...



Մզաւանջային թուանշան մը կոչ մեր ժամանակակից պատմութեան մէջ վից զերօններով վերջացող թուանշան մը... Ատուտա՛մ իմ, ի՞նչ սրտով, ի՞նչ անպիտանութեամբ կ'արձակենք այդ թուանշանը բեմերէն, թերթերէն, օրն իրուն, տեղի անտեղի, մանաւանդ տարին անդամ մը անպայման...

Կարծես առեւտրական բարդուած անանուն ընկերութեան մը գրամաղտութիւն ըլլար այդ անանուն թուանշանը. զրամաղտութիւն՝ վճարուած, ամբողջովին վճարուած...

Մէկ միջոց... ո՞վ աւելի կ'ըսէ...  
Կ'ըսէ, ինչպէ՛ս թէ չ'ըսեր, կոն, որ առաւանձնաբար 500000 մըն ալ կ'ուելցնեն վրան: Յիսնամեակի «Հանդիսութեան» առիթով, արդէն կրկնապատկուած է ան... որքան շատ՝ այնքան լաւ...

Չեմ հասկնար եւ պիտի երբք չհասկնամ դարձեալ, թէ ինչպէ՛ս կարելի է հայ ըլլալ եւ այդպէս թիթեօրէն արտասանել այդ թուանշանը իր այդ զանազական իմաստով եւ չլալարուի՛լ, չխնդրուի՛լ անոր կէս երկվեցեակ հրօշկ օղակներուն անդորմ ճմլումին սակ:



- Ինչո՞ւ, կ'ըսեմ, եղբայր, այս սրտածմբիկ պատկերները տարին անգամ մը անպայման կը տաքցնէք, կը տաքցնէք ու կը հրամայէք սա անմեղ երախաներուն: Մենք՝ մեռելներս՝ թողեցինք մեր մեռելները կամ թողուցինք անթաղ... Ի՛նչ է մեղքը սա մատաղ սերունդին, սա մատաղ սերունդներուն:

Պատասխանը՝ զոց սորվուած, քիչ չէ պատասխանը պատրաստ է.

- Բայց, վրէժի զգացումը վառ պահելու համար...

- Ա՛յ միամիտ եղբայրներ, ինչի՞ կը ծառայէ չյապեցած, յապեալ չկրցող, դուցէ երբե՛ք չյապենալիք վրէժի զգացումը, եթէ ոչ սւծացման, ուրացման, ստորակայութեան բարդոյթի, ինքնաթուաւորման, յուսահատութեան...

Ինչո՞ւ կը զայթակղինք երբ Թրուսյա մը կ'ուրանայ իր հայութիւնը: Գառու մը, Քիլիկի մը եւ շարք մը ուրիշ երկրորդական Գ.եր կը թաքցնեն իրենց ծագումը: Նրբ նոյն իսկ խէչք եէ-եէ «երդուհի» մը կը մերժէ պատիւ բերել իր պատկանած ժողովուրդին», կամ լոտոննարնակ հայ մեծահարուստ մը

կարօտովը կը մաշի կարմիր գրօլակին, որ սովեստականը չէ...



Մ'արդ մը կը փնտռուի. սրտի, ճաշակի, մանաւանդ խելքի տէր մարդ մը, ողջամբ'տ մարդ մը, աղետակա՛ն մարդ մը, որ վաճառէ իր ունեցած-չունեցածը՝ արժեթուղթ, կալուած թէ ափրիկեան աղանակի եւ իր ամբողջ կարողութիւնը յաւկացնէ մէկ ու միակ նպատակի մը - հաւաքել հրապարակէն, մասնաւորներէն, դրամաճաններէն, մատենադարաններէն, բոլոր երկիրներու մատենադարաններէն, բոլոր լեզուներով գրուած բոլոր եղեռնապատմանները եւ այրէ՛ր, զանոնք, այրէ՛ր, այրէ՛ր մինչեւ վերջին թերթին վերջին լուսանցքը:

Թերեւս այդ մատենաներուն մոխրակայտէն իրբու Փիւնիկ վերածնի՛ր որ մը հայուն արժանապատուութեան զպայտմը:

Թերեւս այդպիսով զէ՛թ առժամաբար, գէթ յաչս օտարաց, ջնջուի հայութեան ճակատէն տանջուած, հալածուած, նախառուած, սպաննուած ըլլալու նախատինքը:

Մինչեւ որ, որ մը, օրերուն օրը՝ պիտի ըսէր բանաստեղծը, յայտնուին, արձակուի՛ն վերջապէս այդ նախատինքը իրապէ՛ս ջնջուլու ատակ վրէժառու բազուկները հայկականերուն...:



Սմէն ազգ ունի (եթէ չունի, կը ստեղծէ) իր անկախութեան տօնը, յաղթանակի տօնը:

Եւ որովհետեւ մեր ժողովուրդը չունի սեփական յաղթանակի տօն մը, վերջերս, բարձրաստիճան անձնաւորութիւն մը յայտարարեք է եղեր, թէ Վեպրի՛նը պարտութիւն մը չէ, այլ՝ յաղթանակ, զլիսագիր...

Առաջին անգամը չէ, որ կը լսենք առանկ սովեստութիւններ, բայց այդքան բարձրէն առաջին անգամ է, որ կը հնչէ իմաստութեա՛ն այդ ձայնը:



Մասամբ իրաւունք ունի բարձրաստիճան անձնաւորութիւնը. «Ապրիլ»ը պարտութիւն մը չէ. պարտութիւնը կոխկէնթաղըէ... Ա՛յ, «Ապրիլ»ը բան մըն է, որ անուն չունի...

Բայց, իրա՛ւ, չունի՛նք ուրախութեան տօն մը: Ունէ՛ինք «Մայիս»ը, զոր լիբրճեցինք, փոքրացուցի՛նք մեր փոքրութիւններով. մինչեւ անգամ «թուրքին նուէրը» յորջորջեցինք (ի դէպ, որս՞ւն նուէրն է «Ապրիլ»ը, որուն միայն հաւատարիմ կը մնանք մինչեւ այսօր): «Նոյն մեք՞րքը, չ'ըլլա՛ր. ան ալ «Ռուսին նուէրն է» պիտի բուռի...

Բայց, մերժապէս, եթէ սպոյ կնք, իրաւունք ունինք համազօյլին տօնի մը, որ սկստօն մը չ'ըլլայ:

Եթէ Ձերա՛ւը շատ է չին, կայ Ղարաքիլիսէն, կայ Բաշ-Ապարօնը, կայ Սորդարապատը:

Կայ Արարան: Կան հերոսական Շապարին Գարահիսարը, Եղեւիան, Մուսա լիսը, Վասպուրականը:

Կամ մեր ի՛նչը կ'ըլլան օրացոյցին երկու հարիւր յիսուն ճգնաւորներն ու

մարտիրոսները, սուրբ Սարգիսն ալ իրենց հետ:

Ինչո՛ւ ոչ՝ մերէն, շատ վերէն հաստատուած համազօյլին-համահեղեղեցական տօն մը՝

Սրբայն Անդրանկյայ Զօրավարին

կամ

Սրբոց արի արանց Սողոմոնի, Արամայ, ... , ...

Ձե՛զ եմ ասում, Հայաստանի Հանրապետութեան իշխանաւորներ, ձե՛զ՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ մե՛ծ իշխաններ, տօն մը պէտք է այս ժողովուրդին, իրական տօն մը, ուրախութեան տօն մը, պատուութեան տօն մը, յաղթանակի տօն մը, կարճ՝ օ՛ր մը տարուան մէջ, որ ան՝ Հայը, սահմանին այս թէ այն կողմը, ովկիանոսներու արեւմտեան թէ արեւելեան ափերուն, կարենայ զլուսը բարձր պահել եւ ուղիղ նայիլ մարդոց աչքերուն:

ՍԱՐԳԻՍ ՍԱՀԱԿԵԱՆ

Գանիթ, Փետր. 1965

ՎԵՐՁԱԼՈՑՍԻ ՑՈՂԵՐ

### Վ Ն Ք Ն Ա Շ Ի Տ Ո Ր Մ

Տարակոյսին փուշը, որ հագիլիս մէջ կը ծըլի,  
Ու անդաստանն երագիւ տակաւ կ'ընէ անապատ,  
Ձէ այնքան սա՛րք ու մաշոզ, ուզէ՛ այնքան վշտալի,  
Որքան՝ ձեր յայսը դժխեմ, կեղծ մարգարիտ ու ակաս:

Լա՛ւ է կեանայ պակուցիչ վիհին եգերքը մըքիւն,  
Յուզարկաւորը ըլլալ հպարտութեանդ ու եսիդ,  
Շօշափելի ցարտ մարմինը ամենագոյ ոչնչին  
Եւ տա՛նն դառնայ աներագ, սիրագուրկ եւ անծըպիտ:

Ջգալ ազա՛տ ինքզինքը շրջանակէն մոզակամ,  
Ուր բանտած է կեանքն քեզ, բաղձանքներու շղթայով,  
Հանձնքին մեղքը չըմպել եւ ոչ ալ դիրտը՝ մահուան,  
Խաղաղ ու հեշտ քայլերով դիմել վախճանն աղաւթով:

Երբ-ալ լոյսին անճրագ, գեղեցկութեան, բարութեան,  
Ունմահութի՛նը գրկել անվարան ու անվրդով,  
Նիրվանային դրան առջեւ ժպտի՛լ, ըլլա՛լ անճնապան...

ԱՐՄԷՆ ՍԵԻԱՆ

**Յ. ԿԱՐԱՊԵՆՏ**

**ՎԵՐՋԵՐՍ Ո՛Վ Է ԳՆԱՑԵԼ ՀԱԼԻՓԱՔՍ**

- Ինչո՞ւ չես դնում Հայաստան:

- Ես վանդակում ապրել չեմ կարող:

- Սակայն միասին կը լինէ՞ք եւ յետոյ...

- Ես այդ կարգերը հանդուրժել չեմ կարող:

- Բայց դու ի՞նչ գործ ունես կարգերի հետ: Քեզ անհրաժեշտ է ժողովուրդը եւ սէր: Դու արուեստագետ մարդ ես: Դու կարող ես թո՛ւ նպատար տալ հայ ժողովրդին, հայկական արուեստին... է՛յ ի՞նչ ասեմ, բարեկամ...

- Ես Հայաստանում հոգեւին կը մեռնեմ, հասկանո՞ւմ ես...

- Սակայն դու հոգեւին մեռնում ես եւ արտասահմանում: Դու խօսում էիր յոգնութեան մասին, ասա խնդրեմ, միևնույն ե՞րբ պիտի Հալիֆաքսից նիւ Եորթ, նիւ Եորթից Լոս Անջելիս եւ Մոնրէալ թափառես... Դու գիտե՞ս, Արմէն, որ քեզ պէս հազարաւոր մենակատարներ կան Ամերիկայում, մինչդեռ Հայաստանում թո՛ւ ներկայութիւնը այսպէս ասած ակնբախ կը լինի...

- Քեզ ասացի, որ ես բռնութեան հանդուրժել չեմ կարող...

- Դու ջութակահար ես Արմէն, ի՞նչ բռնութիւն կարող է լինել քո նկատմամբ: Ի վերջոյ դու գործ պիտի ունենաս ժողովրդի հետ եւ նուազես ժողովրդի համար...

- Դու չես հասկանում:

- Ձեմ հասկանում ի՞նչ...

- Մենք տարբեր աշխարհների գաւաակներ ենք:

- Է՛հ, բոլոր Հայերս տարբեր աշխարհների գաւաակներ ենք, բայց դա չի նշանակում որ պիտի դադարենք մեր ընդհանրական ձորը ճանաչելուց...

- Բայց եթէ մայրը չի ուզում ճանաչել իր որդուն - դառնացած վրայ տուեց Արմէնը:

- Արմէն - ասացի նոյնքան յուզուած - դու շփոթում ես հայրենիք ու վարչակարգ: Ես խօսում եմ յաւերժական ժողովուրդի մասին, որի գրկում ապրելու կարիքն ունես: Ախոս է տաղանդ: Հայաստանում դու կը վերածնունես, կը հախրես թո՛ւ արուեստի հարողառ երկնակամարում...

- Դու ի՞նչ ես, առեւտրական թէ քարոզիչ - աւելի տաքացած ընդմիջեց ինձ Արմէնը:

- Ես քեզ խօսում եմ որպէս հայի, որպէս եղբոր: Քեզ պէս տաղանդաւոր շատ Հայերի եմ հանդիպել, որոնք այլ ժողովուրդների ժխորում դեղերումից դեղերում են քայլում: Յետոյ այսօրուայ Հայաստանի պայմանները տարբեր են...

Արմէնի բռունցքը մուրճի պէս իջաւ սեղանին: Յնցումից թափեց իմ բաժակի կոնեակը: Նրա աչքերից շանթեր էին թայթջում:

- Ինձ թւում է, թէ դուք անկեղծ չէք - ասաց նա յոգնակիթ անցնելով:

- Քեզ չեմ հասկանում, Արմէն: Ինչո՞ւ...

- Դուք կեղծում էք: Ձեզ պէս չափաբեկն եմ հանդիպել: Բոլորդ էլ կեղծաւորներ էք...

- Արմէն, ես ի՞նչ...

- Բոլորդ էլ նոյնն էք: Ամերիկայում նստած Հարստութիւն էք դիպում եւ չարունակ Հայաստանի գովքը հիւսում: Եթէ այդքան ուժեղ է Հայրենասիրութիւնը ձեզ մօտ, հապա ինչո՞ւ առաջին Հերթին ինքներդ Հայաստան չէք գնում: Ինչո՞ւ օրինակ չէք ծառայում այլոց: Եթէ ձեր արածը կեղծաւորութիւն չէ, հապա ի՞նչ է...

Նորից ձեռքով դարկեց սեղանին եւ բարձրաձայն՝ կոննակի մի այլ շիշ պատուիրեց: Այլապէս էր Արմէնի դէմքը: Երբ նա Հայնոցը կրկին կոպտին դարձրեց, ինձ թուաց թէ նա մտովին մերկացրեց անծանօթ այդ կնոջը:

Ես լսել էի արուեստագէտների դիւրարորտք բնասորութեան մասին, սակայն երբեք չէի պատկերացրել, թէ ներքինց մօտ արամադրութիւնները կարող են այդքան արագ մակընթացութեան ստեղծարարութեան ենթարկուել: Բանը նրանում էր, որ այդ վերիվայրումների մէջ զգալի էր Արմէնի անկեղծութիւնը: Նա աւելի հմայել էր դառնում հէնց այդ պոսթիկումների պահին:

- Ես այլոց մասին խօսել չեմ կարող - սասցի Հանդարտ - սակայն ինչ ինձ է վերաբերում, ապա պիտի խոստովանեմ, որ ճիշդ է զո դիտողութիւնը: Ինչպէս քեզ սասցի, ես առեւտրա-արդիւնարեւորդ եմ: Իմ կեանքը դառնում է առեւտրական աշխարհի շուրջ: Եթէ դիտե՛նայի, որ հնարաւորութիւն կայ Հայաստանում իմ մասնագիտութեամբ զբաղուելու, ապա ուրախութեամբ այս նոյն աշխատանքը Երեւանում կ'անէի...

- Բայց...

- Թոյլ տուր շարունակեմ: Ես այս մասին շատ եմ մտածել, բայց երբեք առիթ չեմ ունեցել արտայայտուելու: Արտասահմանում, ասենք, Ամերիկայում,

Ճրանսխայում, Մերձաւոր Արեւելքում եւ այլուր, տասնեակ հազարներով Հայ մասնաշէտներ կան - բժիշկ, գիտնական, ճարտարապետ, ճարտարագէտ, արդիւնարեւոր, առեւտրական եւ էլ չգիտեմ ինչ, որոնց եթէ պատեհութիւն տայ Հայաստանի կառավարութիւնը, վստահ եղի՛ր, որ կարճ ժամանակում կարող են տեղական ժողովրդի հետ միասին վերակառուցել Հայաստանը, նոր կառուցիչներ անցկացնել, նոր բնակավայրեր շինել, նոր գործարաններ բարձրացնել եւ իրենց նպաստը բերել կեանքի գրեթէ բոլոր ասպարէզներին...

- Ուրեմն, տեսնո՞ւմ ես - կզակերի վերադարձած Արմէնը ընդհատեց խօսքը - կարգէր թոյլ չեն տալիս, որ սփիւռքահայութիւնը իր լուսագոյն ուժերը է սպաս դնի Հայաստանի զարգացմանը: Այդ դու ի՞նքդ սասցի:

- Այո, բայց զո հանգամանքը տարբեր է:

- Տարբեր: Ինչպէ՞ս:

- Այն, որ դու երաժիշտ մէկն ես: Քո արուեստը սահման ու Հասարակարգ չի ճանաչում, մինչդեռ ինձ նման արդիւնարեւորի Համար անհրաժեշտ է անհասական նախաձեռնութիւն, մի բան, որը տրամագծորէն հակասում է սովետներին որդեգրած քաղաքա-տնտեսական կառուցին:

- Այլ ի՞նչով - Հեղեօրէն շէշտեց Արմէնը - այնտեղ, ուր զո շահոյթի հարցը կայ չես ուզում հրաժարուել դրանից, սակայն միանգամայն բնակտն ես գտնում, որ ես ջուրհակ վերցնեմ ու բանտարկուեմ Երեւանում:

- Այո՛:

- Ինչո՞ւ այս մենաշնորհը:

- Նրա Համար, որ քեզ պէտք չունի Ամերիկան, մինչ Հայաստանը ունի՛: Յետոյ, Արմէն, ասա՛ տեսնեմ, Հալի-Փաբլը քեզ ի՞նչ է տուել... մինչեւ կ'ըր պիտի Մեկայի կարօտը սրտումդ թափառես քաղաքի քաղաք... զոնէ նշանածիդ մեղքացիք...

- Բաւական է - ծխակալած մէջո-

ցում Հնչեց Արմէնի դարձողին ձայնը - այստեղ կանգ առնենք:

Նա դուռնաբացի էր, պնշածակերբ լայնացել: Հեռում էր վերաւոր զազանի պէս: Բերանի ձախ անկիւնում մկանսալին կծկումները, որ մինչ այդ մերթ ընդ մերթ էին նկատուած, այլեւս անհանգիստ կըտոյժ էին ստացել: Ինձ թւում էր, որ Արմէնի ներաշխարհի ալեկոծութիւնը աւելի հուժկու էր: Քան մեր շուրջ՝ Ատլանտանի կրծքում տեղի ունեցող տարերային դուպարը: Դէ՛մքը աւելի էր երկարել՝ Մեֆիստոֆելեան մի վիթխարի ստուեր նետելով կողքի պատի վրայ: Արդէն զղում էի արածս անկեղծ արտաստուծութիւնների համար: Ի՛ր կեանքն է, ի՛ր Մեդոն: Ես ինչո՞ւ պիտի ուղղա՞ն Հեռուները գնայի: Եւ յետոյ ես ի՞նչ իրաւունք ունեմ հեռաւոր Պարսկաստանից այս ափերը եկած այս վտարանդի էակի առանց այն էլ վերաւոր սիրտը աւելի արեւնելու: Այդ Հայաստանը ո՞րտեղից բուսաւ Նոր Միովսիայի ափամերձ ջրերում: Թող Երեւանում յնուադի, Հայիթֆաբում նուազի, ի՞նձ ինչ... մի՞թէ Վաքըրթաւ եւ Որդիք՝ ընկերութիւնը ինձ նանապա է ուղարկել դարձի բերելու Արմէն Ղուկասեանին...

Ատում էի ինձ: Երանի Հայիթֆաբից օդանաւով Բոստոն մեկնած լինէի եւ երբեք Հանդիպած չլինէի այս տղային, որը եկել էր խախտելու իմ հոգեկան հաւասարակշռութիւնը: Մի՞թէ աւելի հաճելի չէր լինի «Հեմինգուէյի» Հետ դրոյցը: Ինձ Հետ միշտ այդպէս է պատահում: Որչափ աշխատում եմ մեկուսանալ Հայ կեանքից ու Հայերից, չի յաջողւում: Կարծես պարտական եմ Հայութեան որ «Եան» վերջածանցն է արուած իմ անուան: Մի՞թէ ես յանցաւոր եմ, որ Հայ եմ ծնուած: Թող Երեւանում չուազի, Հայիթֆաբում նուազի: Ի՞նձ ինչ... Յետոյ որչափ անձնասէր է այս Արմէն կոչեցեալը... Ես գիտեմ իր կեանքի դրեթէ ամբողջ պատմութիւնը, սակայն նա քաղաքավարութիւնն իսկ ջշանցու հետաքրքրուելու իմ կեանքի դրեթէ մակերեսային տուեալներով... Նրան

նոյնիսկ տարօրինակ չթուաց այն Հանգամանքը, որ ես Ամերիկայում մեծացած լինելով Հանդերձ, էր Հետ արեւելահայերէն եմ խօսում... Գո՛ւցէ եւ վերից է նայում ինձ, որպէս էլեւստական տափակ Հանգոյցների մէջ խճճուած բլթամիտի...

Տարակուսանքներս դժուր չլացան, երբ գլուխս բարձրացնելով տեսայ նրա ոտտապանքը, որը թանձր քօղի պէս նստել էր նրա Արամողեան դէմքին: Եւ յանկարծ ինձ պարզուեց, որ նա էր լեռնութեան մէջ աւելի դիտել իմ մասին քան ես, որ մինչ ես խարխափում եմ իրերի ու երեւոյթների հակադիր ուղիներում, նա ամենայն դիւրութեամբ ըզզում, թափանցում է իմ ներսը եւ շօշափում իմ անտեսանելի վէրքերը...

Մի պահ ետք նա վերագտել էր իր անգործը: Նոյնիսկ ներողամտաբար ժրջուց: Միայն մասններն էին, որ անհանգիստ դարձան էին իրար, թափառում միջոցում, փնտրում ինչ որ բան, ապա նորից կառչում միմեանց:

- Խմէ՛նք, բարեկամ - ասաց Արմէնը բաժուկը բարձրացնելով - առաջարկում եմ ծովի կենացը:

- Մովի՞...  
- Մովի, որ մայրն է կեանքի, տառապանքի ու պայքարի...

Ուղղակի ապշել էի: Թերեւս Հեզնում է ինձ: Մի՞թէ աւելի արամաբանական չէ՞ր լինի Մեդայի կենացը կամ թէ...

Երբ ըմպել էինք խմիչքը, Արմէնը գլուխը մտերմաբար մօտեցրեց ինձ եւ Հանդարտ, դրեթէ մետաղային ձայնով խօսեց:

- Ես Մեդային այնքան եմ սիրում, որ չեմ ուզում այլեւս իրեն հանդիպել:  
- Ինչո՞ւ...

- Որպէսզի անկատարութեան մէջ կատարեալ մնայ մեր սէրը:

- Քեզ չեմ հասկանում, Արմէն:  
- Այսպիսով անհասանելի է միւսը մեր սէրը, բիւրեղանում եւ ճշմարտանում:

- Բայց դա տառապանք է, անհուն խենթութիւն:

- Ինչ ի՞նչ է կեանքը - ասաց ու քաշուեց նստարանի անկիւնը եւ գլուխը ձեռքերի մէջ առաւ:

Ըմպելարանում նախկին հիւրերը դնացել եւ նորերն էին եկել: Միայն է՛ վան էր անփոփոխը: Նա ծունկերը ծալել էր քանակաւորի կուշ էր եկել լախ նաթեւ թաղաթուղում՝ գէմքին մշուշ ու ծոխ: Յանկարծ անդրադարձայ, որ ես, Արմէնը, Խվան, դիմացի նորեկ հաստափորը եւ դեռ կիսամութում շարժուող ու անշարժ ճանապարհորդները, բոլորս, մի մի կողմակներ ենք իրական ու մեր ներաշխարհի ծովերում կէտկտուած՝ միմեանցից բաժան, մենակ ու հեռաւոր: Մի անանուն թափիծ պարուբեց էութիւն: Ես որ միշտ կեանքին նայել եմ առարկայօրէն եւ առօրեայի հեղով արբընի՝ ցատկել հանդրուանից հանդըր՝ վըրուտն միշտ հասնելով մի տեղ, ոչնտեղից էլ մի այլ տեղ դնալու համար, յանկարծ ինձ այնպէս թուաց, որ այլեւս զնայիք ուրիշ տեղ չկայ: Երկար նայեցի Արմէնի խոր մտքերին եւ ուղեցի գըրկումս սեղմել այդ պանդուխտ հայրդու գլուխը, ամոքել նրա տառապանքը եւ նրա հետ բաժանել այն վիշտը, որը չգիտես ճակատադրի ինչ դառն մի խաղով փիճակուել է հին ու նոր բոլոր Արմէններին:

Գրեթէ երկու ժամ էր, որ հանդիպել էի նրան եւ արդէն նրա կեանքի ալիքը եկել ու խորտակել էր Մասաչուսեթսի կրթական ու արդիւնաբերական հաստատութիւններում կոփուած իմ գործնական նկարագիրը: Արմէնի գոյութիւնից ճառագում էր կեանքի այն ահարկու ուժը, որը խոյան կան թափով փշրում էր տրամաբանութեան ու աւանդականի ամբարտակները եւ ստեղծում իր ուրոյն հունը: Նախանձեցի նրան, նրա ջնքուշ ու միտածածնակ առնական գեղեցկութիւնը: Նախանձեցի նրա տառապանքը եւ անկատար սէրը, նրա արուեստը եւ Էվայի նետած նրա ծանր ու մերկացնող հայեացքը: Լցրեցի բաժակս եւ մտքումս ծովին օւղձերով խօսքս դատարկեցի մեղրագոյն պարունակութիւնը: Անհուն բաղձանք զգացի ստեղծագործելու եւ որովհետեւ մտաւոր պաշարս առեւտրական պայմանագրերի իրական յօդուածներից այն կողմը չէր անցնում, ուստի ճարտաստուած կառչեցի Միացեալ Նահանգների Անկախութեան Հրովարտակին, որի պարբերութիւնները հրաշալի սիթիում գլուղում էին մտքումս, միջոցում եւ Ուոթթերթաունի մէջ տարրական դպրոցի սպիտակ դասարանում:

Երեբայով եւ բարձրաձայն արտասանեցի:—

...Մենք բացայայտ ճշմարտութիւններ ենք նկատում այն փաստը որ բոլոր Մարդիկ համահասարակ են ստեղծուած, որ Յրանք իրենց Արարչի կազմից օժտուած են որոշ անբաժանելի իրաւունքներով, որոնցից են Կեանքի, Ազատութեան եւ Երջանկութեան Հետապնդման իրաւունքները, որ այս իրաւունքները ապահովելու համար Կառավարութիւններ են հաստատուում Մարդկանց միջեւ - կառավարութիւններ, որոնք իրենց արդար Լիազորութիւնները ստանում են Կառավարութիւնների Համաձայնութեամբ, եւ որ որեւէ ժամանակ երբ որեւէ Ձեռի Կառավարութիւն խորտակելու լինի այս նպատակները, ապա Ժողովուրդի իրաւունքն է փոխելու այդ կառավարութիւնը կամ քննչացնելու այն եւ փոխարէն հաստատելու մի նոր Կառավարութիւն, որը իր Հիմքը դնի այնպիսի Սկզբունքների վրայ եւ իր Լիազորութիւնները այնպիսի Ձեռով կարգաւորի, որպէսզի Ժողովուրդը վայելի առաւելագոյն Ապահովութիւնն ու Երջանկութիւնը...

Չգիտեմ ինչու ինձ յատակի վրայ դուստի, Գլխիս վերեւ ծափահարութիւններ: Չորս ձեռքեր ինձ բարձրացրին ու նստեցրին աթոռիս: Անծանօթ ժարդիկ էին, որոնցից մէկն սոսց, որ թէեւ ազաւաղեցի Հրովարտակի պարեմութիւնը, սակայն իմաստը կարողացայ տալ ներշնչումով ու հեռորակուն անզուգուկուն վարպետութեամբ: Անմիջապէս կըրտահանէր, որ անծանօթ բարեկամս էլ ինձ պէտ լողում է Ութըրթաունի մեր տարրական դպրոցի սպիտակ դասարանում եւ սեղմեցի նրա ձեռքը: Իմ անակնկալ եւ լոյճից քիչ անց, ըմպելարանի աշխոյժ մթնոլորտը վերազարձաւ քնականոնին: Կողմուէցին կղզեակներ: Կրկին լռութիւն իջաւ հոգիների վրայ: Միայն ծոփն էր, որ բերումը թելերով հարուածում էր նաւի կողքերը: Գիտէի, որ դրսում խաւար է ու փոթորիկ եւ երջանիկ էի որ ինձ հետ էին Արմէնն ու կոնեակի չիչը:

- Բանաստեղծի հոգի ես ունեցել եւ ինձ ունիչ չես ասել - խօսեց Արմէնը՝ թեւով կամըղկով մեր միջեւ տարածութիւնը եւ ձեռքը ուսիս դնելով:

- Ի՞նչ է, կարծում ես առեւտրականներս զո՞ւրկ ենք հոգուց - պատասխանեցի:

- Ոչ, այդ չէ: Ինձ հիացմունք պատճառեց զո՞ւ ներշնչումը:

- Որի աղբիւրը Փրանսիական սայ չէն է:

- Գուցէ եւ ծովը, փոթորիկը եւ ո՞վ դիտէ...

- Գուցէ եւ դու եւ քեզ հետ Մեդան ու Հայաստանը:

- Մեդան...

Արմէնի հայեացքը մինչեւ հոգուս խորքերը թափանցեց:

- Խմենք Մեդանի կենացը - առաջարկեցի ես:

- Խմենք Մեդանի կենացը - համաձայնուեց Արմէնը:

Հանդիսաւոր կերպով միմեանց դարկեցինք մեր բաժակները եւ այն է պատրաստում էինք ըմպել նեկտարը, երբ չգիտեմ ինչու դաւաթը վար դրի եւ ասացի:

- Վերջերս ո՞վ է դնացել Հայիֆաքս:

- Վերջերս ով է դնացել Հայիֆաքս

- տարակուսանքով ինձ նայեց Արմէնը:

- Այո՛, Հայիֆաքս:

- Ես ի՞նչ իմանամ: Տարօրինակ հարց ես տալիս, Բոյաճեան:

- Դու եւ դնացել Հայիֆաքս:

- Ի, շատ լաւ, ես եղել եմ Հայիֆաքսում, յետոյ ի՞նչ...

- Այն որ Հայիֆաքսի փոխարէն Երեւանի պիտի դնայի:

- Նորից անցար Երեւանին: Մի՞թէ Երեւանը արուեստի Մեկկան է...

- Այո՛, հայ արուեստի եւ հայ արուեստագետի - կուռազան շեշտով ասելուցս:

- Ես այդ վարչակարգը ասնել չեմ կարող - կարուկ ասաց Արմէնը՝ վանդակուած վազրի պէս մոնչելով:

- Դը ելլ ուրի վարչակարգ - աւելի բորբոքուած հետապնդեցի - զու պէտք ունես հոգի՛, ժողովուրդի՛ եւ քեզ սիրող աղջկայ:

- Դը ելլ ուրի եւ - բղաւեց Արմէնը եւ ձեռքի մի արագ շարժումով հընձեց սեղանը՝ յատակից ցրելով չիչը, բաժակ, ծխախոտի տուփ, լուցկի ու ձեւնոց:

Էլէկարական հոսանքի ենթարկուածի նման դողում էին նրա մտաները: Դէմքը դարձրել էր կոյր լուսամուտից դուրս տնթափանց խաւարին եւ արձանացել: Անծանօթ դազանի առջեւ կանգնած մէկի պէս չգիտէի անելիքս: Նաւանջել: Մտանեալ, թէ սպասել դիմացինի շարժումին: Ակամայից դարձել էի Արմէնի գերին: Նրա կեանքը մերսուկ էր իմ կեանքին, նրա սէքը դարձել իմ սէքը եւ նրա տառապանքը դարձել իմ տառապանքը: Իմ ծանօթների ու գործակիցների մօտ ես միշտ անհաղորդ մէկի համբաւն եմ ունեցել: Քաղաքավարի՛ սակայն անհաղորդ: Հիմա ի՞նչ պատահեց, որ Ֆանդիի Ծոցը կտրելիս եւ այն էլ այսպիսի զեհնային մի գիչեր, ես պիտի զուրս դայի իմ յղկուած պատհանից եւ հաղորդուէի մի անծանօթ երիտասարդի ցաւով: Եւ մի՞թէ իրաւ չէ Արմէնը: Ե-

թէ այդքան նախանձախնդիր եմ հայկական արժէքների պահպանմամբ, հասպոնիչո՞ւ եմ ամերիկոսու հետ ամուսնացել, ինչո՞ւ եմ Մէյնի մի անտառում գղեակ կառուցել եւ շէրդութեամբ պաշարել ինձ: Մի գուցէ Արմէնը լող մի պատրուակ է լռեցնելու իմ ներքին ձայնը, խեղդելու խորունկ աշխարհը, որը գնալով ենթադրատակցութիւնից դառնում է ճշացող գիտակցութիւն:

Դը չէլ ուրիշ էլլիրիմզ...

Մեր սերունդի պատահարը մնաց անարձապանգ: Կղզի-ձանապարհորդները լուռ ու անտարբեր դառնում էին իրենց սեփական արբանեակների շուրջ: Տակաւին կար ծովի տնքոցը եւ սրահի աներեւոյթ անկիւններից հասող թաւշէ մեղեդին: Մի սպասաւոր գործարար փութկոտութեամբ հեկէլ մարքել էր ապակիների փշրանքները եւ նորոգել մեր շին ու ծխարտոր: Արմէնը ծխում էր, իսկ ես խմում էի: Այնք խօսում, սակայն աւելի մտերմացել էինք մերքին ամպրոպը քանդել էր պատուարները եւ հիմա մենք մնացել էինք մերկ ու անպաշտպան, ինչպէս հեղեղից յետոյ յաղեցած դաշտը: Այնքան խաղաղ էր Արմէնի դէմքը, որ կարծես մանկուսակ լոյս էր իջել վրան:

Մի պահ ինձ հայեց իր դալուկ, խօշոր աչքերով եւ գրեթէ շնջաց:

- Խնդրում եմ ինձ ներես իմ պոթկոլումների համար: Այդպէս է պատահում երբ Հայաստանի մասին եմ խօսում: Այնպիսի անանուն կարօտ ունեմ այդ երկրի նկատմամբ, որ ուղղակի այրում է Հոպիս: Այլեւս Հայաստանն ու Մեզան նոյնացել են: Երկուսին էլ սիրում եմ հաւասար կրքով ու պաշտամունքով եւ երկուսն էլ այնքան անմատչելի են ու կիկիլ ինչպէս արեւը... Երանի՛ ախտեղ ծնուած լինէի, երանի՛ ես ես լլինէի, այլ Արարատի շուրջ տակ հասակ նետած պարզ մի գեղջուկ՝ ականջալուր հայրենի հողի ձայնին եւ ականատես՝ իմ ծողովուրդի վշտին ու երջանկութեանը... սակայն ուշ է այլեւս... այնքան՝ ճանապարհների եմ քայլել, այնքան՝ կամուրջներ թողել թիկունքին, որ այլեւս

կորցրել եմ վերադարձի ճամբան... ուշ է, շատ ուշ է այլեւս...

- Արմէն - հաղիւ կարողացայ արտասանել անունը: Կոկորդա սեղմում էր:

- Ափսո՞ս, որ այլեւս շատ ուշ է...

- Տակաւին ուշ չէ, Արմէն...

- Ես՞ն ուշ է...

Պարտէզի բուրմունք զգացի: Դարձայ: Էլիս Գարդնբերին նմանող մատղաշ կիներ էր, որը մօտեցել էր մեր սեղանին:

- Ներողութիւն, դուք Պարոն Գուրզընն էք - խօսքը Արմէնին ուղղելով ասաց էլման:

- Այո՛ - պատասխանեց Արմէնը տեղից բարձրանալով եւ շնորհալի կերպով ողջունելով կնոջը:

- Իմ անունը Մէրի Ստիվընս է - ասաց կինը - Օքսֆորդայից եմ: Ձեզ լսեցի Հալիֆաքում: Ձեր հիացողներից եմ:

- Ենտրահալ եմ - ասաց Արմէնը, ապա ինձ ներկայացրեց Մէրի Ստիվընսին - իմ լաւ բարեկամն է, դրա համար էլ կուում էինք:

- Այո, ականատես էի ձեր կուսին:

- Աւելի շուտ եղբայրների միջեւ տեղի ունեցող վէճերից էր, - ասաց Արմէնը եւ ուղեց խմիչքով հիւրասիրել կընորը:

- Ո՛չ: Ենտրահալ եմ - պատասխանեց Մէրի Ստիվընսը - դուք ի՞նչ լիզուով էիք միմեանց հետ: Այնքան խորթ է ինձ եւ այնքան զեղեցիկ:

- Հայերէն - ասաց Արմէնը:

- Ես երբեք հայերէն չէի լսել: Ուրքա՛ն առնական է հնչում...

Ձկարողացայ հասկանալ, թէ արդեօք Մէրի Ստիվընսի հիացմունքի առաւելական Հայերէնն էր թէ Արմէնը: Կնոջ աչքերից ջերմ ալիքներ էին հոսում: Կենդանացած թունդակ էր նա՝ Հարաւային աւշով առլցուն: Քաղաքավարական արցելութիւն չէր: Ինչ որ պարտադրանք կար ամերիկոսու հայեացքում: Արմէնը պիտի մի արագ շարժումով մազերի խուրձը ճակատից հեռացնելով աթոռ առտղարկեց կնոջը:

- Ենտրահալ եմ - ասաց Մէրի Ստի-



- վրնուր - ես մի խնդրեք ունեմ, սակայն գիտեմ, որ պիտի մերժէք:
- Ի՞նչ խնդրեք - Հարցական նրան դարձաւ Արմէնը:
- Ձեմ համարձակում յայտնել: Գիտեմ որ պիտի մերժէք:
- Ձեզ ոչ մի բան պիտի մերժեմ:
- Խնդրում եմ ինձ համար նուազէք:
- Հիմա՞, այստե՞ղ, նաե՞ր վրայ...
- Այո՛:

Արմէնը ձեռքի ծխախոտ տրորեց մոխրամանում եւ անհոս հեռացաւ ըմպելիարանից: Նկատեցի, որ նա քայլերի տատանւում էր, սակայն այդ տատանման մէջ եւս ինչ որ շնորհալի մի կշռայթ կար՝ բարձրահասակ, բարեկերթ: Մէրի Մթիվընուր կանգնած սպասում էր: Վտտահ էի, որ պիտի չվերադառնար Արմէնը: Կինը պահանջել էր անկարելին: Մտապել էի ծովն ու փոթորիկը: Կարծես «Բլունդը» երբեք ավ պիտի չհասնէր: Նաև մէջ ստեղծուել էր մի առանձին տիեզերք, որը որեւէ առնչուեթիւն չունէր ընդհանուր տիեզերքի հետ: Թեքեւս այդ մասամբ կոնհակից էր: Թեքեւս Արմէնն էր ստեղծել այդ պատարանքը կամ մի զուգէ Օքլահոմայի այս քմալքոտ դուստրը: Արմէնը ինչո՞ւ պիտի դնար Հայֆուքս, որ Մէրի Ստիվընսի ունկնդրութեանն արժանանար: Երևանում այդպիսի բան չէին պահանջի արուեստաղէտից: Մի այլ դաւաթ դատարկեցի եւ անելի համոզուեցի, որ Հոյտատանում Արմէնը շատ երջանիկ կը լինէր եւ մի պահ պատկերացրի նրան Երևանի Օպերայի բեմի վրայ կանգնած կախարչի նման մերուած ջութակին՝ մենակ ու վիթխարի:

Ըմպելարանի մուգ ֆոնում երեւաց Արմէնի հասակը՝ ջութակի ձեռքին: Մտտեցաւ ու մարմինը աղեղի պէս ձգուեց: Գուսառ էր եւ գունատութեան մէջ էլ անելի սրուել էին իր դիմազծերը: Նրա աջ ձեռքի մատները միջոցում խելագար որոնումներ էին անում: Նա չտեսաւ Մէրի Մտիվընսին: Նա մտապել էր ինձ: Այնպէս էր կերպարանափոխուել, որ կարծես Արմէնի ուրուականն էր մեր առ-

ջեւ կանգնածը: Ըմպելարանում մի անտելի լուսնիւն էր տիրել՝ անելի տիրական դարձնելով ծովի անտելի տնջոցը: Կղզեակները մարդկայնացել էին՝ սպասումի մի աներեւոյթ օդակով շարժապուհելով իրար:

Մի պահ արձանացաւ Արմէնը եւ քաջակայ հայացքով շորս բուրբը նայեց: Ապա խօսեց հայերէն:

- Ես ձեզ պիտի նուազեմ «Կուռնկը»:

Եւ յանկարծ երկու կայայտ ալիքներ հոսեցին ջուքակի լարերից ու մտան անհունը սպա ալիքները քաղապատուեցին եւ սեւ կայայտ ու սպիտակ հնչիւնների միջից գոյացաւ արցունքի մի հայտնի շատրուամ որը ըմպելարանի մետաղէ պատերը մեղքելով քափուկ ծովի մէջ յորդեց ցամաքում ողողեց լեռնքն ու տափատոմները եւ խոյացաւ դէպի Նայիրի իր հետ տանելով քիւրաւոր հագիների անպատային կարտոն ու բեւեռային գիշերների ցարսը յետոյ ձայնալիքները տարածուեցին ու իջան աշխարհի բոլոր հայ յարկերից ներս քանդեցին Որանց ներաշխարհների ցանկապատները եւ ուռնանալով դարձան երկնաքիւր մի տամար աստուածամերձ ու աստուածակերտ միշտ իրենց բրթիւնների վրայ ունեմալով որքացած սրտերի կանյը եւ հողի տնկոցի յախտեմական արձագանգը...

Նիւ Եորքի պերճ սրահներում ես սուրբ ունեցել էի լսելու Եհուդի Մենուհին, Եաշա Հայֆեցին, Միշա Էլմանին, Հայր եւ որդի Օյստրախներին եւ համբաւաւոր այլ ջութակահարների, սակայն եւ ոչ ոք չէր կարողացել այնպիսի անզորմութեամբ քանդել իմ հոգին ինչպէս կարողացաւ Արմէնը: Նա չէր նուազում, այլ հեկեկում, արտասոււմ եւ ողբում էր: Նոյնացել էր ջութակին եւ լարերի փոխարէն իր հուրիւնից էին բխում հառաչանքի հնչիւնները:

Երբ կորաւ «Կուռնկը»-ի վերջին թըրթիւրը ոչ ոք չմտախաբեց: Ըմպելարանը վերածուել էր մատուռի: Մէրի Մտիվընսը յուշիկ քայլերով մտտեցաւ Արմէնին, զրկեց վիզը եւ համբուեց նրան: Արմէնի ճակատի վրայ քրտինքի մարգա-

բիտներ էին դոյացել: Նա մի անգամ դէմքը ինձ դարձրեց եւ էս տեսայ նրա անքերում անդրչիրիմեան մի արտայայտութիւն: Զուժակը թելի տակ, աշնպէս որ կարծես իր բեմտարգարանքի սենեակը պիտի զնար, նա հեռացաւ սրահէց: Մատուռը մնաց անվթար: Այդ տեսեց վայրկեան թէ յաւիտենականութիւն, շղիտեմ: Մէրի Ստիվընսի ճիշդ սթափեցրեց բոլորիս: Եւ յանկարծ բնազդմամբ բոլորս խուժեցինք դուրս՝ դէպի միջանցք: Տախտակամածի ահապին դուռը խելագար ճոճում էր, ներս թողնելով ծովի փրփրազէզ ջուրը:

- Մովն է ընկել - կրկին լսուեց Մէրի Ստիվընսի աղեկաուէր ճիշդ: Եւ մի անկթարթում խուճապ ստեղծուեց: Զամբորդները սկսեցին այս ու այն կողմ վազել, հրձուտել իրար, աղաղակել եւ զարնըւել տախտակամածի ցանկապատին: Լսուեց նաւի զիլ ահազանգը եւ յանկարծ լուսարձակների պաղ աչքերի տակ փայլեց յուզքստ ծովը: Մի խումբ նաւաստիներ շրջափակեցին տախտակամածը եւ փրկութեան լաստեր նետեցին ջուրը: Բարձրախօսից անընդհատ լսում էին նուտպետի հրահանգները:

- Զուժակը... Զուժակը... Աղաղակեց նաւաստիներից մէկը:

Մի պահ մարդկային ալիքը քարացաւ: Ամէն կողմից ճակատադրական բացականչութիւններ լսուեցին:

Զուժակի դեղին-չազանակաւոյն մէջքը մի վայրկեան երեւաց այրեցիկի բաշին, ապա կորաւ ծովի ընդերքում: Լուսարձակների տակ զորշ, ամենի ջրերը տրտնեան խոյանքով դարնում էին իրար, պայարում եւ վեր բարձրանալով հարուածում տախտակամածն ու մարդկանց:

Յիշեցի Ռանըլդին, որին Էրրեք շէի տեսել: Յետոյ տեսայ Արմէնին Քեհրանի մօտակայ Քարաջ աւանում, հանրակառքերի կարաւանի փոշոտ ճանապարհի վրայ կանգնած՝ անօթեւան ու աներդէք, Մեղայի կարօտից անէացած...

- Անձնասպանութիւն զործեց...
- Ո՞վ էր...
- Ասում են հարբած էր...
- Զգիտեմ...

Հեւքոտ խօսում էին նաւի ճամբորդները:

(Մար. 2 եւ վերջ)

Թ. Կ.

Դեկտ. 1965

### Ճ Ն Ո Ր Ք Ի Ն Թ Ո Ջ ՈՒ Ն Ը

Կ'երբ այնքան, երկու խնթ սիրահար,  
Լուսաշող համբաներէ ծաղկած,  
Յուսարով որ շուտով պիտի գար  
Յնդքի բաշունը բերարաց:

Կ'երբ այնքան ձեռք ձեռքի, հովին հետ  
Կը փայտէր ծիծաղը շրթներուդ .  
Ես ծարաւ էի միշտ յամբոյրէդ .  
Եւ ծարաւ ծով աչքերէդ կապոյտ:

Քայց յողմած՝ հասանք սուն գեղջուկի,  
Մուքին մէջ կ'երգէին տատարակներ,  
Սէրը հան մեզ կապեց կարծէ կուրծքի,  
Տանիքէն անձրեւ կը կաքկեր:

ԱՐՄԵՆ ԵՐԿԱԹ

### Հ Ն Ջ Ե Ա Կ

Դուստ բախեց եւ նեղացաւ . սպասեցի  
Քր անգամ մ'ալ բախէր . խորանկ լուսքին էր .  
Գիտեմ որ ան պիտի գայ օր մ'անհրաւէր,  
Նրոր կեանքի կրակէն մոխիր մնայ ինծի:

Պիտի գայ, էջն այս մտածանքն երբ աւարտի .  
Մասնան՝ տը ես հակառակիս եմ կապուցեր .  
Ճըբագիս շողն անոր ճովիկն ամէն գիշեր  
Աղօտահոս գոգցեա կաթիլ մ'է արցունքի:

Ա՛յ հիմա չեմ փակեր դուսն իմ տնակիս բռն՝  
Քր փայտի աղանետուն յըն է քափուք,  
Քրպէտգի ան այցնիէ գիս ազատօրէն,

Քր տեսնելով որ խաչածու կուրծքիս վըրայ  
Մ'անասարտու ճեղքերս արդոյն կ'ա տան իրեն,  
Մտոր շարքին՝ տուների պէս ան հեռանայ . . .

ԱՐՄԵՆ ԵՐԿԱԹ



**Կ. ՍԱՍՈՒՆԻ**

**ՍԱՐԵՐՈՒ ԱՍԼԱՆԸ**

**Գ.**

**ՀԱՐՈՒԱԾԻՆ ԴԷՄ ՀԱՐՈՒԱԾ**

Հայաստանի լեռները սգաւոր էին :  
Նեմրոսի Հեքիաթային Հերոսին երկաթեայ քայլերը այլեւս անոնց վրայէն չէին անցներ :

— Սերոր փառայի գլուխը կարեցինք, բոլորին գլուխները պիտի կրորենք եւ ցիցին անցընենք, — կ'ըսէին Մշոյ Թուրքերը շուկայի մէջ անցուղարձ ընելով :

Յնցուած էին Փետայիները :

Ձմեռ էր : Եարժումներն անկարելի :

Անմիջական վտանգէն դերձ՝ խուճերը քով քովի եկան : Սասնոյ Հին մարտիկները միացան Գէորգին եւ Անդրանիկին :

Սարերու Ասլանը փոթորկայի ներաշխարհ մը ունէր : Անցած տասը տարիներու մարտական ղէպքերը ժապաւէնի պէս կը պատկերանային իր մտքին : Արարոն իր վճռական արարքներով՝ կրկին կ'արձանանար Սարերու Ասլանի որսին մէջ :

Գէորգ իր մտածումներուն թելը քակեց .

— Տղա՛ք, Թուրքերը կատաղած են եւ անսանձ դարձած՝ Սերորի գլուխը կարելին ետք : Եթէ անոնցմէ շատերուն գլուխները վար չիջնան, մեր ժողովուրդը կը ճգմուի : Սարսու՛իը միայն կրնայ դանոնք դապել : Արարոն երբ Դաշտը կ'իջնէր, մեծ ու պղտիկ դահիճներ ծակ կը փնտռէին գլուխ պահելու համար :

— Մե՛նք ալ կտրենք գլուխները բոլոր այն Թուրքերուն ու Քիւրտերուն, որոնք կ'ելլեն մեր ղիմաց, — ըսաւ Փետայիներէն մէկը :

— Ո՛չ այդպէս, մենք յեղափոխական դարձանք ազատութեան գերագոյն նպատակին համար, ամէն մարդ սպաննելու սահմանուած ոճրագործներ չենք, — ըսաւ Սարերու Ասլանը, — բռնենք Արարոյի ճամբան, հարուածենք ոճրագործներն ու արիւնարբու բռնակալները ճիշդ տանին :

Փետայիները այսպէս իրենց գայրոյթը կը ծածկէին, փակուած ձիւնապատ լեռնաշխարհին մէջ, երբ հազար ինճարիւրի դարունը կը բացուէր :

Տեղէ տեղ շարժելու կարելիութիւն կար ու Փետայիները դուրս եկան իրենց թաքստոցներէն :

Բնակարանաբնակարան սպառնալիք կ'ոռնար ամէն տեղ: Սարսափին հետ ոճիրները անպակաս էին ու Գիւրտերը, աւելի յանդուգն դարձած՝ կոզոպուտի կ'ենթարկէին Տարօնի աշխարհը:

Պշարէ Պալիլ շատ յաճախ Մուշ քաղաք կ'իջնէր նոր պատիւներու եւ առատ ոսկիներու արժանանալու համար:

Սարսափի մթնոլորտը սակայն ամբողջովին ջլատած չէր յեղափոխական մարմիններն ու գործիչները: Անոնք, այդ նեղ օրերուն, կը գործէին դադարի եւ ճիւղ կը թափէին ժողովուրդին տրամադրութիւնները բարձր պահելու համար:

Հրայր էր ինքնաշատուկ աշխատանքներով, Վարդան վարդապետ էր դիւանագիտական յարաբերութեամբ ու Կեդրոնական կոմիտէն էր Հաւատարմիմ ընկերներով՝ կը գործէին լուսնի մէջ մեծ դրուշուրեամբ:

Ճետարական ամբողջ խումբը Սաօնոյ բարձունքներուն վրայ էր, ու անոնց մտասուեռումն էր հակահարուածը, որ պիտի չմեղմէր թշնամին:

Գէորդ ամբողջովին լուսնու էր այն խողովին, որուն ենթարկուած էր էր հօրեղբոր սպանութեամբ: Սերորի նահատակութիւնը ամէն կերպ կը Պրէրէր էր հօգիէն: Այժմ, Սերոր Աղբիւրի վրէժը լուծելու կրակն էր, որ կը բորբոքէր անոր սիրտը: Հարուածը, որ կը զգեսնէր Սերորը, ուղղուած էր բոլոր Ֆետայիներուն:

Ու ահա, այս հոգեվիճակով Գէորդ միջոց մը կ'որոնէր հակահարուածը տալու Պշարէ Պալիլին, որ յանդուստիւնը ունեցած էր այդ անհեռակայնի գաւը կազմակերպելու:

Անդրանիկի եւ Գէորդի որոնումները ի յայտ բերին այն մասնիչները, որոնք խոտաացուած դրամներէն չրացած՝ գործակցած էին Պալիլին: Մէկը Գեղաշենցի Աւէն, միւսը՝ Շէնիկի Կոտրպետը: Աւէն թունաւորուած ծխախոտը անձամբ տարած էր Սերորին:

Այս ստուգումներէն ետք, Ֆետայիներէն խումբ մը մտաւ Գեղաշեն եւ ոչնչացուց Աւէն իր ամբողջ ընտանիքով: Քանի մը շարաթ անց, Շէնիկի-ցի Ֆետայիներուն յանձնարարուեցաւ, որ մանեն Շէնիկի եւ տեղական ուժերու գործակցութեամբ մաքրեն այն արատը, որ յեղափոխական ամբողջ շրջանին երբեք տեղի ունեցած չէր անուանի այդ գիւղին մէջ: Ու յանձնարարութիւնը կատարուեցաւ:

Աւէն եւ Կոտրպետի ոչնչացումը սարսափի մասնեց թոյլ հօգիները, որոնք դրամէն չրացած կրնային դաւանանել ժողովուրդի սրբազան ուխտին եւ յեղափոխական սուրբերուն:

Գէորդը ընտիր մարտիկներու խումբ մը հետը առած՝ իջաւ Մուշ Դաշա վարոզի եւ կապարի մթերք փոխադրելու համար լեռ: Անդրանիկի էր շուրջ համախմբեց մնացած Ֆետայիները եւ ձեռնարկեց նորագէլ կոտորած գէները:

Գէորդի անցքը փոթորկալի ղէպերու տեղի տուաւ Յրօնքի, Բերդապի եւ Մոմասարի շրջաններուն մէջ: Այս փոքրիկ կոխներուն ընթացքին թրջական բանակն ու ոստիկանութիւնը շարժման մէջ էր Գէորդը շրջապատելու եւ ոչնչացնելու այն բաղուկը, որ Սերորէն յետոյ սպառնալիքն էր թրջական բռնակալութեան:

Սակայն, ամէն անգամ Գէորդ դուրս կու գար կուէն ղէպի լեռ, զարմանքի մասնելով շրջապատողները, որոնք կը կարծէին, թէ Ֆետայիներու փոքրիկ խումբը արգէն իրենց ասիին մէջն է:

Աւելի յանդուզն քայլ մը առաւ Գէորդ, երբ լուր ստացաւ Մշոյ Մարմինէն, թէ կապարները պատրաստ են եւ իրենք հնարաւորութիւն չունին քաղաքէն դուրս հանելու: Զինուորական ջոկատներ Հայկական թաղերը բռնած էին:

Գէորդ իր Հետ առաւ Զրենց Համբարձումը, Յարութիւնը, Յակորը ու Մկունքի Լազարը եւ զիշերով իջաւ Մուշ քաղաքի Զորի թաղը: Խումբերը ժամադիր չէին եւ չէին պիտեր, թէ այդ օր Փետայիները պիտի մըտնեն քաղաք:

Գէորդ պատահական դուռ մը բախեց, ուր մարդ չկար: յետոյ՝ երկրորդ դուռ մը, որ կիսովին բացուեցաւ ու անոր ետեւէն կանացի ձայն մը.  
- Ի՞նչ կ'ուզէք:

- Կոտոյի Հանու առնը ո՞ր կողմն է:

Կարճ խօսք մը եւ ցուցմունք մը ու՝ դուռը պսցուեցաւ:

Այս շուկաները շարժման մէջ դրին թրքական պահակազուները, որոնք զիշերային հսկողութեան տակ կը պահէին Հայկական թաղը: Փետայիներու խումբը խուսափեցաւ պահակներէն եւ կրցաւ գտնել Արտաւազը խումբի ղեկավարները: Առանց ժամանակ կորսնցնելու, խումբի երիտասարդները կապարը փոխադրեցին ձորերէն վեր, Մասնոյ ճանապարհին վըրայ:

Թուրք պահակներու շարժումներէն ու հրամաններէն իրարանցում առաջացաւ թաղին մէջ: Լուրը շուտով Հասաւ թրքական թաղերը:

- Փետայիները մտած են Մուշ քաղաք եւ կռիւը շուտով պիտի սկսի:

Գիշերային խաւարին մէջ լուրը մեծցաւ, շուկաները շատցան, սարսափի միջոցում մը ստեղծուեցաւ թէ՛ Հայկական եւ թէ՛ թրքական թաղերուն մէջ: Հայերը կոտորածի մը սարսափը կ'ապրէին, իսկ թուրքերը կը զրկուած էին իրենց բնակարաններուն մէջ, Փետայական վրէժնորութենէն ահաբեկ:

Թրքական ջոկատները Զորի թաղի տանիքներն ու փողոցները կը շտափէին մեծ զուլումութեամբ: Մինչ, Գէորդի խումբը արդէն Միրին-Կատարի ճամբան բռնած էր կապարի շարկաւորներուն հետ:

Ու դէպք մը կը պայթէր պատահական:

Զորի ճամբուն վրայ Քիւրտերը դուրս եկան Փետայիներու ուղի մը առանց պիտանալու, թէ գործ ունէին գինեալ մարդոց հետ, կրակ բացին առանց վրայ:

Կռիւը սկսած էր:

Թուրք պահակները նոյնպէս Համազարի բացին դէպի ձորը: Հրացանացաններու որոտը Մուշ քաղաքը պատերազմի դաշտի մը վերածած էր:

«Արտաւազը» խումբի մարտիկները քանի մը անկիւններէ կրակ բացին թրքական պահակներու ուղղութեամբ, որպէսզի անոնք չփոթի մատներն եւ չկարենան հետապնդել Գէորդի խումբը, որ արդէն իր ճամբան բացած էր, քանի մը քիւրտ տապալելէ ետք:

Պահակները պատերուն տակ քաշուած՝ անշարժ կը սպասէին դէպքերու զարգացման ու անպատահ կը կրակէին օդին մէջ:

Թրքական զօրքը դէրձ դրակեց իսլամ թաղերու մէջ, աւելի ծանր դէպքերու նախատեսութեամբ: Հայերէն աւելի սարսափեր էին թուրքերը: Անոնք Համոզուած էին, որ Գէորդ իր խումբով Մուշ իջած է Մերթի վրէժ մը լուծելու Համար:

Սերոբի արիւնտա գլուխը Թուրքերու աչքերուն մէջ կախուած էր, ու սպառնալիք կը տեսնէին անոր մարած բերերուն տակ:

Հայերու սիրտը կ'ամբաստար ու անոնց կորագամակ քայլերէն անդին՝ Թուրքերը Փետայիներու անցքը կը տեսնէին լեռնէ լեռ:

❦

Սանճարձակ բռնութիւնը արշաւանքի ելած էր Տարսնի աշխարհին մէջ, սակայն համակերպող ժողովուրդի ծոցէն ըմբոսաներ դուրս եկան, իրենց կեանքը դնելու զէնքի վրայ:

Տեղական մարտիկները կազմակերպութենէն հրահանգ ստացած էին հանդարտ մնալու եւ միայն նուիրուելու զազտի աշխատանքի: Սակայն պատուի բռնարարութիւնները, գոյքի գրաւումը եւ խոշտանգումները շատերուն ստիպեցին փախստական դառնալ եւ ինքնազուլուխ գործել այս ու այն լեռնանոցքին մէջ, այս ու այն ճանապարհներուն վրայ: Աստուք չհամարձակեցան Փետայի անունը կրել: Իրենց տեղական մարմիններէն արտօնութիւն առած չէին այդպիսի արարքներու դիմելու: Այսօրինակ փախուտականներ էին Աւստրիոյ Վիւրցն Սայո Պօզոս եւ Վարդան, քաջ երիտասարդներ, որոնք Մառնիկի լեռը բարձրացած էին ու ամէն օր Պիթլիսէն Մուշ երկարող ճամբան կը կտրէին և Թուրք ու Քիւրտ սէկեր կը սպաննէին: Օր մը Մծմակաբէթն էին, ուրիշ օր մը՝ Մառնիկի անտառներուն ու կիրճերուն մէջ, դայի պէս թափառական, արիւնարբու եւ վրէժխնդիր, անխնայ ու աննպատակ: Անիշխանական: Փոխ-վրէժի դաշտումն էր, որ կ'առաջնորդէր այս երիտասարդները: Ձէնք ունէին ու պաշար եւ իրենց արագ ու վճռական շարժումներով սարսափ տարածած էին ամէն կողմ:

Գանակը իջած էր ոսկորին:

Հայ ժողովուրդը խորունկ վերաւորանքներով կ'ենթարկուէր ամէնօրեայ անիրաւութեանց եւ կը սպասէր յուսալից օրերու:

Ազատութեան դրօշակիրները լեռն էին: Իրենց հարուածները անհրաժեշտութեան մը արդիւնք էին: Ու ահա, իրենցմէ անկախ, հայ ըմբոսաներ զէնքին սպառնանք՝ թշնամին կը շանթահարէին:

– Պարոն Գէորգ, Աստու կրակ դարձած են այդ երկու երիտասարդները, Սայո Պօզոսն ու Վարդանը, – կ'ըսէր Մառնիկէն եկող սուրհանդակը:

– Մեր ձեռքը չհասած տեղը անոնք թող հարուածեն, – ըսաւ Գէորգ... Խօսքը կիսատ մնաց, Մոկուեցէն սուրհանդակը հեւքով Փետայիներու թաքստոցէն ներս մտաւ:

– Պարոն Գէորգ, Մշոյ երևելիներէն Եերիֆ ազան սպանուեցաւ: Ապանուած գանուեցաւ: Մոկուեցի Եոթերը սպաննեց այդ շունը: Եերիֆը մեր գիւղին փորձանքն էր:

Լուրերը իրար կը խաչածեւէին: Փետայիները Մոկուեցի գէպքը ծանր դասն: Սուրհանդակին խօսիլ տուին գէպքին ծախքերը իմանալու համար:

– Հայոն Գէորգ, – շարունակեց սուրհանդակը, – Մուշի Թուրքերէն Եերիֆ ազան ամէն օր Մոկուեց էր: Հայ գիւղը ո՛չ միայն իր սեփականութիւնը կը նկատէր, այլև իր անասնձ կիրքերուն յաշուրդ առող տեղ մը: Գիւղի եկամտաւին մեծ մասը կ'իւրացնէր ու ինքզինք կու տար անբարոյսական արարքներու: Արդէն բերնէ բերան գիւղը գիւտէր, թէ ինչ հարսներ ու կիներ գո՞՞ զսպած էին այդ հրէշի կերքերուն: Ու ահա ճակատագիրը Եե-

բիՓ ազան կ'ստաջնորդէր Եսթերի տունը: Հօրէ ու ժօրէ զուրկ աղջիկ մը՝ որ միայն պատանի եղբայր մը ունէր: Եսթերը պեղեցիկ էր ու արդէն տասնըութը տարեկան, տուն մ'ուսցած աղջիկ մը, որ անձնագրո՛ւ արձանագրուած էր, օժանդակելու յեղափոխական խումբի գործերուն: Եսթերը զգաց, թէ Եսթերի ձեռքէն պիտի շագատի: Լեցուեցաւ վրէժի զգացումով եւ առանց սեւէ մէկուն լուր տալու իր կազմած ծրագրի մասին, անձնատուր եղաւ Եսթերի՛ օղակին: Հրէշը իր կիրքը զոհացնելէ հաք, քնացաւ Եսթերի տան մէջ, ատրճանակը եւ դաշոյնը զետեղելով բարձին տակ: Եսթեր, երբ տեսաւ թէ Եսթերի խոր քունի մէջ է, բարձին տակէն քաշեց դաշոյնը եւ խրեց անոր կուրծքը, տեղն ու տեղը սասկեցնելով բոնարարողը:

- Ուրեմն ձեր զիւղի քաջը Եսթերն է, - ըսաւ Գէորգ, - երբ տղամարդիկ իրենց կիներուն պատիւը չեն պաշտպաներ, տղջիկները Փետայի պիտի դառնան:

- Այդպէս եղաւ, պարո՛ն Գէորգ, Եսթերը Եսթերի սասկեցնելէ հաք, մեզի լուր տուաւ: Մարտական խումբի աղաքը անոր զիւղը զիւղէն զուրս հանեցին եւ հողով ծածկեցին: Մահափորձի բոլոր հետքերը մաքրուած էին ու Եսթերի անհետացած: Սակայն, շարաթ մը հաք, անոր զիւղը դառնուեցաւ: Մշոյ թուրքերը հարուածը ուղղուած կը նկատէին բոլոր երեւելիներուն դէմ: Անոր զիւղը մեծ իրարանցումով փոխադրեցին Մուշ: Ոստիկանութիւնը ձերբակալեց Մուշուքի երեւելիները եւ եօթնասունէ աւելի կիներ, որոնց մէջ նաեւ Եսթերը: Երեւելիները բանալ մնացին: Հարցաքննութիւններէ հաք, կիները վերադարձուցին Մուշուք, իսկ Եսթերը որպէս վրէժատու Փետայի՝ պահեցին Մշոյ բանտի զնտաններուն մէջ:

Մշոյ թուրքերը յարձակեցան Մուշուքի վրայ, զիւղը այրեցին, ինչքերը կողպտեցին եւ իրենց կատաղութիւնը տարածեցին մօտակայ շրջաններուն մէջ: Որքան խտուրթիւնները շտայան, այնքան աւելցան ըմբոստներուն թիւը:

Պատուաւոր մահը բախտաւորութիւն մը դարձաւ շատերուն համար,

Ճ

Հայ կեանքը կ'ընթանար դաժան ճնշումներու տակ ու ամէն տեղ յուսահատ բմբուսներ զուրս կու գային, վրէժ կը լուծէին ու կը դառնային փախստական եւ կամ կը մտնէին բանտ:

Այդ օրերուն, Գէորգ, Անդրանիկ, Համբարձում ու Մակար փոքրիկ խումբերով կը մնային Մասուն ու անոնք էին, որ կը կազմէին Փետայական շարժման բունցքը: Անոնք փոքրաթիւ էին, բայց կը հանդիսանային ազատատենջ Հայութեան հարուածող բաղուկը:

Հրայրը ազատագրական շարժման պատասխանատու վարիչն էր եւ դազտնի կազմակերպութեան ողին: Ու այդ օրերուն անոր ծածկանունը Ուրուական էր: Ան էր որ բոլոր ուժերը կը համադրէր, կամքերը կը մէկտեղէր ուժեղ կազմակերպութեան մը մէջ, որ ենթահողը կը կազմէր ապագայ ապստամբութիւններուն: Հրայր համամայն չէր անխորհուրդ շարժումներուն եւ յուսահատ արարքներուն: Ու երբ ուրուականի պէս տեղէ տեղ կը հանդիպէր յեղափոխական կեդրոններուն, շրջուն Փետայիներուն կ'ըսէր.

- Գաղտնի եւ անշուշտ պատրաստութիւններու ժամանակն է: Զէնքի մթերքը աւելցնէք: Ընդհարումներէ խուսափեցէք որքան կարելի է, որպէսզի ժողովուրդին մէջ ստեղծած մեր մարմինները կարենան զործ տեսնել եւ օր մը ազատամարտական շարժման սկսիլ վճռական հարուածներով:



Ջինուորներէն ոմանք խոնարհութեամբ մտիկ կ'ընէին Լըայրի թիւադրանքները, բայց չէին քաշուեր անոր ըսելու:

— Պարո՛ն Լըայր, դանակը սոկորին հասած է, մեր չըրածը նոր ըմբոստները կ'ընեն ու կարգապահութեան չեն ենթարկուիր: Ետտ մը պոռթկումներ տեղի կ'ունենան կամքէ անկախ:

Լըայր մտախոհ կը կրկնէր իր թելադրանքը, սակայն մտովի դիտէր թէ վճռական պատիժները շատ յաճախ բարեբար դեր կը կատարէին յեղափոխական դործին մէջ:



1900-ի աշնան օրերն էին:

Մուշէն սուրհանդակ մը հեւքով հասաւ Գէորգի թաքստոցը:

— Կոմիտէն ըսաւ, որ Պլարէ Խալիլ Մուշ եկած է զինուած հետեւորդներով: Արթուն եղէք...

Սուրհանդակի խօսքը կարծ էր, բայց լուրը կայծակի արագութեամբ հասաւ Փետայիներուն, որոնք անմիջապէս համախմբուեցան:

Գէորգ խօսքը ուղղեց անոնց.

— Անդրանիկ, մեր առաջին հարուածը պէտք է իջնէ Պլարէ Խալիլի դիւտուն, որպէսզի զիւրտ ցեղախումբերը եւ թուրք կառավարութիւնը դիտանան, թէ Փետայիի գլուխ կարողը անպատիժ չի մնար: Խալիլը զաղանթներն բոլոր ծալքերը գիտէ ու մենք անկէ միայն կրնանք իմանալ, թէ ուրիշ ի՞նչ դաւածաններ մասնակից էին այդ ոճիրին:

Անդրանիկ եւ միւս Փետայիները ջերմօրէն համակարծիք դանտեցան Գէորգի առաջարկին ու երկու սուրհանդակ միացնելով Մուշէն եկած սուրհանդակին՝ զրկեցին Մուշ, որպէսզի իմանան թէ Խալիլը ե՞րբ պիտի մեկնի քաղաքէն եւ ո՞ր ճանապարհով:

Կէս գիշերը անցած էր, երբ սուրհանդակները վերադարձան եւ տրւին հետեւեալ տեղեկութիւնը.

— Պարո՛ն Գէորգ, վարդան հայր սուրբը ըսաւ, որ Խալիլը վաղը առտու Մուշէն ճամբայ կ'ելլէ եւ Մառնիկի մօրէն անցնելով Սուրբ Աղբերիկի վրայով պիտի երթայ տուն: Հետք ունի լաւ զինուած տասնըջորս միաւորներ: Մինչեւ Մովսսարի ստորաբաժնի պիտի ընկերանան միաւոր ստիկաններ: Ինչ որ կրնան թո՛ղ ընեն...

— Գէորգ, սրբը կ'անցնի Մովսսարի արեւելքէն: Մենք երեք ժամուայ ճամբայ ունինք այդ կիրճը հասնելու համար, — ըսաւ Անդրանիկ, — մեր պատրաստութիւնները տեսնե՛ք: Եթէ այս անգամ չկարենանք Խալիլը բռնել, դժուար թէ իր որջին մէջ կարենանք բան մը ընել անոր:

Գէորգի մտքին մէջ վճռուած էր ամէն բան: Ձուկեց իր ամէնէն ընտիր զինուորները: Հոն էր Մակարը իր խուճրով: Հոն էր նաեւ Գալէն իր երեսասարգ մարտիկներով: Արշաւախուճը կը բաղկանար քսանըհինգ ընտիր Փետայիներէ:

Անդրանիկ որպէս մարտական ուժ առաջին անգամ էր, որ այսպիսի ստուար խումբով մարտի պիտի մտնէր թշնամիին դէմ, գէպք մը՝ որ կոշուած էր պատմական նշանակութիւն ունենալու մեր յեղափոխական պատմութեան մէջ:

Խումբը ճամբայ ելաւ արշալոյսին: Անցաւ Մովսսարէն եւ դէրք բռն-

նեց այն կիրճին երկու կողերուն վրայ, ուրիշ պիտի անցնէր Պշարէ Խալիլը:

Լուռ էր Մովսսսարը:  
Լսութեան խորհուրդով լեցուն էր ամայի կիրճը: Մարտիրոս եւ պուրակներու մէջ միայն թռչուններու ձայնը կը լսուէր, ու հովէն սրտապոռայ սնտառներու երաժշտութիւն կար ընտելեան մէջ: Անդին՝ մշտնջատ Մշտն Դաշտը կը մնար մեծոք լեռնեքոս միջին, ծովակի մը պատքանքը աւելով:

Կէտք էր, երբ կիրճի վերելքին ձիերու ամբակներուն ձայնը խղից ընտելեան լուսթիւնը: Գիշ մը ետք, ձիաւորները երեւցան, որոնք ապահով ու համարձակ շարունակեցին կիրճի ճամբան:

Ճեւայինները ժայռերու հետ մտնում՝ խոհարհամ էին իրենց հրացաններուն վրայ: Հանդարտ կը սպասէին այդ պահուն:

Համարձակ նախօրօք եղան կարգադրութեան, կրակ պիտի քանային թշնամիին վրայ միայն ա՛յն ատեն, երբ բոլոր ձիաւորները հասնէին իրենց հրացաններու փողին դէմ: Առաջին ազդանշանը պիտի տար Գէորդ աւ խումբը՝ կիրճի երկու կողմերէն՝ համազարկի պիտի ընկէր ձիաւորները, առաջին նպատակակէտ ունենալով Խալիլը:

Ճեւայինները անշուշտ ու իրենց շունչը բռնած՝ կը հետեւէին վայրկեան առ վայրկեան, ձիաւոր խումբի ամէն մէկ քայլին, որ կը մտնէր իրենց:

Մըր Խալիլ ձիաւորները Հասան Փետայիններու դիզքերուն աօջեւ, առաջին զնդակը Գէորդի հրացանէն ուղղուեցաւ ու անոր անմիջապէս յաջորդեցին Մահարի եւ Գայի Հարուածները, ուղղուած Պշարէ Խալիլին, որուն անձամբ ծանօթ էին:

Պումրի համազարկը լեռը թնդացուց:

Գիրճը լեցուեցաւ անհուն արձագանգներով, որոնց կը խռոնուէին Քիւրտերու աղաղակները.

- Ալլա՛հ, Ալլա՛հ...

Ո՞տնք իրենց ձիերէն կը տարալէին, ո՞տնք սպաննուած ձիերու տակ կը ճգնուէին: Քանի մը ձիաւորներ խելակորոյս կը ճողպուէին կիրճի զտնադան անցքերէն: Անոնց հետապնդումը ծանրացաւ Մահարի ոտներուն:

Մի ջանի վայրկեանի ընթացքին հաւաքուած այս ահարեկումը վերջացած էր: Պշարէ Խալիլ առաջին մահացու պնդակը ստացած՝ Յրկարած կը մնար սպաննուած ձիուն ջով: Քանի մը Քիւրտեր անշունչ ինկած էին: Ուրիշ երկու միլիաւորներ կը տարալէին ու կ'ոռնային:

Քրտական խումբը խոխոխաւած էր ու դիմադրող չկար:

Ճեւայիններու խումբը Գէորդի եւ Անդրուհիկի հետ իջան դիմադրութեան մօտ: Միայն մի ջանի օրհաններ կը մնային ժայռերու շրջան, հաւանաբար վտանգի մը ատոյթը ատենու զոտուրութեամբ:

Գէորդ ուղղակի քալեց դէպի Պշարէ Խալիլ, որ թէ՛ն ծանր վերաւոր, բայց դեռ կենդանի էր: Ամբօրէն բռնեց անոր մազերէն ու Քրտերէն լծաբուսով սկսաւ իր հարցաթնտութեան.

- Ըսէ՛, որո՞նք միջոցով թունաւորեցիր Սերտը. որո՞նք էին զորք ծակեցներդ:

Խալիլը ըստ էր:

Գէորդ ցնցելով անոր գլուխը կը հարցնէր.

- Ըսէ՛, ո՞ր հայր յանձն առաւ թոյնը տանելու Սերտին: Եթէ ճշտ մարտութեանը ըսեալ կեանքը պիտի շնորհենք քեզի:

Անդրանիկ եւ մի քանի Ֆետայիները դաշոյնները մերկացուցած՝ կը շտապեն զիմացըն Գեորգ անոր գլուխը ցնցելով իր ակնադիպ տեսնում էր աչքերուէն իջող սոյր նստած քին մէջ զգաց, թէ փրկութիւն ըսելի տւոյց։

— Ապանեցէք զիս ու վերջանա՛մ։ Աւելորդ է սա շարժարանը։

Դաշոյնները խրոնկեցան ինչիկի կուրծքին ու Թեոսայիները դաւադիրին կտրուած գլուխը իրենց հետ առնելով՝ բարձրացան Մովսասար եւ իրան քորեմտեան ըլլալներուն վրայ, ուր բազմաթիւ մարդակազմները դուռը ազրիւններու շտաբ կ'ըմպէին։ Այդտեղ, մարդերուն վրայ նետստած Պշապի ինչիկի քրտիք կանաչները կ'արփուտէր։

Սասունցի հովիտները առաջին ակնատեսները եղան վրժժաւու աջ արտաքին։ Վրէժիմիկները այդ արփանոս դրոշմը փոխադրեցին գիւղական կեդրոնները, ուր ժողովուրդը եկտա տեսնելու անգուց այս ցեղատիրոջ ոչնչացումը, ի միտքաբերութիւն այն ստորին, որ Սեդրեք Սեդրեք կտրուած աղեւական գլուխը ստանաւան էր իրեն։

Աւ ըսքը բերնէ բերան ու կոյժակի արտաբնական շրջանա Տարօնի բոլոր անկիւնները։

Գիւրտ ցեղատիրոջը զգացին, թէ տե՛ք մէկըն գլուխը սպառնով լէ իր ստանուն։

Թեոսայիական օտարափոխ իր հաստու ու վճռական հարուածով գետին կը տապալէր կտրիկ Սուլթանէն շքանշան ստացած ինչիկը ու ճիւղուած հայ ժողովուրդը շունչ կ'առնէր ու կըրկին հաստաքով կը լեցուէր ազատութեան նուիրուած բազուկին հանդէպ։

Թուրքերը կը դաւային թէ Սուլթանին կողմէ տրուած որեւէ շքանշան ազատութիւն մը չէր յեղատիրական արդարութեան դէմ։

Եզատագրական փոթորկալի ոյս կռիւները այդ օրովուն ուղի ներշնչեցին յուսանաւորութեան դուռը հասած մեր ժողովուրդին։

Ինչիկի դաշոյնը եւ շքանշանը Անդրանիկը տուաւ։ Ապագային այդ իրերը պիտի ցուցադրուէին Դաշնակցութեան թանգարանի պատմական առարկաներու կտրիկն, զայլք սերունդներուն պատմելու համար հայոց յուզումներն ու յեղատիրական սիրանքները։

•••

Թեոսայական խմբակները կրկին իրարու քով հասարուած էին, առեւ լի անձնավատան ու աւելի վճռական։ Բայց մտահոգ էին Իրենց կը պակուէր ընդհանուր ղեկավար մը, որ ո՛չ միայն Ֆետայական շարժման գրաւիւր կանգնէր, այլեւ կարենար վարել գաղտնի կազմակերպութիւններու հսկայ ցանցը։

Այդ դէմքը Հրայրն էր, իր անցեալով եւ ժողովրդական մեծ հմարքով։ Հրայրը, սակայն դէժ էր անմամանկ ընդհարումներուն։

Ամէն դէպք, որ կը պատահէր, կը սպառէր խումբին ռազմամթերքը ու անոնք ստիպուած էին ռազմամթերք ճարելու ելլել։

Հայ Յեղատիրութեան մեծագոյն ողբերգութիւնը դէմքի ու ռազմամթերքի պակասն էր ու ստիկա տեսական մտահոգութիւն մը եղաւ կռիւներու ընթացքին։ Հրահանգը նոյնն էր։—

— Մի՛ սպառէք գնդակները, ամէն մէկը գէնցի ու գնդակի վրայ քանի մը մարդ գո՛ւ կաւ տանք փնջեւ մեք ձեռքը հասնին անոնք։

Գէորգ իր փորձառութեամբ ամէնէն շատ լծուած էր ռազմամթերքի պատրաստութեան: Գիտէր, թէ խմբական կռուի կամ ապստամբական շարժման ընթացքին ռազմամթերքի պակասը թափը կը կոտորէր կռուողներուն: Եւ սակայն, կեանքի ու մահուան դուպարին մէջ, անոնք ստիպուած էին պարզել իրենց փամփշտակացները:

Գէորգ իր այս մտահոգութիւնները հազորդեց Անդրանիկին, Համբարձումին եւ կարգ մը պատասխանատու ուրիշ Փետայիներու:

- Անդրանիկ, ռազմամթերքի պակասը մեզ կը ջլտտէ: Զանգուածները դադարի կը դնուին, բայց նախնական զէնքերով: Խումբերուն որ կը սպասենք՝ ուշացան: Կովկասէն ու Պարսկաստանէն զէնքի փոխադրութիւնը պէտք է կազմակերպուի: Այս բոլոր գործերուն համար Հրայրի օժանդակութեան պէտք ունինք Տարօնի շրջաններուն մէջ: Իսկ Վարդգէսի ակադեմիան՝ Վասպուրականի սահմաններուն վրայ:

- Աղբա՛ր, Հրայրը լեռ չբարձրացաւ որպէս ընդհանուր ղեկավար, թո՛ւ կրնանք ընել, - ըսաւ Անդրանիկ վրդովուած:

Համբարձում իր կարգին իր վրդովմունքը կը յայտնէր Հրայրի գաղտնի եւ խաղաղ գործունէութեան համար:

- Համբարձո՛ւմ, - ըսաւ Գէորգ, - խումբ մը զինուորներով երթանք Հրայրի մօտ ու համոզենք, որ մեզի պէս փախտական դառնայ ու իր ձեռքը առնէ թէ՛ մարտական եւ թէ՛ կազմակերպական ընդհանուր ղեկավարութիւնը:

Հաւաքուած Փետայիները համամիտ դառնուեցան առաջարկին: Գէորգ, խումբ մը առնելով Հետը, իջաւ Ղըզըլաղաճ, Հրայրի մօտ եւ իրենց մտահոգութիւնները եւ պահանջը ներկայացուց Հրայրին:

- Սիրելի ընկերներ, լեռները մնացի հինգ-վեց տարի, - ըսաւ Հրայր, - բայց այսօր երբ ծաւալուն կազմակերպութիւն մը գոյութիւն ունի ասիկէ մինչեւ Ախլաթ ու Գատուան, իմ գաղտնի աշխատանքներով աւելի մեծ դօրծ կը տեսնեմ ապագայ ապստամբութեան համար, քան թէ զէնք մը առնեմ ձեռքս եւ լեռ ելլեմ ձեզի հետ: Կոխը ամէն օր կրնանք ընել, բայց կռուի պատրաստութիւնը սմիսներ կը պահանջէ մեզմէ: Իմ խորհուրդն է, որ դուք պատահական կռիւներէ զգուշանաք, մինչեւ մեր պատրաստութիւնները լրանան: Դուք էք մեր մարտական յոյսը, բայց եթէ խումբերը ապստին պատահական կռիւներու մէջ, մենք ամէն օր Սերորի, Գուրդէնի, Գէորդի եւ Համբարձումի տեղ, նոյն վայրկեանին, նոյն որակով մարտական ուժ չենք կրնար գտնել:

Գէորգ եւ Համբարձում պահ մը խորհեցան բռնի ուժով Հրայրը իրենց հետ առնելու մօտին: Բայց սիրտ չըրին այդ քայլը առնելու ու վերադարձան Սասուն, կացութիւնը պարզիլու համար ընկերներուն:

Անդրանիկ եւ Համբարձում վրդովուած էին Հրայրի տուած պատասխանէն: Ու սրտում կայացուցին դրաւոր դիմում մը գրկել Ղըզըլաղաճ, որ իրենք պատրաստ են ամէն կերպ ենթարկուելու Հրայրին, եթէ փախտական դառնայ ու միանայ իրենց: Այլապէս Փետայիներու մարտական գործունէութիւնը պիտի շարունակեն անկախաբար:



Այդ օրերուն, Գէորգ իր Հեռ առնելով չորս ընկերներ իջաւ Մշոյ Դաշտ, վառօղի փոխադրութեան համար: Յրօնքի մէջ պէտք եղած պատ-

բառտուփիւնները տեսաւ եւ շաշակաւորները ճամբայ հանց դէպի Սասուն: Իսկ ինք անցաւ Բերդակ:

Արշալույսին թուրք ձիաւորները նշմարեցին Փետայիններու մուտքը այն տունէն ներս, որ իրենց թաքստոցն էր: Թուրքերը տունը շրջապատեցին: Գէորգ ստիպուած կռուի դուրս եկաւ թշնամուն դէմ, եւ շղթան ցըրուելով՝ բարձրացաւ գիւղի կողմ ի վեր:

Կոհիւր որ սկսաւ լուսարացին, տեսց մինչեւ երեկոյ: Թշնամի բռնակը եւ ցեղախումբերը բռնած էին Բերդակի շրջապատը, լեցուած էին Աւրազ եւ Հաւասարիկ: Կը թուի թէ թուրք զօրամասերն ու ստտիկանները նախօրօք դասաւորուած էին այդ ճամբաներուն վրայ, Սասունի եւ Դաշտի անցուղիները փակելու համար:

Գէորգի փոքրիկ խումբը պաշարման լայն ցանցի մէջ բռնուած էր: Հաւասարիկի բարձունքէն անցնելու փորձը ձախողեցաւ: Հետապնդողներու կրակէն զատ, Փետայիններու դէմ ելան ուրիշ զօրամասեր, որոնք Հաւասարիկէն համազարկ բացին իրենց վրայ: Խումբին կը մնար ապստինի Աւաքեւոց վանքի ձորերուն ու ժայռերուն եւ Մուշ քաղաքի արեւելեան բարձունքներէն հասնիլ Միրին Կատար:

Անձնուրացները, անոթի ու յուսնարեկ, կոհիւր կը շարունակէին: Քրտան քիլոմէթր տարածութեան վրայ երկարեցաւ կոհիւր: Թշնամի շարքերէն շատեր ինկած էին այս ու այն ձորին մէջ: Ո՛վ ուշադրութիւն պիտի դարձրնէր այդ սատակներուն, երբ քանի մը հազարի հասնող զօրքերն ու արիւնարբու խուժանները դինոյցած էին իրենց հեռապնդումներուն մէջ: Անոնց միացան Մուշի Թուրքերը, վստահ թէ հայ մարտիկներու բոլոր ճամբաները բռնուած էին:

«Արշալույս՝ կանչող Թուրքերը իրենց գոտում գոչումներով լեցուցած էին ձորը, որ կը բարձրանար դէպի Միրին Կատար:

— Սարերու Ալանի գլուխը պիտի կտրենք, այդ կեալուրը մեր ձեռքէն ա՛լ պիտի չազատի...»

Գէորգ իր ընկերներուն հետ հասած էր Աստղներգի ժայռերը: Ծեւտայինները դիրք բռնած էին իրարմէ քանի մը մեթր հեռաւորութեամբ եւ կրակ կը բանալին թէ՛ հետապնդողներուն եւ թէ՛ Մուշէն դէպի բարձունքները խուժողներուն վրայ:

— Տղա՛ք, — ըսաւ Գէորգ, — մեր դիրքերէն ա՛լ մի շարժիք: Ձեր գրեւդ պարսպի շանցի: Մենք յոգնած ենք եւ այս վերելքի ճամբուն վրայ կը մնանք ուժասպառ: Ալքերնիւ չորս կողմ դարձուցէք, որպէսցի թշնամին մեզի չժողանայ:

Թշնամին ալ պարտուած էր այս անելանելի լեռներուն եւ ձորերուն մէջ, բայց անոնց համազարկերը շրջապատը կը թնդացնէին: Երբեմն կրթեմն մոտինի օռչող մը կը լսուէր, ու Մուշի տուններուն կծկուած Հայերը, աղանատեսի պէս, կը միմիջարուէին թէ Փետայինները դեռ վնասուած չեն եւ կը դիմադրեն:

Ճիշդ այդ պահուն, Մուշ վերին ձորերուն մէջ բուն ընդհարում մը տեղի ունեցաւ: Թուրքերը շփոթեցան, կարծելով թէ Սասունէն օդական ուժեր հասած էին: Մինչդեռ պարզ պատահումներն էր որ օդնութեան կը հասնէր Գէորգի խումբին:

Սասունցիներու տարազով, խեղճուկ Հայ մը, մալ մը կողքին կախած՝ աջ ու ձախ կրակ կը բանար եւ կ'առաջանար դէպի Աստղներգ, ուրկէ մոտինի սուրացներ բաժն էր:

Այս նոր պատերազմիկը Տալուրիկցի Յակէն էր, Գէորգի եւ Հրայրի Հինաւուրց ընկերը: Մուշ մտած էր, Կ. Կոմիտէէն տեղեկութիւններ ատնեալու համար:

Չարդան վարդապետ տեղեկութիւնները տուաւ Յակէին եւ տակաւին Մուշ ձորը չբռնած՝ ճամբու դրաւ դայն գէպի Սասուն:

- Յակէ՛, - ըսաւ Վարդան վարդապետը, - մտա՛յ մը կախէ՛ գօտիէ՛դ, եւ խեղճ՝ կերպարանքով ծըլկուէ՛ քաղաքէն, ուշադրութիւն չդրաւելու համար:

Առաջնորդարանի ծառան գրացիներէն մաղ մը ճարեց եւ յանձնեց Յակէին, որ թեթեւաւոն բռնեց ձորի ճամբան: Սակայն կիրճի բարձունքները զորքերով բռնուած տեսաւ, ու ստիպուեցաւ քովընտի ձորերու անցքերէն հեք մը գտնել գէպի Միրին Կատար:

Որք ժայտերու ետին թաքնուած, քարէ քար կ'անցնէր, թուրք վիրաւոր զինուոր մը երկնցած տեսաւ իր օտքերուն առջև: Ձէնքը եւ փամփուշտները առաւ վիրուորի վրայէն եւ դայն լքեց իր բախտին, նկատելով որ արդէն մահաժերձ էր, ու սկսաւ կրակել դիմացի բռուրներուն վրայ գիբք բռնած զինուորներուն վրայ:

Յակէի գնդակներէն քանի մը հողի թաւալուր ինկան. թուրքերը մեծ խուճապով հեռացան բլուրէն, կարծելով որ իրենց կռնակէն պաշարուած են: Յակէն ժայռէ ժայռ անցնելով աջ ու ձախ կը կրակէր, ու մտնէ ալ դօտիէն սուկախ՝ կը շարժէր, արտակարգ երեւոյթ մը տարով այս ուրուակահինն, որ չգիտես թէ ո՛ր ժայռի տակէն դուրս եկած էր թուրքերը խուճապի մատնելու:

Գէորգի համար ալ անակնկալ մըն էր իր աջ թեւին վրայ տեղի ունեցած կռիւրը: Կոխ մը, որ անշուշտ Հայտա եւ թուրքի միջեւ տեղի պիտի ունենար:

Արիւմարը կը մօտենար, սակայն Գէորգի խուճարը անկարող էր բարձունքը կտրելու գէպի Միրին Կատար: Արտարով այս սպասումի պահուն Գէորգի դիրքին կը հասնէր Յակէն, ոպտազինուած թրքական մատուցելով եւ մտղով մը...

Յակէի երեւումը սիրտանք մը եղաւ յոգնարեկ խուճարին, ուժ մը կ'աւելնար իրենց պարտիկ բանակին վրայ, ու իրենք կը դառնային Հինգ Հոգիների Ֆետայիներու խուճար մը:

Յիշ որ, հրաշքներու օր մը եղաւ: Ամբողջ օր մը կոռուած էին հազարուոր թշնամիին դէմ, ու դեռ կոռուած կը մնային իրենց դէնքին եւ Հայաստանի ժայռերուն: Հրաշք մըն էր նաեւ Յակէի պատահական երեւումը իր նշանաւոր մտղով: Բայց հրաշքներու գերագոյնը տեղի պիտի ունենար քիչ մը հաք, երբ աջէն ու ձախէն թշնամիին կ'առաջանար գէպի իրենց դիրքերը:

Հրաշքը Մուշ դաշտի մշուշն էր, որ բարձրացաւ եւ մշուշապատեց լեռներն ու ձորերը: Ֆետայիները այլեւս ազատ կրնային շարժիլ: Անոնք իրարու օգնելով, կամաց կամաց բարձրացան Միրին Կատար եւ դիրքերով հասան Կոբ գիւղը:

թուրքերը, այլայլած, այլ գիշեր իրարու կը պատմէին հրաշքը, որ Աստուածային օգնութիւն մըն էր հայ անձնուրացիներուն, ու կ'աւելցնէին. - Ֆետայիները նոր գէնք մը գտած են, որ գնդակ կը մաղէ մեք գէն...



Այլ օրերուն, երբ Մարերու Աստուծոյ վատօղի մթերք կր հասաքեր ու կը դրկէր Մասուն, հոն, Բարձրուանդակին վրայ տեղի կ'ունենար անօրինակ սղրեբարութիւն մը:

ՄտՀը, Փետայիներու Համար, անմահութիւն էր:

Իսկ գինաթափութիւնը՝ կրկնակի մահ մը, որ բարոյապէս կը գգեանէր գանձնք:

Գէորդ այլ ոչրեբարութեան ղեկուցումն էր որ կը լսէր, երբ կռուէն յողնորակի՝ նոր Հասած էին կոր:

Իշխան Արէն, երեք մարտիկներու հայրը, որ յաճախ Մերոքը, Գէորդն ու Անդրանիկը իր տունը պահած էր ու վտանդի մը պարագային, զիւզը տաքի հանած էր անոնց պաշտպանութեան համար, մեծ յուզումով պատմեց Շէնիկի մէջ տեղի ունեցած անցուղարձերը:

— Գեւօ՛, դուքայան քու Հոգուն, ծանր քան տեղի ունեցաւ Շէնիկի մէջ, — ըսաւ Արէն, որ սովորութիւն ունէր Անդրանիկին՝ Անդրո ըսելու, Մերոք փաշային՝ Մերօ ու Գէորդին՝ Գեւօ, — պարտն Հրայրը եկաւ Շէնիկ, բոլոր իշխանները հոն հաւաքուեցան, հոն էին Փետայիները, մինակ դուն բացակայ էիր: Հոն եկած էին նաեւ գիւղերու կոմիտէներու ներկայացուցիչները: Այդ մեծ ժողովին մէջ պարտն Հրայր իր ծոցէն հանեց ա՛յն նամակը, որ դուք՝ Փետայիներդ գրած էիք իրեն: Կարգաց մեր գիրը, ու ըսաւ: — Ահա՛, ես ալ փախտական դարձայ, մեր պահանջին համաձայն. Թե՛ որուք պիտի ենթարկուիք իմ կարգադրութեան, ձեզմէ կը պահանջեմ, որ մեր զէնքերը վար դնէք, ու մենք բոլորս նուիրուինք գինեմի գործին՝ քանի դեռ փոթորիկը չէ սրայթած մեր դիտուն: Այս խօսքին վրայ Համբարձումը ու Անդրոն բորբոքեցան ու օտրի ցատկեցին:

— Ի՞նչ է, մեզ գինաթափելով՝ Թորքի՞ն կ'ուզէք յանձնել, — ըսին անոնք:

Գէորդ եւ իր ընկերները ջարդուած մարմնով ընկողմանած վին հիւրընկալ Արէի փաշաներուն վրայ ու խոյտակուած հողիով մտիկ կ'ընէին իշխանի հանդարտ ղեկուցումը:

Գէորդ ալ չհամբերեց.

— Իշխան Արէ՛, ինչպէ՞ս վերջացաւ զործը: Պօսածդ մեր օսկորները կը ջարդէ, այսօրուան կրիւր ժողջանք, բայց տուած տեղեկութիւններդ նոր ցաւ կ'աւելցնեն մեր կտորած սրտին:

— Գեւօ՛, անաչէ՛ն, — ըսաւ Արէն, — այլ ցաւաբի դէպքն է որ վը պատմեմ: Երբ Համբարձումը եւ քանի մը ղինուորներ դէմ տրան Արմենակին, իրարանցում մը առաջացաւ ժողովին մէջ: Իշխանները ժիջած տեղին, նա մենք բոլորս Համաձայն եղանք Արմենակին: Շէնիկի իշխան Միքայէլը ըսաւ.

— Դուք Փետայի էք, ազդին ղինուորներն էք, հիմա աղբը մեզի կ'ըսէ, — զէնքերը վար դրէ՛ք, պէտք է հնազանդիք: Այս խօսքէն կրկին զըբզըռուած՝ Համբարձումը դարձեալ խօսեցաւ:

Արմենակի գերջնական վճիռը տուաւ եւ աւելցուց — Անդրանիկը փոստբով մը պէտք է անցնի Կովկաս եւ Պարսկաստան՝ ղինեալ փոստեր առաջնորդելու դէպի Բարձրուանդակ: Միւս Փետայիները ժամանակ մը թաքնարած կը մնան, մինչեւ որ նոր օւժեր եւ ռազմավարք Հասնի Տարօն:

Գէորդ լուռ ու մտահոգ՝ կը սպասէր խօսքի եզրակացութեան:

Արէն ծխամորճը փառեց եւ շարունակեց իր խօսքը.

— Ի՞նչ ըսեմ, Գեւօ՛, մեր խելքէն ու մտքէն շահեցած դան զը տեղի

ուենեցաւ: Ազգին հրամանը շուղեցին կտտարել: Համբարձումս, Անդրանիկ եւ քանի մը Ֆեոտայիներ ոտքի ցատկեցին եւ յայտնեցին թէ իրենց զէնքերը պիտի չյանձնեն: Այս ընթացքը զրդուեց ժողովակոմիտեան: Իշխաններն ու Սասունի ներկայացուցիչները բոլորը ոտքի ելան եւ բռնի կերպով զէնքերը առին Ֆեոտայիներէն: Քիչ կը մնար տեղն ու տեղը սպաննէին Անդրանիկն ու Համբարձումը, բայց Արմենակ միջամտեց եւ իշխանները նստեցուց իրենց տեղերը: Ընդհանուր կարգով իրենց զէնքերն ու փամփուշտները զրին Արմենակին առջեւ: Անոնք 'հիմա անզէն' կը մնան քանի մը դիւզերու մէջ...

Գէորգ եւ իր ժարտիկները այլայլած՝ իրարու երես կը նայէին: Կոտարուածը արտակարգ քայլ մըն էր ազատագրական շարժման անցած տասնամեակի ընթացքին: Անկարգ ու անպարզ Ֆեոտայի մը դինամիստները Հագիւ մէկ-երկու դրուագ արձանագրած էր անցեալին: Ու այսօր՝ ժարտական փառքերու հասած Ֆեոտայիներու լիպէտն էր որ զէնքերը վաք կը դնէր:

Գէորգի սիրտը տխուրեան ակիւններով ողողուեցաւ: Իր բազմաթիւ ընկերները դինամիստներ էին:

Կարելի՞ էր երեւակայիլ Ֆեոտայիները անզէն՝ լեռներու վրայ...

Իշխան Արէն կը ծխէր ու ծուխին մէջէն կը դիտէր զէնքերը յոգնած աքս Ֆեոտայիներուն, որոնք այնքան հերոսական կոնիէ մը յաղթական դուրս եկած էին քանի մը ժամ առաջ, ու այս պահուս կը մտածէին իրենց անզէն ընկերներու մասին:

- Գեւօ՛, - ձայն բարձրացուց Արէն, - տխրեցա՛ր տուած լուրերէս: Ըսեմ որ ե՛ս ալ իշխաններուն հետ միասին մատու թափ տուի մեր անձնուրացներուն վրայ, բայց այսօր սիրտս կտուրած է: Դիմենք պարոն Արմենակին, որպէսզի սորժը տնուի կապէ:

- Իշխան Արէ՛, ինչ որ անշի ունեցած է, սրտակոտոր կ'ընէ մեր ժողովուրդը: Յուսահատ Հայերու աչքը անվրէպ զէնքի բլթակին է: Արմենակը անուշ խօսք ունի: Ամբողջ մեր ժողովուրդը իրարու կապած՝ միասնաբար մը սուղծած է, բայց յեղափոխական զործերուն մէջ, երկաթեայ կարգապահութիւնը զործազրոյ մարդ է: Եթէ մենք կարգապահ ըլլանք, Հրայր մեր խնդրանքը չի՛ մերժեր, զէնքերը կը վերստարձնէ մեր ընկերներուն:

- Աստուած խօսքդ լսէ ու մեր ազգը չպտուակաի:

Տարօնի աշխարհին մէջ ազգը Դանակցութիւնն էր ու Ֆեոտայիները ազգին դիմուորներն էին:

Հրայր կարգապահական այդ կտրուկ քայլը առած էր Կեղը. Կոմիտէի եւ Հարիւրէ աւելի Կոմիտէներու համամտութեամբ եւ զէնքերը փոխադրած Ղըզըլագան, իր հսկողութեան տակ:



Գէորգ արշալոյսին ճամբայ ելաւ եւ Սէմալի մէջ գտաւ իր զինաթափ ընկերները: Անոնք մեծ ուրախութեամբ զրկախառնուեցան Սարկու Աւլանին հետ, որ ստոյգ մահէ ազատուած էր: Անոնք սրտատրոփ հետեւած էին Բերդակի մէջ պայթած զէնքին եւ տեղեակ չէին կուռի ելքին:

Սարկու Աւլանի տխուր էր սակայն այն պատկերին առջեւ, որ կը ներկայացնէին զէնքերէն մերկացած այս աւիւծները: Անոնք իրենց խորհրդաւոր հմայքը չունէին եւ Սասնոյ լեռները կարծես թէ բլուրներու վերածուած էին: Երկաթեայ մարդիկ չէին անցներ անոնց վրայէն...



Յերկար լուռ թիւն մը տիրեց ողջապարտ մտերէն ետք:  
 Գլխիկոր էին բարձրն ալ: Պօռքը կը պահուէր այդ պահուն:  
 Անդրանիկն հղաւ առաջին խօսողը:  
 - Ծանր բան տեղի ունեցաւ աղտ'ք, բայց փառք տանք Աստուծոյ, որ  
 այսօր Հինգ զինեալներ ունինք մեր մէջ: Եթէ զէպք մը պատահի, պոնէ  
 քանի մը զնուակ մեր կողմէ ալ կ'ուզենք թշնամուն դէմ:  
 Աւ քիչ մը մտմտութե հաք աւելցուց:

- Հրայրը շատ խիստ եղաւ իր կարգապահութեան ընթացքին: Մինք  
 իրմէ խնդրած էինք որ չու բարձրանայ եւ ընդհանուր դեկափար դառնայ:  
 Բայց ինք մեզ զինաթափեց, ինչ որ կը նշանակէ՝ մահուան գատապարտեց:  
 Մենք այլեւս արժէք մը չուենինք ժողովուրդի աչքին, ու ժողովուրդը կրնայ  
 շուտ յուսահատիլ:

Համբարձում կը պատրաստուէր բորբոքած ճառ մը խօսիլ, երբ Փե-  
 տայի իշխան Մակար խօսքի մէջ մտաւ:

- Ե՛ս ալ դէմ եմ Արմենակի կարգադրութեան: Ձէնքը զինուորի՛ն կը  
 պատկանի. մենք ուխտած ենք այդ զէնքին վրայ նահատակուիլ: Բայց երբ  
 Արմենակ Եէնիկ եկաւ եւ մեզմէ պահանջեց որ զէնքերը վար դնենք, մենք  
 պարտաւոր էինք ենթարկուիլ անոր, որպէս մեր ազգապետը: Արմենակին  
 կռնակ կեցած է ամբողջ կազմակերպութիւնը եւ մենք անոր զինուորներն  
 ենք: Մենք Փետայի՛ ենք, մենք խմբապետ կրնանք ըլլալ, բայց ազգը պե-  
 տի՛ մը պէտք ունի: որ իր խօսքը Սասունէն մինչեւ Վան, Պարսկաստան եւ  
 Կովկաս հասնէ եւ գործերը կարգադրէ: Կազմակերպութեան դիմենք, որ  
 այս խնդիրը լուծէ:

Մակարի խօսքէն ետք կրկին լուռ թիւն տիրեց: Փետայիները կը զգա-  
 յին թէ կարգապահութիւնը խախտած են: Ձէնքի իրաւունքը իրենց կը պատ-  
 կանի, սակայն ազատագրական տեւական կռիւր Լրկաթէ կարգապահու-  
 թեան ենթակայ է, ու Հրայր այդ կարգապահութիւնը վերականգնելու հա-  
 մար այդ միջոցին դիմած է:

Այդ պահուն քանի մը շրջաններու իշխաններ կը հասնէին Մեմալ եւ  
 կ'ուղղուէին Փետայիներու կեդրոնատեղին: Ձինաթափութեան օրէն արդէն  
 շարտի մը տեցած էր: Իշխանները եկած էին եւք մը գտնելու:

Փետայիները մույլ դէմքով ընդունեցին զանոնք: Այդ իշխաններն  
 էին, որ իրենց գէմ ցցուեցան եւ զէնքերը վար առին իրենց ուտերէն:

Եէնիկի իշխան Միքայէլը խօսքը բացաւ հանդարտ ու պայծառ դէմ-  
 քով:

- Աղբրտի՛ք, անցած շարթուան տեղի ունեցածը մեր սիրտը չա՛տ  
 ցաւցուց: Դուք մեր կրկաթէ բազո՛ւկն էք, մեր աչքի լո՛յսը ու սրտի յոյսը:  
 Մեր սիրտը չի՛ դիմանար, որ դուք անզէն մնաք: Մեր լեռները սգաւտ'ք են  
 առանց ձեզի: Մտածեցինք եւ բոլոր իշխաններու կողմէ խնդրազիւր գրե-  
 ցինք պատասխանատու մարմին եւ պարոն Արմենակին, որ զէնքերը ե՛տ  
 տրուին, Փետայութիւնը վերականգնի՛, կարգ ու կարգապահութիւն՝ ըլ-  
 լայ Այն ատեն, մենք իշխաններս եւ մեր ժողովուրդը սիրով ծառայ կը  
 դառնանք ազգին եւ իր զինուորներուն...

Մույլ Փետայիները այլափոխուած էին: Յուշուած էին իշխան Մի-  
 քայէլի այնքան սրտառու խօսքերէն: Արցունքի ալիքներ կային շատերու  
 աչքերուն մէջ: Ձերմ ու եզրայրական զգացումը գրկած էր բոլորին: Ան-  
 ցած շարթուան դառնութիւնը սրբուած էր անոնց դէմքերէն:

- Շատ լուռ մտածեցիք, իշխան Միքայէլ, - ըսաւ Գէորգ, - ես վըտտահ եմ, որ Արմենակ ձեր խնդրանքը կը կատարէ: Երևարած էի, ինչ ընելիքս չէի գիտեր: Եթէ իմ ընկերներս անպէ՛ն մնան, ե՛ս ալ իմ գէնքս պիտի յանձնեմ ազգապետին:

- Ամէն բան լա՛ւ պիտի վերջանայ, հող մի՛ ընէք, մենք միտսին կըրուեցանք եւ շատ անգամ մեր կեանքը իրարու նուիրեցինք, - ըսաւ խիտան Միքայէլ, - այսօր ուրախութեան օր թող զատնայ մեզի համար:

Ու Փետայիները, մանկական ուրախութեամբ, կատակելու սկսան: Իշխաններու կարգադրութեամբ ոչխար մը մատաղ ըրին. այդ երեկոյ Աէմալ խնճոյքի մէջ էր:

Այդ երեկոյ, Գէորգ Հողեկան Հանդստութեամբ փակեց աշէքը եւ սահրները իրենց տեղը դտան՝ անցած օրուան տառապազին կոխէն:

Ճ

Հրայր վերադարձած էր Մշոյ Դաշտ, եւ ուրուականի պէս կ'անցնէր չրջանէ չրջան: Կը զգար թէ շատ խիտ եղած էր մարտիկներուն հետ, ու կը մտածէր էլք մը գտնել, համադրելու կազմակերպութեան ուժերը:

Հրայր յուսալքում մը նշմարեց չրջաններու մէջ. եւ Արք պատասխանատու ընկերները մտիկ կ'ընէր, զոչո՛ւմ մը կար անոնց խօսքերուն մէջ.

- Պարօն Արմենակ, մենք պահանջեցինք որ խումբերը գինաթափ ընէք, բայց հիմա կը զգանք որ ժողովուրդը կը յուսալքուի, երբ կը լսէ թէ պինուած Փետայի չկայ լեռներուն վրայ: Միջոց մը խորհէ՛, որ այս գործը շուտ կարգադրուի...

Այդ տրամադրութիւնները ստուգելէ ետք, Հրայր ստացաւ նաեւ Սասնայ իշխաններու առաջարկը: Անմիջապէս անցաւ Դիրզեվանք գիւղը անխորհրդակցեցաւ Վարդանի հետ, որ Դաշտի ամէնէն ազդեցիկ եւ պատասխանատու Կարդն էր:

- Հրայր, եթէ համաձայն ես, Դիրզեվանքի մէջ ժողովի հրաւերները բոլորը եւ տեղւոյն վրայ գործը կարգադրենք, - ըսաւ Վարդան:

- Վարդան, կազմակերպութեան խիտ կարգապահութիւնը ամէն ոք զգաց, - ըսաւ Հրայր, - այժմ բոլոր ուժերը կրնանք համադրել: Այսօր քիչ տուրհանդակներ նամբայ կը հանենք, եւ հոս, կազմակերպութեան պատասխանատու ժողովին մէջ խնդիրները կը լուծենք:

Գոհունակութիւն մը ծաւալեցաւ Վարդանի լէմբին: Մանօթ էր Հըրայրի հեռատեսութեան եւ խոհեմութեան ու անոր խօսքէն կուսկեց որ պատակտամբ պիտի վերնար նուիրենք բանակէն:

Յուշահանդակներ մեկնեցան գէպի Դաշտի կ'ըղբոնները, գէպի Մուշ եւ Ասատան, ուրուականի պէս անցնելով թրջական շրջաններէ:

Քանի մը օր հազիւ անցած էր, երբ գիշերուան մութին ապաւինած՝ կը հասնէին պատգամաւորներն ու պատասխանատու անհատները այն կտու կազմակերպութեան, որ Տարօնի ընդլատակեայ կեանքն էր, ամուր Պամքով ու հաստաթով իրարու շրթախուս: Կու դային Փետայիները, խումբ ստխումբ: Դիրզեվանք հասած էին Կեղր. Կոմիտէի անդամները, բոլորն ալ ժըտաւհող: Զինեայ պահակները բռնած էին Մոկուներ, Ետրչէնի եւ Առաքելոց փանքի ճամբաները, Հրայրի եւ Վարդանի հրահանդաներուն նեմակայ:

Բազմամարդ եւ պատկառելի ժողով մըն էր, որ տեղի կ'ունենար Մտըչեղեան թերզի ստորաաններուն:

Վարդան խումբէ խումբ կ'անցնէր եւ իր պայծառ ու մպտուն ղէժ-  
քով լաւատեսութեամբ կը վարակէր բոլորը, որոնք, ժամանման պահուն,  
մտայլ էին ու ընկճուած:

Հրայր կ'ընդունէր եկողները, մտածկոտ, բայց բարեացակամ:

Կուռ կազմակերպութեան մը նուիրեալներու բանակ հոն էր: Գիշեր-  
ուան խաղաղութիւնը կար ընդարձակ եկեղեցիին մէջ, ուր հաւաքուած էր  
այս բողոքութիւնը, կանթեղներու եւ մոմերու ազօտ լոյսերով խորհրդա-  
ւոր:

Վարդան եղաւ առաջին խօսողը.

- Բարո՛ւմ եկաք մեր պիւղը, իմ թանկագին ընկերներ, պիւղը ձե՛րն է,  
իմ տունը ձե՛րն է, ոյս եկեղեցի՛ն ալ ձե՛րն է: Մինք հոս հաւաքուած չե՛նք  
հաղորդութիւն առնելու, այլ եկած ենք ազատութեան սրբազան ուխտը վե-  
րանորոշելու, անձնուրացներու եզրայրական զգացումներով: Կը խնդրեմ  
ընկէք Հրայրէն, որ կազմակերպութեան պատգամը հաղորդէ այս ժողո-  
ւիին, որ Բարձրաւանդակի եւ Տարօնի կամքը կը ներկայացնէ:

Հրայր ոտքի ելաւ, տեսրակ մը ձեռքին.

- Ընկերներ, ազատութեան ճամբուն վրայ տատաղող սրտակիցներ,  
հաւաքուեցանք այսօր այս աղօթարանին մէջ, մեր ուժերը բազմապատկե-  
լու համար: Թուրքը մեզ կը կոտորէ, այդ բաւական է որ մեր կազմերը  
չկոտորակուին, միշտ ներկայանան վտանգին դէմ՝ ամբողջական ու անձ-  
նուրաց: Արիւնալի այս ճամբուն վրայ մեր կեանքը դրած ենք դոյամարտի  
նմարին մէջ. թանկագին է ձեր կեանքը, որովհետեւ ան նուիրուած է ա-  
զատութեան Մուրք Սեղանին, ու այդ պատճառաւ խիտ կարգապահու-  
թեան ենթակայ ենք բոլորս: Ազատութեան բանակի շարժումներուն մէջ,  
զերպանցը, ամէն բանէ առաջ, կարգապահութիւնն է:

Ու սկսեաւ կարդալ այն կանոնադիրը, որ իր ձեռքով եւ կարմիր մե-  
լանով գրուած էր: Սրբազան ուխտի այդ վաւերագրի ընթերցումէն ետք,  
Հրայր խօսեցաւ իր հրապարակաւ ճառերէն մէկը. ու երբ վերջացուց իր խօսքը,  
ժողովականները միաբերան կոչեցին.

- Կ'ուխտենք հաւատարիմ մնալ սպասութեան սրբազան պատգամին:

Ձեռնալիններու ձայնը երկաթեայ զնոցով կը լռուէր կամարներուն  
տակ, առանձին շեշտով եւ համախումբ: Յուպուած էին բոլորն ալ: Երջան-  
կութեամբ զինովցած էր Գիրգեվանքի Վարդանը, հոգեկան այն բաւարա-  
րութեամբ, որ ինք մաս ու բաժին ունէր այս եղբայրական մթնոլորտը ըս-  
տեղծելուն մէջ:

Հրայր կրկին ոտքի ելաւ.

- Իմ սիրելի գործակիցներ, այսօր թո՛ղ մեր կամքը տիրապետէ: Այ-  
սօր մեր ուրախութիւնը թող լրի՛ւ ըլլայ: Վարդանէն կը խնդրեմ, որ զէն-  
քերը ե՛տ տայ մեր աւիճներուն եւ արծիւներուն. տնոնք մեր շեռներու  
փառքն են ու մեր ժողովուրդի հպարտա՛նք...

Ուրախութեան բացականչութիւններու եւ յուզումնալի շեշտուած  
մէջ, եկեղեցիի կամարները կը թնդային ու մոմերը լոյսէ արտատուքով կը  
մասնակցէին այս ամբողջով մարդոց հոգեկան խոփքին:

Ձեռնալինները Գէորգի, Անդրանիկի եւ Համարձուժի առաջնորդու-  
թեամբ շրջապատեցին Հրայրը եւ գրկախառն մնացին երկար պահ մը:

Ժողովականները անհուն պահունակութեամբ կը դիտէին գրկախառն  
արձանը անձնուրացներուն, ու մրմունջ մըն էր որ կը բարձրանար ամէն  
անկիւնէ:

~ Փա՛ռք ազատութեան Աստծուն... ~

••

Հրայր, ուզեց որ Փետայիները տեղւոյն վրայ խմբապետ մը ընտրեն :  
Շատեր Գէորգի անունը տուին, բայց Սարերու Աւանը կտրականապէս մեր-  
ժեց եւ առաջարկեց Անդրանիկի թեկնածութիւնը :

Գէորգին համաձեռ եղան բոլոր Փետայիները եւ Անդրանիկ այդ օ-  
րէն դարձաւ խմբապետը Մովսարի խումբին եւ իրրեւ արծիւ սաւառնե-  
ցաւ լեռ ու ձոր :

Վարդանի կարգադրութեամբ ոչխարներ մորթուած էին եւ կերակուր  
պատրաստուած : Դիրքեմանքը այդ դիշեր շքեացաւ :

Երբ պատգամաւորներն ու Փետայիները կերակուրի վրայ էին, ու  
յուզական խօսքերէն անցած էին կատակներու շարանին, սուրհունդակ մը  
հասաւ Ախլաթէն ու նստակ մը երկարեց Հրայրին :

Լաուիլին տիրեց, ու ներկաներու հայեացքը սեւեռեցաւ Հրայրի  
վրայ :

Երբ նստակին ընթերցումը վերջացաւ, Հրայր ոտքի ելաւ, վիզը քիչ  
մը ծռած՝ խեղճացած ձեւ մը առնելով :

Հուաքոյթին մասնակցողները լա՛ւ ուսումնասիրած էին Հրայրի կեց-  
ուածքը : Երբ վիզը ծռած կը խօսէր, շատ նշանակալից բան մը ունէր հա-  
ղորդելու :

~ Տղա՛ք, ուրախ լուր մը պիտի հաղորդեմ ձեզի : Ճետայիներու խում-  
բը անցած է Խատաւիկէն եւ Հարթի շրջանին մէջ կը գործէ : Իսկ ուրիշ խումբ  
մը հասած է Սիփան : Արիւնով ներկուած այդ վայրերուն մէջ, ազատու-  
թեան զրօշուկը կրկին փայլեցաւ, յոյս ու կորով ներշնչելով ձեզի : Յաղ-  
թանակի լոյսով վերադառնանք մեր գործին... ~

Ժողովը վերջացաւ :

Յաջորդ օր Բարձրաւանդակի եւ Տարօնի հայ դանդուաճները սփռ-  
վանքով կը լսէին Դիրքեմանքէն հասած լուրերը եւ օպելորութեամբ կը  
փարէին ազատութեան պայքարին :

••

Այդ սարին, այդ օրերուն, սրտառուչ ներշնչումով Մանուկ Աբեղ-  
եան կը դրէր իր միակ բանաստեղծութիւնը, սէգ Սիփանի քաջերուն նուիր-  
ուած, ու Կոմիտաս եղանակը կը յօրինկէր երգին... , ու Հայաստանի լեռ-  
ները պիտի արձագանգէին :

Լօ՛, լօ՛, լօ՛, սէգ Սիփանայ սարին վրայ  
կտրիճներ շտապով գալիս ե՛ն միանում... ~

(Շար.)

Կ. Ս.

**Ք Ա Ռ Ե Ա Կ Ն Ե Ր**

Եկան, եկան անցկացան,  
Դարեր եկան անցկացան.  
Երկրիս գմբուխս դաշտերից  
Ինչքան ազգեր անցկացան:

❖

Գիշերը մութ բոց լինի,  
Ցերեկը ցարս բոց լինի.  
Փակուած, փակուած ճամբէք,  
Միայն թէ բաց բոց լինի:

❖

Համբից անցնող լինէի,  
Ծարաւ ճամբորդ լինէի.  
Ազիրներից քո անմահ  
Անվերջ, անվերջ խմէի:

❖

Ցաւ ունեմ, ցաւ ունեմ,  
Այնքան խորունկ ցաւ ունեմ.  
Մինչեւ դռներդ բացուեմ  
Արդէն մեռած կը լինեմ:

❖

Հիմա ծաղկած հանդերսւմ,  
Մանուկներ են վազվզում.  
Ինչքան մանուկ է անցել,  
Հանդը՝ ջահել իր սեզում:

❖

Ե՛տ դառէ, ե՛տ դառէ,  
Գարնան օրեր ետ դառէ,  
Մանկան ժպտով ու սիրով,  
Ինձ հայրենի տուն տարէ:

❖

Որպէս մի շիբ քո շողից,  
Տէ՛ր, ես ծնուած իմ մօրից.  
Ինչքան զցիր դռնէ-դռն,  
Լայս օրերի ետեւից:

Լ Ե Ւ Ռ Ն Բ Ա Ռ Ո Ւ Ն Ի

ԱՐԱ ՍԵՒՈՒՄԵԱՆ

**ՎՏԻՏ ԵՆ ՄԱՆԻՇԱԿՆԵՐՍ...**

ԵՐԱԶՆԵՐ

- Փայնզգոյն երազներ կը հիստենք մեր շուրջ :
- Հագար խոստումներ, հագար գգուանքներ, ծաղիկ ու երգեր, յոյ-  
սե՛ր... , երազնե՛ր... :
- Փիշերները աշխարհի բոլոր ծաղիկներովը բեռնաւորուած պիտի վերադառնամ տուն... :
  - Ու ես անուշ երգերով, պիտի գլկեմ ծաղիկներդ :
  - Պարտեզիմ խորքը, ճիւղերով ծածկուած պիտի ըլլայ մեր տնակը, հեռու մարդոց ազմուկէն... :
  - Ու ես ազբիւր մը պիտի ստեղծեմ այդ ճիւղերուն մօտ, որպէսզի միայն իր կարկաշը լսենք :
  - Մտներու ճիւղերուն մէջէն, արեւի նոր ճառագայթներ պիտի ես-  
սին մեր սոսիւքուն մօտ... :
  - Ու մենք պիտի հաւաքենք ու կերտենք կեանքը երջանիկ . . . . .
  - Իսկ երբ ծնին փոքրիկները... :
  - Թեւերուս տակ պիտի պահեմ գանձնք :
  - Հիւզակին դիմաց, առբիւրին մօտիկ, լեակ մը պիտի կերտեմ անոնց համար... :
  - Իրենց թաթիկներով հարուածեն ջուրերը գուլալ... :
  - Վագեն կեանքի երգանիկ ճամբաներէն . . . . .
  - Ու երբ գայ կեանքի ճմեռը... , մեկնին փոքրիկները... :
  - Երբ ձիւնը իջնէ մեր մագերան... :
  - Երբ լեակին մէջ չլսենք անոնց գուարթ նվազը :
  - Ու մնանք առանձին հիւզակին առջեւ... , առբիւրին մօտիկ... :
  - Ես թեւերուս մէջ պիտի սեղմեմ քեզ... , իմ անգին Մակիս... : Պի-  
տի յիշենք մեր հին ու նոր օրերը վարդագոյն... :
- Հագար խոստումներ, ծաղիկ ու երգե՛ր... , հագար երազնե՛ր... :

ԱՄՊԵՐՈՒՆ ՄԷՋ

Թրջուած վերաբերումները կը յամձնենք սպասեակին ու կը գրաւենք փոքրիկ սեպն մը :

Երջանիկ գոյցեր լուս կը պարեն մամբրու աղօտ յոյսին տակ : Նուագն ու ծուխը մեղմօրէն կը բարձրանան ու կը խոսունին կարմիր լոյսերու կէս մթաւքեան... :

Թաց ձեռքերս կը դնեմ Մակիի թաց ձեռքերուն վրայ : Կը զգամ իր

ձեռքերում տախտիկներ խոնարհութեանը մէջէն: Կը զգամ թէ այդ տախտիկները ներս կը մտնէ երակներէս ու կը բարձրանայ դէպի վեր ու սիրտս անհանդարտ, կը տրոփէ Մակիի երջանիկ նայուածքներով խանդավառ:

- Պարեմի՛ք, Սերժ...:

Կը խոստովանիմ պարողներու մեզմ հասանքին:

Մակիի թաց մագերը երեսիս, շրթներս իր ականջին մօտ, կը փըսփըստ:

- Մակի, ակնի ուժգին... ակնի ուժգին սեղմուէ կը ծփիս...:

Խոստովանած անեղ գայգերու... Կ'օրօբուիմք: Հոգ չէ թէ թաց են մեր կոշիկները: Տաք սրտերով գրկած ենք զիրար ու մոռցած աշխարհը:

Շրթներս կը դնեմ Մակիի նակատին: Կգակիս վրայ կը զգամ իր երկար թարթիչներում արագ շարժումները: Սիրտս ուժգին կը տրոփէ...: Կը զգամ իր մարմնին արագ ծանրութիւնը թեւերուս վրայ...: Մակի ուժասպառ է:

- Կարծես նոր կը ծնիմ, Սերժ: Կը կարծէի թէ հասկցած էի սիրոյ գաղտնիքները... միջնորդ սիրտս սիրոյ խաղաղութեամբ էր լեցուած միայն: Հիմա կը զգամ թէ տարբեր է սերը... անուշ, մեղմ, նման մեզմ ազբիւրի մը... նման մեզմ գեփիւռին, որ կը վազէ նիւզերուն մէջէն... Ո՛հ, Սերժ, մի՛ ընդմիջեր զիս, թո՛ղ տուր երազե՛մ, վերանա՛մ... ասքիմ այդ անուշ ամպերում մէջ... Ահա, անծանօթ ձեռքեր գրկած են զիս ու կը տանին հեռու... հեռու... չեմ գիտեր ուր, բայց երջանիկ եմ: Թո՛ղ չկենան նաւրու կէտիս... թո՛ղ միշտ թռիմ ու տանիմ... տանիմ զիս ամպերում մէջէն...:

- Այո՛, Մակի, ամպերում մէջէն... գէպի երկնքի անուշ կապոյտը, հեռու Կորթոյց սեւ սրտերէն...: Հոն՝ ամայի ամպ մը պիտի գտնենք, անմարդաբանի ու անեղծ: Պիտի ընկաղմանիմք այդ երազ ամպին մէջ... ու երեշտակները իրենց տաւիղներով շրջապատած մեզ, պիտի երգեն երկնային անուշ երգը սիրոյ...: Ու ես երկու սպիտակ ու կայտառ ճծայգներ պիտի լծեմ մեր երազ ամպին, թո՛ղ տանիմ մեզ հեռու... հեռու այս չար աշխարհէն...:

Այլեւս չենք խօսիր, չկանք... Ամպերու մէջ ենք ու սպիտակ ճծայգները կը տանին մեզ, կը տանին դէպի ազբիւրը սիրոյ... ազբիւրը երազի...:

Յանկարծ կը կտրի սանձը, ճծայգները կ'երթան կորուսիլ երկնքի անհունին մէջ... իսկ մենք կը վերադառնանք դէպի չոր աշխարհ: Նուագը վերջացած է:

Կը վերադառնանք մեր սեղանը:

Մակի կը ժպտի ու կ'ըսէ.

- Ձեռ գիտեր, ուր տարին զիս էու սպիտակ ճծայգներդ, Սերժ:

- Գիտեմ, Մակի: Ամպերում մէջ էի...:

Խմիչքի շիշը կը մօտեցնեմ բաժակներում ու կը լեցնեմ առատօրէն:

Մակի կասկածաւ կը նայի աչքերուս:

- Արդէն գիտեցիք եմ, Մակի: Գիտեցիք ազբիւրի կարկաչէն, գիտեցիք ճծայգներու ու ամպերու վազէն...: Գիտեցիք եմ, Մակի, թու աչքերուդ կրակէն, թարթիչներուդ շոյանէն...: Ու կ'ուզեմ սիրոյդ ու ալֆօյի գիտելութիւնները խառնել իրարու...:

Բաժակը կը մօտեցնեմ շրթներուս: Ալֆօյի տախտիկներ կը բարձրանայ վեր ու կը լսեմ բարձրի մեզմ հարուածներ ականջներուս մէջ...: Կը

դիտեմ շուրջս... պզտոր կը տեսնեմ աչքերս: Ո՛հ, ի՞նչ գեղեցիկ է Մա-  
կին այդ անորոշութեան մէջ...:

Կարմիր լոյսերը խառնուած սեւին... ծուխեր ու ալօլ... ու Մա-  
կին ստուերի մը նման բարակ, խառնուած է բոլորին...: Ժպիտ մը անուշ՝  
չբռնեց վրայ... նայուածք մը անծանօթ՝ աչքերուն մէջ...: Կը յիշեմ  
իրենց պարտէզը, անձրեւին տակ...: իր խօսքերը, իր նայուածքը...: նայ-  
ուածքը կրճատ ու ծարաւ...: տեսչանքով ու ազաչանքով լեցուն...:

Ո՛հ, ի՞նչ խեղճ էի քս... ի՞նչ խեղճ...:

Մ Ք Ո Ւ Ք Ի Ի Ն Ը

Գիշերուայ մթութեանը մէջ անխօս կը փակնէ: Մեր սրտերը մեղմ  
տրտփումներով կը խօսին իրարու հետ: Ո՛հ, ի՞նչ հեռու է Մակինեց աու-  
նը...: ի՞նչ երկար համբան...:

Կը հասնիմք: Կը բանայ պարտէզին դուռը ու կողմնակի դռնէ մը կը  
մտնենք իր յարկաբաժինը:

Մակի կը գոցէ դուռը ու ուսերէն վար կը սահեցնէ վերարկուն...:  
Դուրսէն, փողոցի լոյսը կիսովին լուսալոյսած է միջանցքը:

Մակին հիմա, տեսչանք մըն է ինծի համար...: Կը մտնեմ...: ու  
մտնեմք՝ իր ակնշնչեցումն հոսին, շրթներս կը միացնեմ իր շրթներուն...:  
Առաջին համբոյրն է, առաջին խեղճ ու անուշ համբոյրը՝ լի կարմիր երակ-  
ներով...: Գունաւոր բարձեր կը քոչին մտնիս մէջ...: ձեռքերս աստիճա-  
նաբար կ'իջեցնեմ վար ու կը հանգչեցնեմ Մակիի մարմնին վրայ...:

- Մակի՛...: Մակի՛...:

- Ա՛հ, ո՛չ հոս, Սերժ...: Երբեք սենեակս...:

Կը մտնենք սենեակ: Մթութիւն: Զկայ փողոցի տկար լոյսը ու Մակի  
կը լուսաւորէ սենեակը:

Ելեկտրական լոյսի գորութիւնը կը խրաչեցնէ գիւ: Կարծէք մերկ կը  
գգամ ինքզինքս, յանցաւոր...: Ձեռքերով կը փակեմ աչքերս, կ'ուզեմ վե-  
րաշառնայ մթութեան...:

- Ինչո՞ւ, Սերժ, ինչո՞ւ կը փակես աչքերդ: Եկուր գրկէ գիւ...:

Կը բանամ աչքերս: Մակին ընկողմանած ներմակ բարձերու վրայ, ին-  
ծի կը սպասէ:

Ճերմակ բարձեր...:

Ո՛չ, Մակի, ո՛չ: Այդ բարձերը մեծ ստեղծեցիմք: Ինչո՞ւ խորատ-  
կեմք երակները...: Ինչո՞ւ վերադառնամք հին գոյներուն...: Հոս՝ մթու-  
թեան մէջ, ճշմարտութիւնը կարմիրով էր ծածկուած...: Հոս՝ լոյս աշ-  
խարհի մէջ, ես տեսայ ներմակ բարձերդ...: Կ'ամչնամ Մակի...: ի՞նչ  
մերկ եմ մեր սրտերը...: ի՞նչ ազատ...:

Ափերսու մէջ կ'առնեմ Մակիի ձեռքերը...: կը համբուրեմ իր տկար  
մատները...: մատները միայն...:

- Մակի՛...: Մակի՛...: Բոզ մնամք ամպերու մէջ...: ազգիւրի  
մտ...: Ա՛հ, ի՞նչ լաւ էր հան...: Նժոյցներուն հոսին, արեւի ճառագայթ-  
ներու շաւիղին վրայ...: Ես կ'առնեմ մթութիւնը, Մակի, կ'առնեմ...:

Ճ Ի Ի Վ Ե Ր

Գարուն է:

Մարգիկ դուրս եմ քափուած իրենց տուններէն ու կը վայելեմ ընու-



թեան շնորհները: Մեզմ տրելը, զեփիւռն ու ծիծեռնակները վերադարձած են իրենց հին տունները...: Բնութիւնը կը ժպտի...:

Գետափին ենք: Մակին ու ես կը դիտենք կարապները, որոնք մեզմօրէն կը սահին գուլպա բարին վրայ...: Մեր մօտ ծեր կարապ մըն է նըստեր, տխուր աչքերով կը դիտէ իր ընկերներուն մեզմ վագէր: Երբեմն, կը բարձրացնէ աչքերը դէպի երկինք, կը թափահարէ իր յոգնած թւերը, ու տկար, շատ տկար ձայն մը կը հանէ իր կողորդէն...:

Մակին ու ես՝ միւս կարապներուն պէս, երիտասարդ ենք ու անագ: Նոր բացուած վարդի կակոններու նման՝ երջանիկ: Նստած ենք Բարէ նըստարանի մը վրայ ու կը դիտենք բնութիւնը...:

- Գարունը... իմ կեանքիս առաջին գարունը միայն դիմաւորեցինք, - կ'ըսէ Մակի - : Առաջ չէի գգար գարունը: Զէի լոնր բնութեան շըշուկները...: Տե՛ս, Սերժ, ի՛նչ գունագեղ է այդ ծառը...: փայլուն ու կանաչ տերեւներու կողքին, ներմակ ծաղիկներ են ծլեր...: Իսկ կակաչները գրկած են իր բունը...: Օդին մէջ բայր մը կայ...: անուշ ու անծածօք...:

- Այդ գարունն է որ կը բուրէ, Մակի: Գարունը, որ ծնունդ տուաւ մեզմ գեփիւռին...: Տե՛ս, դաշտերու խիստ խոտերուն մէջ, ինչպէ՛ս կը վազէ գեփիւռը...: Ճիշդ անկարգ մանչակի մը պէս, մերթ դէպ առաջ, մերթ դէպի վեր...: Տե՛ս, տե՛ս, փախաւ ու չեն շարժիր խոտերը...: Ահա՛, Մակի, գնաց գեփիւռը հեռուն, ծլած ծառերու վրայ, որպէսզի նոր բայրեր կաւաքէ մեզի համար...:

Մեզմ գեփիւռը կը վերադառնայ ու կը սուգուի Մակիի երկար մագերան մէջ...: Մթնայրտը կը լեցուի ծիլերու ու ծաղիկներու անուշ բայրով...: Մակի գլուխը կը դնէ ուսիս ու կը փսփսայ.

- Գարունը միայն բնութեան մէջ չի ծնիր, Սերժ, այլ ծաղկած սըրտերու մէջ ալ...:

Լուռ կը դիտենք կարապները: Ունեք խմբովին, ունեք առանձին. կը սահին ջուրին վրայ: Ունեքի մը կախած է իր ճիւղերը վար ու հասած ջուրի մակերեսին: Երկու կարապներ ամփոփուած ռուսիի ճիւղերուն ետին, լուռ գրկած են գիրար...:

- Տե՛ս, Մակի, այդ երկու կարապները տուն մը ունին:

- Այո, Սերժ: Թէեւ միայն ճիւղերով են ծածկուած, բայց երջանիկ են անոնք:

Մեր կարապը, տկար կտուցովը կը հարուածէ ոտներս, բամ մը կ'ուզէ հասկցնել ինձի...: Ես չեմ գգար իր հարուածները: Սիրտս գարնանային բայրով է լեցուած...:

ՄԱՌՆԻՆ

Ինքնաշարժը կը աւրայ սափալքապտու ճամբուն վրայ:

Արեւը նոր է բաժնուեր հորիզոնէն: Իր տկար ճառագայթները կը ցըլան կապուտակ երկնքին վրայ ու կը մաշին յամրընթաց...:

Մակին ու ես կը դիտենք ինքնաշարժի պատուհանէն դուրս: Բլուրները մեզմօրէն կը դարձնեն իրենց երեսները: Մտերը գլուխին կայս՝ տարագորէն կը փայլին մեզմէ...:

- Մտածե՛ս ես, Մակի...:

- Կը մտածեմ այս խեղճ ծառերուն մասին, որոնք կը փայլին մեզմէ: Արեւն մէկը օր մըն է կարծես, որ կը հեռանայ մեր կեանքէն: Մին՝

գուարթ, միսը՝ տխուր: Մին ծաղիկներով լի, միսը չոր ֆիւզերով ազ-  
 ֆատիկ...: Տե՛ս, Աերժ, ֆիշոյ այսպէս կը վազեն օրերը: Մէկ, երկու, ե-  
 րեք... , ահա, շարաթ մը անցաւ: Ի՞նչ լաւ պիտի ըլլայր, կեցնել ինճա-  
 շարժը ծաղկած ծառի մը տակ, մնալ միշտ հոն, չտեսնել չոր ծառերը, սեւ  
 օրերը...:

– Ո՛չ ոք կրցած է կասեցնել այդ ինճաշարժին ընթացքը: Ծաղկած  
 ծառերէն պիտի ցատկենք չոր ծառերուն, մինչեւ որ վերջանայ ճամբան ու  
 հասնինք անայստային վերջաւորութեան մը:

Փոքրիկ ճամբան կը վերջանայ ու մենք կ'իջնենք ինճաշարժէն:

– Ահա, վերջացաւ ճամբան, – կ'ըսեմ մտելով կտրուած ծառի մը  
 քունին վրայ –: Այդ միւս ճամբան, աւելի երկար էր կարծես:

– Թեթևաւ: Մի քանի ծառ աւելի, կամ մի քանի ծառ պակաս, արիշ  
 ոչինչ...:

Բլուրի գագաթէն կը դիտեմ շուրջս: Կը տեսնեմ բոլոր ճամբաները:  
 Ոմանք ասֆալթապատ, ոմանք դժուարին զարձուած ֆնելով...: Ենթ ճամ-  
 քաներ, լայն ճամբաներ. հազար արեւեհներ կտրուած մացառներու մէջ... ,  
 ու ծառեր ինկած ընդհատուած ճամբաներու վրայ... , ծառեր պսկուած ի-  
 րենց արմատներէն...:

Երանի՛ր չբարձրանայի բլուրի գագաթը: Զտեսնէի ճամբաները... ,  
 ծառերը...:

#### ՁԵՌՔԵՐ

Անխիզն ձեռքեր կտրեցին երազիս քելը... , աղբիւրիս կարկաչը...:  
 Սպաննեցին սպիտակ նժուղներս... , քառագոյններս...:

Այդ ձեռքերը աստուածային չէին...:

#### ԱԻՍԶՆԵՐ

Մակին երազի մը պէս եկաւ ու խարկամֆի մը պէս փախաւ մօտէս...:

Տխուր օր մը, մանիշակներու պղտոր կայսրոյտին մէջ գտայ գայն... ,  
 ու անորաշ օր մը, խռոված հոգուով փախաւ մօտէս...:

– Հիւանդ հոգի մը ունիմ, Մերժ: Մտոցիր գիտ...:

– Մակի՛ր... , Մակի՛ր... , ըսէ՛, չե՛ս սիրեր գիտ...:

– Մտոցիր գիտ...:

Վազեցի ետեւէն: Զէի ուզեր որ կեանքի փոքորիկը ցրուէ անպարս.  
 երազներս...: Վազեցի ու գիշերը գտայ Մակին, հաճոյքի ու կիրքի մթու-  
 քեան խառնուած: Ընկողմանած գունաւոր բարձրու վրայ...: Մակի՛ս,  
 առանց մանիշակի... առանց երազի... , մերկ ու ազգաւ...:

– Երբանք, Մակի...: Մեկնինք այս սեւ վայրէն: Վերադառնանք մեր  
 հին աղբիւրին մօտ:

– Ենեք ու մաքուր առուակ, փախիր մօտէս: Քու շուրթդ չեն կրնար  
 լուալ անհանդարտ հագիս...:

Վազեցի դուրս այդ մթութենէն: Մակին իմ չէր այլեւս:

Ու ճամբան բազմութիւն մը մարդոց, չար ժպիտներ իրենց շրթնե-  
 րուն, կը վազէին դէպի Մակիի մթութիւնը...: Ո՛հ, տկար էի ես, անկա-  
 րող զսպելու անոնց վազքը...:

Փախայ հետու այդ մարդոցմէն: Գտայ տարածութիւն մը միօրինակ, աւազի բիւր հասիկներով ծածկուած...: Մտածումներս ցրուեցի հոն ու սանձեցի թռիչքը հագուայ:

Երկար ամիսներ օրրոս խանձեցաւ աւազներու վրայ: Կարծրացաւ փափուկ հոգիս..., ու վերազարձայ ալիքներու ու ժայռերու մօտ...:

ՆՈՐ ԺՊՈՏ

Մանիշակներու տխուր փունջ մը սեղմած ասիերու մէջ, կ'երթամ ժայռերու մօտ...:

Գիտեմ. Մակին մուշ անկիւն մը, գոյնզգոյն բարձերու վրայ ընկազմանած..., աներազ մթնալարտի մը մէջ, կը հայեցնէ իր գգայուն հոգին...:

Ես այլեւս յայտնով օրօրաւո՞ղ հին տղան չեմ: Մանիշակները պիտի տանիմ հոն, ուր թաղուած է Մակիի յուշը...:

Մթնշաղ է: Գաղափը կը ննջէ հանգարտ:

Ահա, մուրացիկ մը, յագնած օրուայ տագնուկէն կը բնամայ պատի մը տակ:

Կը մօտենամ: Ո՛չ, ծռվափի ծեր մուրացիկը չէ: Երիտասարդ ու տըզեղ, զանաւ մըն է ան:

Իմ ծեր մուրացիկս..., ի գո՛ւր էին խօսքերդ: Ի գո՛ւր վագեցի տուն ու ասիերու մէջ ամփոփեցի արեւի ճառագայթները տկար...: Տե՛ս, այսօր արեւէն այրած սիրտ մը ունիմ ու արեւէ ճառագայթ չի կրնար խաղալ հոգուայս հետ: Այդ ճառագայթները խաբկանք էին միայն... խաբկանք...:

Մտներու խիտ ճիւղերու մէջէն, արեւի ճառագայթները ինկած են ժայռերու վրայ: Խնդուք մը անհանձ կը փախչի կռկռոյտ...: Արեւի ճառագայթներ ալիքներու ու ժայռերու վրայ. ի՞նչ հեզանք...:

ՄԱՆԻՇԱԿՆԵՐԸ

Մանիշակներ... կապուտակ ու երա՛զ մանիշակներ, Մակին շատ կը սիրէր ձեզ: Բայց ես, ալիքներուն պիտի չշանձեմ ձեր փերթերը...:

Հոն առուակ մը կայ գարշահոտ ցուրերով, որու մոխրագոյնին խառնուած են կեանքի բոլոր գոյները: Ձեր տեղը հոն է, սիրուն մանիշակներ...:

Կը մօտենամ առուակին ու մանիշակները հաստիկ-հաստիկ կը նետեմ հոն:

Կը հետեւիմ անոնց վագփին...:

Ա՛հ, ի՞նչ խեղճ եմ ես, ի՞նչ անփարձ...: Այդ գարշահոտ առուակը քէպի ժայռերս կը վազէ ու կը խառնուի ալիքներու:

Կեղտոտ առուակը խառնուած ալիքներու...:

Ու փրփրոտ ներմակ ալիքներու վրայ, կապոյտ մանիշակները կ'օրօրաւին...: Երազի մը նման կը մօտենամ ժայռերու ու խաբկանքի մը նըման կը փախչին...:

Պէտք է բողբոմ ծովալը ու մեկնիմ: Ալիքները երբեք պիտի չզաղորին օրօրուելէ..., մանիշակները երբեք պիտի չտուգուին կապոյտին խորքը...:

Ալիքներ..., կանչող ալիքներ...:

Ափսո՛ս..., վտիտ են մանիշակներս...:

Ա. Ս.

(Շար. 2 եւ վերջ)

## Տ Ե Ս Ի Լ Ք

Տժգոյն շշուկ մը, որուն հեռանուազ հետքերով  
Պիտի երթաւ վերջապէս ալ ձայներէն յոգնասպառ .  
Ա՛հ ինչ քաղցր է մենութիւնն երբ կայ երազն անխռով,  
Ու երազիդ աստղերով հագուող գիշերն է պայծառ :

Երթա՛լ, մութին մէջ ուղիւղ, ուղիւղիւն պէս անշայտ,  
Որուն հոգին տենդն ունի դեռ վայրերուն հեռակայ,  
Ուր մեհեանին մէջ եի՛ն եի՛ն աստուշաննր եկը վառին .  
Երթա՛լ յամառ ու խելառ մշուշներէն ալ անդին...


Հոն, դայերէն դեռ ապրող ցեղին ձայնն է զիւցազում,  
Արշալուսցա՛ն վերստին այրարատեան երկունքով .  
Ուր քրմուհի մ՛ալ շքեղ բացեր է ծոցն հովերուն,

Ու կը պարէ խելագար աստուածներու մագանքով .  
Կ՛առնէ համբո՛յրը կարծես դեռ չծնած քաջերուն,  
Մինչ կը գիտեն գայն անշարժ, հայոց տիկնայք փափկառուն :

Պիտի երթա՛մ մութին մէջ, գինովի պէս վերջապէս...

ՓԱՆՈՍ ՃԵՐԱՆՆԱՆ

Պէտրո՛ւք 1965



**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐՈՂՆԵՐՈՒ**

**ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ**

(ՅԵՏԱԴԱՐՁ ԱԿՆԱՐԿ)

Երբ պայթեցաւ պատերազմը, Մտալին, կուսակցութիւն եւ խորհրդ. գրողներու Միութիւն, արդէն իսկ հոգերանօրէն պատրաստած էին ժողովուրդը՝ «խորհրդային հայրենիքի համար զոհուելու» զաղափարին:

Զօրակոչի ենթարկուած գրողները ծաղկեցուցին պատերազմի գրականութիւն մը, նկարագրելով ճակատը պանըւողներուն կեանքը, թշնամի յարձակումներուն դէմ մղուած հերոսական պայքարները, քաղաքայիններու ստորերկրեայ գիմադրութիւնը, գինուորներու միասնականութեան ոգին: Թերթերը ամէն օր կը հրատարակէին բանակայիններու նամակներ, որոնք վստահութիւն կը ներշնչէին քաղաքայիններու եւ անոնց մէջ կ'ամբողջէին վերջնական յաղթանակի հաւատքը:

Պատերազմի ընթացքին, գրականութենէն ներս արտօնուած ամէնէն գլխաւոր նորութիւնն այն եղաւ, որ սկսան քաղաքներուի ն. Միութեան բաղկացուցիչ ազգերու տեղական-ազգային զբաղումներն ալ՝ ընդհանուր խորհրդային հայրենասիրութեան զգացումին հետ զուգահեռաբար:

Այս բացառիկ արտօնութեան զրդա-

պատճառը պարզ է: Յամենայն դէպս, հետեւանքը այն եղաւ, որ մինչ այդ մտայութեան մասնուած ազգային հերոսներ կեանքի կոչուեցան պատմական վէպերու մէջ, ազգայնաշունչ հին հեղինակներու գործերուն հրատարակութիւնը արտօնուեցաւ: Մէկ խօսքով՝ առիթէն օգտուելու ուղղող ազգերը՝ կրցան օգտուել:

Ինչ կը վերաբերի Հայաստանի, առանց վարանումի կարելի է հաստատել, որ պատերազմի տարիներուն ընթացքին հրատարակուած գիրքերուն թիւը եւ որակը ուղղակի հիանալի է: Նախ՝ Մասունցի Դաւիթի եւ մեր ժողովրդական գիւցազնավէպի կոթողային հրատարակութիւններն ու յարակից ուսումնասիրութիւնները՝ Ակադեմիկոս Օրբելիի հրատարակութեան տակ, հայ ժողովրդական գիւցազնավէպի հազարամեակին առթիւ (1): Մանուկ Աբեղեանի «Հայոց Հին Փրակա-

(1) Արդարամտօքիւնը կը գտնանք յիշատակի այստեղ, որ մեր դիւցազնավէպի 1000-ամեակը եջիլու որոշումը տրուած էր 1938-ին, եւ մասնաւոր յանձնարարութեամբ մը կազմուած՝ կազմակերպելու համար ինքնուրուի մեծ ծրարակութեամբ այս առթիւ կատարուելիք երեսուցակութիւնները:

նութեան Պատմութիւնը, Ստ. Մայիսա-  
եանի «Հայերէն Բացատրական Բառա-  
րան»ը, Հր. Աճառեանի «Հայոց Լեզուի  
Պատմութիւն»ը եւ «Հայոց Անձնանուն-  
ների Բառարան»ը, Մաննդեանի «Միւս-  
րոպ Մաշտոցը եւ Հայ Ժողովուրդի պայ-  
քաբը կուլտուրական ինքնուրոյնութեան  
Համար», Ա. Տէրտէրեանի «Հայ Հայրե-  
նասէր Գրողներ»ը, Ստ. Լիսիցեանի «Ազ-  
գապահան Հարցարան»ը, եւ այլն:

Ի Հարկէ, միամտութիւնը կարելի չէ  
ունենալ կարծելու, թէ այս գիրքերը  
պատաստութիւն սկսան այդ մի քանի տա-  
րիներուն. սակայն փաստը այն է, որ  
Հրատարակուեցան 1939-45 տարիներու  
միջեւ: Եթէ պատերազմը պայթած չըլ-  
լար, կարելի չէ վստահարար պնդել որ  
ասոնցմէլ գոնէ մի քանի հատը Հրատա-  
րակութեան արտօնութիւն կը ստանա-  
լին: Եթէ Հարցական նշանի մը գոյու-  
թիւնը ընդունինք վերը յիշատակուած  
հրատարակութիւններէն մի քանի հա-  
տին վերաբերմամբ, Հարցը կը տարբե-  
րի, սակայն, Հայ գրականութեան դա-  
սական այն հեղինակներուն Համար, ո-  
րոնց գրքերու հրատարակութիւնը ար-  
տօնած չէր մինչ այդ, եւ որոնք մա-  
տուցուեցան Հայաստանի Ժողովուրդին՝  
1939-1945 տարիներուն. — Խաչատուր Ա-  
բովեան, Մոսէս Խորենացի, Միքայէլ  
Նալբանդեան, Բաֆֆի, Մերենց, Գրի-  
որ Զօհրապ, Կորիւն, Ռաֆայէլ Պատ-  
կոնեան, Մուրաջան, եւ այլն:

Առանց մոռնալու, ի Հարկէ, ապրող  
հեղինակներէն՝ Գերենիկ Դեմիրճեանի  
«Վարդանանք»ը, Ստ. Զօրեանի «Պարզ  
Թողաւոր»ը: Ու Ա. Իսահակեանի,  
Յովհ. Շիրազի, Ա. Վշտունիի, Սարմե-  
նի, Ս. Տարօնցիի, Գ. Սարեանի, եւ շատ  
ուրիշներու շարքին եւ արձակ գրու-  
թիւնները: Առանց մոռնալու նաեւ,  
Թարգմանական գրականութեան մէջ, ոչ  
— ոռու հեղինակներու ալ գործերու Թարգ-  
մանութիւնը Հայերէնի:

Բ. Աշխուրհամարտը, որ այնքան  
սուղի նստու Հայաստանին՝ իր խլած  
Հարիւր Հազարաւոր ծողիկ հրետասարդ-  
ներով, միւս կողմէ, սակայն, գերակշիռ

չըլնան մը Հանդիսացաւ Հայ ազգային  
գրականութեան, ազգայնաշունչ վէպե-  
րու եւ լատտոտեղծութիւններու ծաղիկ-  
մի եւ Հայ գրական գրողներու գործե-  
րուն Հրատարակութեան տեսակէտէն:

•••

Հիթլէրի տապալումէն ետք, յաղ-  
թականներուն մէջ մեծագոյն յաղթակա-  
նը կը Հանդիսանար Ստալին, շնորհիւ՝  
Կալթայի Ժողովին մէջ տրուած որոշում-  
ներուն:

Ոչ աւելի ոչ քան 1946 թուականը,  
սակայն, Խ. Միտիւսեան եւ իր նախկին  
գաշնակիցներուն միջեւ յարաբերութիւն-  
ները կը սկսէին յարուիլ եւ ձեւ ու ժար-  
մին կ'առնէր «պազ պատերազմը» կամ  
«Վիզերու պատերազմը»:

1946 տարուան Մարտի վերջերուն,  
Ստալին կը յարարարէր «Ետնդիւշըտ  
Փրէշ» գործակալութեան թղթակցին, որ  
Հանրային կարծիքը պէտք է ծաւալուն  
հակաքարոզչութիւն կազմակերպէ «նոր  
պատերազմի մը Հրձիգներուն» դէմ՝ յա-  
նուն խաղաղութեան արահետման: «Պա-  
տերազմի Հրձիգներուն իւրաքանչիւր  
յարձակողականը պէտք է իր հակապր-  
ձակողականը ստանայ: Այսպիսով՝ Հնա-  
բաւոր կ'ըլլայ ատենին զիմակազերծ ը-  
նել պատասխանատուները, որոնց Հնա-  
բաւորութիւն չի տրուիր որ խօսքի ազա-  
տութիւնը իբրեւ զէնք գործածեն խաղա-  
ղութեան շահերուն դէմ»:

«Պատերազմի Հրձիգներուն» դէմ  
պայքարելու այս պարտականութիւնը ա-  
ռաջին հերթին կը ծանրանար խորհրդա-  
յին գրողներու ուսին: Ասոնց մէջ գտնը-  
ւեցան անհատներ, ինչպէս օրինակ՝  
Կոնստանդին Միմոնով, որոնք, տառա-  
ցիօրէն գործադրելով Ստալինի պահան-  
ջը, իրենց գրական աշխատանքները մէկ-  
դի դրին եւ լծուեցան «երէկուան դաշ-  
նակիցներու խարբայութիւնը գիմազեր-  
ծելու» գործին:

Այս բոլորը նախատեսել կու տային,  
թէ դրական Հարցերու վերաբերմամբ,  
խորհրդային ղեկավարութեան քաղաքա-

կանութեան մէջ կարելոք եւ հիմնական փոփոխութիւններ տեղի պիտի ունենան:

Եւ արդարեւ, ուսմբը պայթեցաւ 1946 Օդոստոսի 14-ին, երբ հրատարակուեցաւ Պ. Միւսիւթեան Կոմ. կուսակցութեան կեդր. կոմիտէի որոշումը՝ Լենին-կրատի մէջ հրատարակուող երկու ամսաթերթերուն՝ «Չվեզդա»-ի եւ «Լենին-կրատ»-ի մասին: Այս երկու ամսաթերթերը կ'ամբաստանուէին ազակուսակցական յորուածներ հրատարակած ըլլալու յանցանքով:

Յաջորդ օրը, Օգոստոս 15-ին, Լենինկրատի կուսակցական դրոժողի մարմնի եւ դրողներու ժողովին մէջ, Ա. Ժաւանով կը կարդար վերոյիշեալ երկու ամսագիրներու «չեղում»ին պատճառով պատրաստած իր նշանաւոր դարձած դեկլարումը: Ա. Ժաւանով Կեդր. կոմիտէի քարտուղարի պաշտօն ունէր, եւ կը նըկատուէր Ստալինի բանբերը: Իսկ իր զեկուցումը եւ իր Հանձն եղբակցութիւնները, կարելի է ըսել, Համամիութեան կան դրողներու Համագումարի մը քըւէսիկած որոշումներուն Համագոր նշանակութիւն ունեցան:

Մատնանշուած երկու ամսագիրները Հնուէ էին բացառութիւն կազմելէ՝ նըւազ-կուսակցական ոգիով յորուածներու հրատարակութեան տեսակէտէն: Սակայն կարելի է չէր գրական ամբողջ մամուլը ինդրոյ առարկայ դարձնել. իսկ, միւս կողմէ ալ, անհրաժեշտ էր քաւութեան նոխագներ կտնել՝ այս վերլիներուն օրինակով՝ միւսները կարգի հրաւիրելու Համար: Հարցն այն է, որ պատերազմի աւարտումէն ետք, որու ընթացքին Հայրենասիրական (խորհրդային) զգացումսած էր ոչ միայն օրաթերթերու, այլ նաեւ գրական ու միւս բոլոր պտրբերթերթերուն մէջ, ընթերցողները Հանոյքով կը վերադտնէին աւելի մտիմիկ, աւելի անձնական ու աւելի մարդկային թեմաներ: Միւս կողմէ, խորհրդային ընթերցող Հասարակութիւնը ուրիշ «վըտանդաւոր» միտում մը եւս սկսած էր ցոյց տալ. Հետզհետէ աւելի մեծ Հետա-

քրթրութիւն կը յատնարերէր արեւմտեան մշակոյթի վերարբմամբ:

Ժաւանով, ուրեմն, իրր մեկնակէտ ունենալով «Չվեզդա» եւ «Լենինկրատ» ամսագրերուն մէջ հրատարակուած բունաստեղծուէի Աննա Ախմատովայի եւ երդիծարան Միխայիլ Չոսչենքոյի գրութիւնները, կը իմբագրէր իր նշանաւոր տեղեկագիրը, որուն մէջ պարփակուած սաստերն ու ջուզմունքները, ինչպէս ըսինք, ուղղուած էին խորհրդային բոլոր դրողներուն: Այս՝ այսպէս ըլլալով Հանդերձ, անկարելոք չէ Հարցնել, թէ ինչո՞ւ Ախմատովայն եւ Չոսչենքոն եղան քաւութեան նոխագները:

Բանաստեղծուէի Աննա Ախմատովայ (2), տարիներ տեւող լուսթենէ ետք, սկսած էր նոյ ժողովրդականութիւն շահիլ զուտ անհատական ընոյթ եւ մելամաղձոտ շէշտ կրող իր բանաստեղծութիւններով: Յեղափոխութեանէն աւաջ՝ գրական դէմք էր արդէն. Հետեւաբար, յեղափոխութեան սերունդի գրող ըլլալով, կարելի էր, առանց մեծ անյարմարութեան, խաչը Հանել զայն, թէ՛ իր բանաստեղծութիւններուն եւ թէ՛ իր խորհրդանշած շրջանի գրական «մոտրումները» պատապարտելու Համար: Իսկ Չոսչենքո կրդիծարան էր. նուազագոյնը որ կարելի էր ըսել Ստալինի Հոտցիտլոստական ուշայիղմի վերարբմամբ, այն է՝ թէ՛ ուշայիտական երգիծարանութիւնը տեղ չուներ այնտեղ: Մտնաւանդ որ

(2) Հետաքրքրական է Յիլ այս բանաստեղծուիին վերարբմամբ, որ վերջերս «Լիտերատուրայա Կազեսաչի» մէջ լոյս տեսած են իր քարգմանութեամբ իին եզիպտական բանաստեղծութեան Ամուշներ, սրանց մասին քովասմեով կ'արտայայտուի վանագն Դաւթեան «Գրական թւրթ»ի 1985 Գեկտ. 10 թիւին մէջ: - Ա. Ախմատովայ պարգեւտրուած է Հայաստանի Գերագոյն Սովետի զատուագրով՝ հայկական գրականութեան քարգմանելու գործին մէջ իր մատուցած ծառայութիւններուն համար (1968-ին Մոսկուայի հայկական տասնօրեակի աւարտումն են):

Ձուսննքօ, իր պտտմուսածքներուն մէջ, զբռնի քանի մը հարուածով կը գծէր խորհրդային ընկերութեան ու վարչակարգին ծաղրանկարը: Միւս կողմէ, Ձուսննքօյի պատրուակով, հնարաւորութիւն կը տեղծուէր խարազանելու «սոցիալիստական ունեւոր» ստեղծումէն եւ սահմանումէն առաջ գոյութիւն ունեցող զբրական գանաղան գպրոցները:

Տրուած ըլլալով Ա. Ժոսանովի տեղեկագրին կարեւորութիւնը, անհրաժեշտ կը զաննէք տալ կարեւոր մէջքերումներ: Արդարեւ, պէտք չէ մտահան ընել, որ 1948-էն մինչեւ 1953, այսինքն՝ մինչեւ Ստալինի մահը, Ժոսանովի սահմանումներն ու ցուցմունքներն են որ պիտի նկատուին խորհրդային ամբողջ տարածքին վրայ ծաղկող զբրականութեան անառարկելի ուղեցոյցը. իսկ 1953-էն մինչեւ 1954, այսինքն՝ մինչեւ խորհրդ. գրողներու երկրորդ համագումարը՝ պիտի շարունակուին նկատուելի թէեւ փոփոխութեան կարօտ՝ բայց եւ այնպէս տակաւին պաշտօնական ուղեցոյց:

...«Մ»-ը պահուած է գործուած այս սխալներուն եւ թերացումներուն բուն արմատը - կը հարցնէր Ժոսանով իր տեղեկագրին մէջ: Թաքնուած է այն իրողութեան մէջ, որ այս երկու պարբերութիւններուն խմբագրատեղիները, մեր խորհրդային գրականութեան արուեստաւորները, եւ նոյնիսկ Լենինկրատի մէջ զազափարարանական մեր ճակատին վարիչները մոռացութեան են տուած գրականութեան մասին լենինիզմի հիմնական սկզբունքներուն մէջ մասը: Շատ մը գրողներ, նոյնիսկ խմբագրական պատասխանատու պաշտօններ վարողներն, կամ Գրողներու Միութեան մէջ կարեւոր պաշտօններու վրայ գտնուողներէն, կը խորհին թէ քաղաքականութիւնը կառավարութեան, Կեդր. Կոմիտէին վերապահուած գործ մըն է. իսկ իրենք՝ գրչի մարդիկ, քաղաքականութեան հետ գործ չունին: Կը խորհին, որ եթէ զիբք մը գրբուած է. լաւ ոճով ու արուեստով՝ արժանի է հրատարակութեան, հոգ չէ թէ

անոր հիւանդաւորն տողերը կրնան խոտմել ու թունաւորել մեր երիտասարդութիւնը: Կը պահանջենք, որ մեր ընկերները - գրական վարիչներ ու հեղինակներ - իրենք իրենց համար որպէս առաջնորդ առնեն ա՛յն, առանց որուն. խորհրդային վարչակարգը չի կրնար ապրիլ՝ այսինքն՝ քաղաքականութիւնը. որպէսզի մեր երիտասարդութիւնը գաստիարակեն ո՛չ թէ անհոգութեան եւ անտարբերութեան ոգիով, այլ՝ յեղափոխական եռանդի ոգիով (...)

...«Լենինիզմի հիմնական սկզբունքն այն է, թէ մեր գրականութիւնը չի կրնար ապա-քաղաքական ըլլալ. չի կրնար ներկայացուիլ որպէս զարուեստը արուեստի համար», հասկա՛ կոչուած է ընկերային կեանքի մէջ վճռական առաջնորդողի գեր խաղալու: Այստեղէն ալ կու գայ՝ գրականութեան ներս կուսակցական ոգիի լենինեան սկզբունքը, որ Վ. Ի. Լենինի ամենաթանկագին նուէրն է գիտութեան ու գրականութեան (...)

...«Մանք տարօրինակ կը դաննեն այն պարագան, որ Կեդր. Կոմիտէն այսօր խիստ միջոցներ ձեռք առաւ գրական հարցի մը մէջ: Այսպիսի բանի վարժուած չէինք մեր երկրին մէջ (...): Կեդր. Կոմիտէն կը ծրարէ աշխատանքի մեր միւս բոլոր մարզերուն մէջ եւս զարկ տալ զազափարարանական պայքարին: Գազափարարանական ճակատին վրայ կարեւոր ճեղքուածքներ, կարեւոր թերացումներ երեւան ելած են վերջերս... ղեռ չհաշուած՝ «ԶՎԵՂՊԱ» եւ «ԼԵՆԻՆԻ» կրատք պարբերաթերթերուն մէջ պատահածը:

...«Ժողովուրդը խորհրդային գրողներէն կ'ակնկալէ զազափարարանական իսկական զէնքեր, հոգեկան սնունդ՝ իր սոցիալիստական կառուցումն ու մեր երկրին ազգային տնտեսական բարգաճումը իրականացնելու գործին որպէս օժանդակութիւն:

...«Մտորդային մեր գրականութիւնը կ'ուպրի ու պէտք է սպրի ժողովուրդին ու հայրենիքին ի շահ: Գրականու-



թիւնը ժողովուրդին վերաբերող խնդիր մըն է» (...): (3)

Ընդհանուր քննադատութենէն զերծ չմնաց նաեւ «բուրժուա» աշխարհը: Ժըտանով կը հաւատարմացնէր, թէ խորհրդադային յոփոքութիւնները մեծապէս անհաճոյ են «խօսքերիստիտաներուն» համար, որոնք, նախանձելով ընկերվարութեան օրէնքն օր անօր հմայքին, սուտ ամբաստանութիւններով կը զրպարտեն ՈՒՄԻՍԻՍԻՆԸ ու կը ջանան զայն ներկայացնել անհարգազատ լսելի տակ:

«Այս պայմաններուն մէջ, կը շարունակէր Ժտանով, խորհրդային դրակայնութեան վրայ պարտականութիւն կ'իյնայ մ'ը միայն հակա-յարձակման անց-նիլ» ընկերվարութեան եւ մեր խորհրդադային մշակոյթի զէմ կատարուած այս զըրուիլի ամբաստանութեան զիմազրելու համար, այլ նաեւ՝ սրբաբարեւ ըստ-ժողովան մշակոյթը, որ ճահահանաբութեան փտութեան վիճակի մէջ կը զըտանուի (...): Ժտանով խորհուրդ կու տար շխարհուի բուրժուական արուեստի եւ մշակոյթի արտաքին շողորուն երեւոյթներէն եւ մասնան չընել կրթք, որ անոր հիմքերը փտած են: Ուրեմն՝

...«Մի՞թէ յարմար է, որ մե՛նք, խորհրդային յառաջդիմական մշակոյթի ներկայացուցիչներս, մե՛նք՝ խորհրդային հայրենասէրներս, խաղանք բուրժուական մշակոյթի խնկարկուններու կամ աշակերտներու դէքը (...):»

Ինչպէս արդէն նշեցինք, Ժտանով, իր յայտ ընդհանրացումները կը հիմնաւորէր Զոսյենքոյի եւ Ախմատովայի օրինակներով: Որքան ալ հետաքրքրական ըլլայ այս երկուքին ամբաստանագրիւններուն բովանդակութիւնը, մեր այս սեղմակերպիւն մէջ բաւականանանք միայն տարով եզրակացութիւնը:

(3) Ֆրանսական վարչապետարանի ընդհանրապարտութեան կազմէ հրատարակուած Notes documentaires et études 1948 փետր. 5-ի թիւ 822 համարի մէջ Ժտանովի տեղեկագրի մարտնչական բարգմանութիւն (ֆրանսերէն լեզուով) հայտնուած:

...«Ճեռ դառնանք, Միջնադար վերադառնանք - կ'ըսէ Ախմատովայ: Կապիկին (4) վերադառնանք - կը պատասխանէ Զոսյենքո: Միջանկեալ ըսենք, որ երկուքն ալ ընդհանուր նախահայր մը ունին...»:

Կեդր. Կոմիտէի որոշման օւ Ժտանովի տեղեկագրին հիման վրայ, խորհրդային Գրողներու Միութեան նախագահութիւնը կը հրատարակէր բանաձեւ մը, որուն մէջ պարտաւանքի առարկայ կը դառնային բազմաթիւ ուրիշ գրողներ եւ հանդէսներու խմբագրիչներ եւս: Գրողներու Միութեան նախագահ Տիտանով իր տեղը կը զիջէր Պարէլեյին:

Գրողներու Միութեան նախագահութիւնը մատնացոյց կ'ընէր նաեւ, խորհրդային կարգ մը հանրապետութիւններու գրողներուն ազգայնական մըգատումները:

Ոչ ոքի ուշադրութենէն կրնար վրդվիլ, ի հարկէ, որ այս ամբողջ հոսուղու «Զվիզդա» եւ «Լեռնիկրտ» ամասթիթիթիով սահմանափակուած խնդիր չէր. այլ՝ համախորհրդային չափանիւր մը սկզբնաւորութիւնը կը նշանակէր. անհատականութեան ու ազգայնականութեան զէմ հայածանքի, ուշադիր պարզըննութեան շրջանի մը սկզբնաւորութիւնը: Մանաւանդ երբ յիշեցուի, որ իրարու ետեւէ հրատարակուեցան նաեւ՝ թատրոններու խաղացանկերուն, շարժանկարի արուեստին, երաժշտական ըստեղծագործութեան, եւ արուեստներու այլ մարդերուն վերաբերող համանման հրամանագրեր: Մամուլը սկսաւ աչալուրջ եւ դիկատարական ձեւով հակել գրական-գեղարուեստական ստեղծագործութիւններու «մաքրակրօնութեան» վըրայ՝ աննախընթաց նեղամութեամբ:

Հայաստանի մէջ, Կեդր. Կոմիտէի եւ Հայաստանի Գրողներու Միութեան խողովակով կարգախօսները ստեղծին փո-

(4) Կ'ակնարկէ Զոսյենքոյի մէկ պատմութեան՝ «Երկուքի մը արկածային գրութիւնները»:

խանցուած էին թէև, բայց ստացուած արդիւնքնեքը, ինչպէս կ'երևի, այնքան ալ զոհացուցիչ չէին Մոսկուայի աչքին, եթէ դասենք այն զեկուցումէն, որ Համախորհրդային Գրողներու Միութեան նախագահը՝ Փաղէեւ կարդացած է 1947 տարուան Յունիս 29-ին՝ ՍՍՌԿ Գրողներու Միութեան վարչութեան Արգ լիակատար նիստին:

...«Հայաստանում լոյս են տեսնում նոր երկեր, գրում են նոր բանաստեղծութիւններ. այս ամէնը կայ: Սակայն չի պայցւում հասարակական աշխուժ կեանքը: Հայ գրողների աւագ սերունդը քիչ է մասնակցում աշխատանքներին: Հայ ընկերները նոր հարցեր առաջ չեն բարձրացնում: Նրանց մամուլում քննադատութեան կրակը երբեմն ուղղուած է ո՛չ այն երևույթներին վրայ, որոնք պէտք է դադարաբան պայքարի կենտրոնում լինեն: (...) Բայց ինչո՞ւ Հայ ընկերները (...) չեն նայում, թէ ինչ է տեղի ունենում պատմական ճակատում, գրականադիտութեան մէջ, պատմափէշպերի բռնազաւթում, որոնք գրել են Հայաստանի ականաւոր գրողները: Արգեօ՞ք ամէն ինչ ճիշդ է մեկնաբանում Հայաստանի պատմութեան մէջ: (...) Միութեան կայմակերպութիւնը գտնում է, որ Հայաստանում չեն զբաղւում գրողների դաստիարակութեամբ (...): Մեզ պէտք է, որ ըստը ուժերը համախմբուեն իսկական քաղաքական հակառակորդների դէմ, լինի այն պապարակային յատկութիւնը, որի դէպքում կարելի է ճիշդ աշխատել»: (5)

Այս դիտողութեան հիման վրայ, Հայաստանի կոմ. կուսակցութեան Կեդր. կոմիտէն, 1947-ի Դեկտ. 30-ին «Սովետական Հայաստանի մէջ կը հրատարակէր որոշում՝ «Հայաստանի պարտիական կայմակերպութիւնների մէջ իդէոլոգիական աշխատանքը ուժեղացնելու միջոցառումների մասին»: Գրականութեան վերաբերող բաժնին մէջ՝

(5) Սովետական Գրականութեան Տարեգրութիւն. էջ 534:

« 1) Հայաստանի գրողների կարեւորագոյն խնդիրը համարել պապարակային բարձր երկերի ստեղծումը, որոնք արտացոլեն սովետական իրականութիւնը, մեր ժողովրդին դաստիարակեն սովետական հայրենասիրութեան, դէպի սոցիալիստական Հայրենիքը անսահման սիրոյ ոգիով:

« 2) Յանձնարարել Հայաստանի Սովետական գրողների միութեան վարչութեանը՝ ուժեղացնել պապարակային դաստիարակչական աշխատանքը Հայաստանի գրողների մէջ (...)

«Գրողներին ներգրաւել ակտիւ մասնակցութեան ուսուցողական կեանքում (...)

« 3) Աւաջարկել Հայաստանի Սովետական գրողների միութեան վարչութեանը՝ բարելաւել գրական-գեղարուեստական քննադատութեան վիճակը: Քննադատութիւնը պէտք է ցոյց տայ սովետական գրականութեան դրական փորձն ու յաջողութիւնները, եւ անհաշտ պայքար մղի դադարաբանութեան, Փորձալիզմի ու բուրժուական նացիոնալիզմի ունցիդիվիզմի (սխալի վերակրկում) դէմ գրականութեան մէջ: Անհրատելի է վրձնակաւորէն արմատախիլ անել մտերմական յարաբերութիւնների գրեւորումը գեղարուեստական գործերի վնասատութեան դրոժում, պայքար մղել բոլշևիզմի սկզբունքային քննադատութեան համար:

«Մամուլում մերկացնել արտասահմանեան դաշնակցական գրողներին, ուժեղացնել Հայ գործիչներին, որոնք քայքայիչ աշխատանք են կատարում արտասահմանեան հայկական գաղութներում (...):»

Հայաստանի գրականութեան պատասխանատուները, որոշ չափով թեթեւցրենելու համար Մոսկուայէն իրենց ուղղուած դիտողութիւններուն խտուութիւնը, ամբողջ 1948 տարին պիտի յատկացրեն փաստելու համար, որ իրենց հետաքրքրութիւնները սուսեւաբար միջազգային են, եւ ոչ թէ սահմանափակազգային:

Այսպէս՝ Հայաստանի մէջ 1948 տարուան Յունուար 25-ին կը նշուի Ուկրաինայի խորհրդայնացման 30-ամեակը. փետրուար 15-ին՝ «Գրական Թերթ»ը էջ կը յատկացնէ Վրաստանին. «Սովետական Գրականութիւն»-ն Եւ Արուեստ» ամսագրի Փետրուարի թիւին մէջ բաժիններ կը յատկացունին Ուկրաինայի եւ Վերաստանի. Մարտ 27-ին կը նշուի Մաքսիմ Գորբիի (մեռած՝ 1936-ին) ծննդեան 80-ամեակը. Ապրիլ 12-ին կը նշուի Երևան Թատրոնի Օտտոլովիչի ծննդեան 125-ամեակը. Մայիս 1-ին «Գրական Թերթ»ը էջ կը յատկացնէ Ալբրէյտսին. Մայիս 15-ին կը նշուի Ուզբէկ բանաստեղծ Ալիշէր Նավայի ծննդեան 500-ամեակը. Մայիս 30-ին Հայաստանի եւ Վրաստանի զբոյնները դիմում մը կը հրատարակեն՝ Աւելի ամբողջենք Հայաստանի եւ Վրաստանի զբաղանքը բարեկամութիւնը վերստացրով. «Սովետական Գրականութիւն»-ն Եւ Արուեստ»-ի Մայիսի թիւին մէջ բաժին կը յատկացունի լիտվական զբաղանքին. Յունիսին՝ մեծ շուքով կը նշուի Բելինսկիի մահուան 100-ամեակը. Հոկտեմբեր 2-ին կը նշուի իրացի գրող Ալեքսանդր Կոլտոնի ծննդեան 100-ամեակը. Դեկտ. 15-ին՝ Վալերի Բրիւսովի 75-ամեակը (Թէեւ, Հայ մշակոյթին մատուցած իր անգին ծառայութիւններուն պատճառաւ, անոր դարգութիւն է Վալերի Բրիւսովի դրնել ոչ-հայկական այս ցանկին մէջ). Դեկտ. 28-ին՝ լեհ գրող Միցկևիչի ծննդեան 150-ամեակը. Դեկտ. 31-ին «Գրական Թերթ»ը էջ կը յատկացնէ Բելառուսիային:

Այս բոլորին փոխարէն, մեծ շուքով պիտի տեսնուի Յ. Աբովեանի մահուան 100-ամեակը (Սեպտ. 22-24) եւ բազմիցս պիտի կրկնուի Յ. Աբովեանի մէկ խօսքը՝ «Օրհնեցէ՛ք առանձրի դալուստը. ինքնեքդ ապրեցէ՛ք եզրօր նման. սիրեցէ՛ք միմեանց»:

Սակայն, հակառակ այս բոլորին, 1948 Դեկտ. 15-17-ին Մոսկուայի մէջ զուգարուած Յ. Միլոթեան զբոյններու միութեան 12-րդ լիակատար ժողովը

այնքան ալ բուարարուած պիտի չզգայ «Զվեզդա» եւ «Լենինկրաս» ամսագրերու մասին համամիութենական Կեդր. Կոմիտէի որոշումէն յետոյ Հայկական, յատկապէս եւ զագախական զբաղանքութիւններու ցուցարբեած արդիւնքներէն: Հայաստանի կոմ. կուսակցութեան (1948), 15-րդ (1951) եւ 16-րդ (1952) Համագումարները պիտի շարունակեն յիշեցնել զբոյններուն, որ (...) «Համագումարը Հայաստանի զբոյնների անյուրաքանչեւ խնդիրն է համարում՝ վերացրել սովետահայ զբաղանքին մէջ եղած թերութիւնները, յաղթահարել արձակի լրջօրէն եւ մեղք, լրիւ կենսապարծել այն խնդիրները, որոնք սովետական զբաղանքին առջեւ դրուել են իդէոլոգիական հարցերի վերաբերեալ Համ. կոմ. պարտիայի Կենտկոմի որոշումներով՝ զբաղանքին բոլոր ժանրերում նոր, բարձր զաղափարական, դեղարուեստական լիարժէք ստեղծագործութիւններ տալու գործում, որոնք արտացոլեն սոցիալիստական շինարարութիւնը եւ սովետական մարդկանց կերպարը»:

«Հայաստանի Սովետական զբոյնների միութեան զեկալարութեան եւ պարտիական կազմակերպութեան կարեւորագոյն խնդիրը համարել՝ վերացնել զբաղանքին ազատութեան եւ մեղք, վերացնել զբաղանքի մատուցի լրջօր թերութիւնները, Միութեան մէջ ստեղծել զործարար բնույթի զբոյնների սկզբունքային քննադատութիւնն ու ինքնաքննադատութիւնը եւ վճռական վերելք ստեղծել սովետահայ զբաղանքին մէջ (...)» (6) (1951-ի Համագումարի բանաձեւերէն):

«Վճռական վերելք» ստեղծելուն՝ բոլոր զբոյններն ալ համաձայն են: Բայց այդ վերելքին համար անհրաժեշտ եղող միջոցառումն ստեղծածը իրենցմէ կտրուած չունի. այնք էլ զայ Մոսկուայէն: Եւ արդարեւ, կու զայ Մոսկուայէն:

(6) ԽՍՀՄ-ի Գրականութեան Եւ Արուեստի Կոմիտէի կողմէն. էջ 607:

1953 տարուան Մարտ Ե-ին:

1953 Մարտ Ե-ին մեռաւ գեղարվարուհիներու հայր՝ Ստալինը, իրեն հետ գերզման տանելով իր ամենազիրտութիւնն ու անսխալականութիւնը:

Բայց իր ժառանգութեան հարցը անմիջապէս շուժուեցաւ: Ինչ ալ ըլլար առաջնութեան համար սկսած ներքին մըրցակցութիւններուն արդիւնքը, դերակատարները - Մալենկով, Բուլկանին, Ռուչչեւ - ի հարկէ չէին կրնար ունենալ Լենինի եւ Ստալինի նման առասպելական անձնաւորութիւններ դասնալույսակնութիւնը:

Մինչև 1954 տարուան Դեկտեմբեր ամիսը (Գրողներու Բ. Համագումարի թուականը), գրական խնդիրներու մասին խուլ պայքար մը սկսաւ Ժողովուրդի մէջ ստեղծագործել ուղող գրողներու միջև: Այս հարցին մէջ՝ կուսակցութեան տեսակէտներու արասյայտութիւնը «Պրավդա»-ի խմբագրականները կը մտնէին: Այս խմբագրականներէն մէկուն մէջ (1953 Յունիս 9 - «Յաղթահարել դերականագիրտութեան եւ մեալը», շեշտը կը դրուի դասական գրականութեան ուսումնասիրութեան, մարքս - Լենինեան Էսթետիկայի հարցերու մէջ՝ բուսարար արդիւնքներու սովորութեան վրայ: Դժգոհութիւն կայ նաև գրական-քննադատութեան դէմ (որ մինչև այսօր ալ կը մնայ բուսական սովորին) ... «Որոշ քննադատներ ու գրականագէտներ, թրուուցիկ կերպով վերապատմելով ստեղծագործութեան գաղափարը, իրենց խնդիրն աւարտած են համարում, անուշադրութեան մասնելով տիպականութեան, գեղարուեստականութեան, վարպետութեան, լեզուի, ոճի, կոմպոզիցիայի եւ այլ հարցերը, այսինքն այն ամէնը, ինչը կազմում է արուեստի միտքն ու արեւը (...):» (7)

(7) Սովետսայ Գրականութեան Տարեգրութիւն. էջ 648:

Այս՝ արդէն՝ զանգակի բոլորովին նոր ձայն է, ինչպէս կ'ըսեն: Ժողովուրդին հետաքրքրողը միայն բովանդակութիւնն էր. այժմ՝ բովանդակութիւնը անբաւարար կը նկատուի. գեղարուեստական արժէք եւս կը պահանջուի, ընդլայնելով նաև ներշնչման աղբիւրներու սահմանները:

Գրական հարցերու մէջ ծայր տուած ազատախոհութեան արձագանքը կարելի է գտնել Հայաստանի Կոմ. կուսակցութեան 17-րդ Համագումարի (1954, Փետր. 14-16) անցուցած հետեւեալ բանաձեւին մէջ.

... «Վերջին մէկ եւ կէս տարուայ ընթացքում ստեղծուած գեղարուեստական գրականութեան գործերը լրիւ չեն բաւարարում սովետական ընթերցողի աճող պահանջները: Լուրջ թերութիւններ կան պոէզիայի, դրամատուրգիայի դարգացման գործում, ինքստ ետ է մնում երգչիական ժանրը: Գրողների միութեան ղեկավարութիւնը թոյլ է պայքարում անդոյն, գեղարուեստական տեսակէտից ցածորակ գործերի լոյս ընծայման դէմ, հետեւողական աշխատանք չի տանում գրողների վարպետութիւնը բարձրացնելու ուղղութեամբ: Լրջօրէն ետ է մնում գրաքննադատութիւնը, յատկապէս՝ սովետական գրականութեան դարգացման հետ կապուած կարեւորագոյն պրոբլեմների մշակման գործում (...):» (8)

Տակաւին անորոշութեան մէջ մեացած Հայերու միտքը լուսաբանելու տեսակէտէն, չափապանց յատկանշական եւ կարեւոր է Ա. Միկոյեանի այն ճառը, որ խօսեցաւ 1954-ի Մարտ 11-ին, Հայաստան կատարած իր այցելութեան առթիւ: Գրական հարցերու վերաբերող հատուածէն կը մէջբերենք՝

... «Սով. Միութեան կոմունիստական պարտիան միշտ պայքար է մղել ինչպէս բուրժուական նացիոնալիզմի դէմ, այնպէս էլ ազգային նիւթիցով եւ դէպի կուլտուրական ժառանգութիւնը նիւթ-

(8) ՆայՅ սեղը. էջ 658:

լիստական վերաբերմունքի դէմ՝ ՆիՇի-  
լիցի վիստակորուծիւնը երեւում է սե-  
ղակոն կեանքից վերցուած աշխարհի  
փաստերով, ինչպիսին է վերաբերմուն-  
քը դէպի հայ զբաղանդական ներկայա-  
ցուցչներ Ռաֆայէլ Պատկանեանը եւ  
Բաֆֆին: Բանն աշտուղ էր հասել, որ  
մի ժամանակ, որքան ալ տարօրինակ է՝  
պարտոմասւոր (կուսակցական անպա-  
մատուտ ունեցող) մարդկանց ձեռքով  
հանուէց էջմիածնում եղած Պատկանեա-  
նի արձանը, եւ դադարեցուէց հայ զբա-  
ղանդական կլասիկ Բաֆֆու երկերի հը-  
րատարակութիւնը: Ի հարկէ, Պատկանե-  
անի եւ Բաֆֆու որոշ երկերի մէջ նա-  
ցիտնախառնական երանգներ կան: Բայց  
կարելի է արդեօք դրա հիման վրայ հը-  
րատարակել կուլտուրական աշխարհի փա-  
ռանդութիւնից, որն արտացոլել է պարտ-  
կական եւ թուրքական կեղեքէշներէ դէմ  
հայ ժողովուրդի պայքարի մի շարք էջեր,  
որը սերտով ու բարձր զննցմունքով եր-  
գել է ժողովուրդներէ կեանքն ու աշխա-  
տանքը: (...)

...«Ինքնաուրիկայի նախկին զեկա-  
մարութիւնը սխալ վերաբերմունք է ու-  
նեցել նաեւ դէպի սովետական ժամանա-  
կաշրջանի հայ տաղանդաւոր բանաս-  
տեղծ Եղիշէ Չարենցի ժառանգութիւնը,  
մի բանաստեղծ, որն իր ստեղծագործու-  
թիւնը նուիրել է մասսաների աւելու-  
ցիոն գործունէութեան գովերգմանը եւ  
մեր պարտիայի ու Մոմ. պետութեան  
հիմնադիր մեծ Լենինին: Չարենցի եր-  
կերը (...) պէտք է դառնան սովետական  
ընթերցողի սեփականութիւնը (...)» (9)

Այս ցուցմունքներու եւ ընդհանուր  
սահմաններու հիման վրայ է, որ 1954-ի  
Յուլիս 21-27 տեղի կ'ունենայ Հայաս-  
տանի գրողներու երրորդ համագումար-  
ըը, յետոյ համար նախորդ շրջանի գոր-  
ծունէութեան զեկուցումները եւ ընտրե-  
լու համար Համախորհրդային գրողներու  
Բ. Համագումարին մասնակցող հայկա-

կան պատուիրակութեան անդամները:

Աւելորդ չ'ըլլար թերեւս յիշեցնել,  
նոյնիսկ կրկնութիւն ընելու գնով, որ  
1954ի գրողներուն համար արտօնուած  
սահմանները, ուրեմն, մօտաւորապէս  
հետեւեալներն են. ոչ մէկ պարագայի՝  
չչեղիլ մարջոն-լենինեան սկզբունքներէն.  
բայց, ասով հանդերձ, հնազոյն եւ հին  
մշակութային մեր դանձերէն օգտուիլ,  
այն շափերու մէջ, որ կը պատկերացը-  
նեն հայ ժողովուրդի ձգտումները եւ  
այն շափերու մէջ, որ կրնան ներշնչել  
նոր օրերու գրողները՝ ոճի, պատկերնե-  
րու, չեղարուեստական յղացումի եւ  
նման այլ տեսակէտներէ: Ներշնչման  
կարեւոր աղբիւր մը կը մնայ ժամանա-  
կակից խորհրդային կեանքը, իր նուա-  
ճումներով ու նաեւ տակախի կատարե-  
լութեան չհասած իր թերի կողմերով՝  
թերիները սրբաբերելու մտահոգութեամբ:  
Յամենայն դէպս, զբողի մը ստեղծագոր-  
ծութիւններուն զնահատման մէջ, այլեւս  
բաւարար չի նկատուիր միայն զաղափա-  
րաբանական մաքրակրօնութիւնը. ան-  
հրաժեշտ է, որ երկը ունենայ չեղար-  
ուեստական արժէք: Յստակ եւ որոշ բա-  
ռերով չ'ըսուէի թէեւ, բայց ընդհանուր  
միտքը կը ձգտի դէպի այն կացութիւնը,  
որ եթէ անհրաժեշտութիւն ծագի ընտ-  
րութիւն կայացնելու չեղարուեստական  
արժէքէ զուրկ՝ բայց գաղափարաբանա-  
կան տեսակէտէ մաքրակրօն երկի մը եւ  
զաղափարաբանութենէ զուրկ՝ բայց գե-  
ղարուեստական տեսակէտէ արժէքաւոր  
երկի մը միջեւ, այս վերջինին յաջողու-  
թեան դրաւականները բոլորովին անդոյ  
չեն այլեւս: Իսկալ երկը կը մնայ ան-  
չուշտ այն, որ թէ՛ չեղարուեստական եւ  
թէ՛ գաղափարաբանական մարզերուն մէջ  
գոհացում կու տայ բոլորին:

Ուրեմն, Հայաստանի Մոմ. գրողնե-  
րու երրորդ համագումարը, որուն բաց-  
ման խօսքը կ'ընէր Ա. Իսահակեան,  
կ'ընտրէր իր բազմանդամ վարչութիւնը:  
(Շար. 2)

(9) Նոյն տեղը. էջ 680-681:

ՇԱՔԷ ՏԷՐ ՄԵԼՔՈՆԵԱՆ

ՎԱԻԵՐԱԹՈՒՂԹ

ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ԻՐԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Ընթերցողին ծանօթ է Մոսկուայի մէջ տեղի ունեցած եւ ամբողջ աշխարհի մէջ փոքրիկ բարձրացումներ կրկն գրազնեքաւ՝ Ա. Գ. Սինեակովիի եւ Թու. Գանիւլիի դատավարութեամբ գայթակղարի պատմութիւնը:

Համայնարեւոյնի մամուլը լայնօրէն արձագանգ հանդիսացաւ սուտիմեան ժամանակաշրջանի բարձրը յիշեցնող որուհտի այս հաւատաբեմութեամբ: Անգամի մը համար ազատ աշխարհի եւ արտասահմանի համայնավար մտաւորականութիւնը վրդապումի ճոյն զիրքը արդեգրեցին մտքի այս ճար կաշկանդումին գէտ:

Ստարի. քարգամեարար էր ստեղ ընկերվարական իրազդաւորեան մտքի գրուած հետագայ վաւերութեանը, գայն առնելով Յրամեական էտքէ հանդէտէն, տղուած՝ 1950-ին: Ետքի իմբացրութիւնը, ստեղին, հասկնալի պատմութեանը, չէր յայտնած հեղինակի իմբնութիւնը, բայց այսօր ամէն մարդ գիտէ, քե ամ կը պատկանի 7 տարուամբ տաժտակիր աշխատեղի գատազարտուած Սինեակովիի գըրչին:



Գրեց՝ Ա. Գ. Սինեակովի

Ի՞նչ է ընկերվարական իրապաշտութիւնը(1): Ի՞նչ կը նշանակէ այս արտաոտց արտապաշտութիւնը, որ ահանջ կը ծակէ: Կարելի՞ է խօսիլ ընկերվարական, զբամատիրական, քրիտոնէական կամ մահմետական իրապաշտութեան մը մասին: Այդ ոչ-բանասոր գաղափարը իրական բանի մը կը համապատասխանէ՞: Գուցէ գոյութիւն չունի ան: Թերեւս վախճն ընդարմացած մտաւորականի բանդազուլանք մըն է միայն, բխած ստալինեան մենատիրութեան խաւարնեղէն: Կամ ալ հարցը կը վերաբըրի ժըր-

տանովի կուլիտ ամբոխավարութեան, եւ կամ Կորբիի ծերունական ցնդաբանութեան: Ստապտո՞ւմ մըն է, առասպել մը, քարոզչական հնարք մը: Կը թուի, թէ Արեւմուտքի մէջ յաճախ կը տրուին այս հարցումները. գա՛նոնք եռանդազին կը քննարկեն Ահտատանի մէջ, անոնց կը հանդիպենք նաեւ մեր միջավայրին մէջ, ուր կը խոսվէ ըմբոստ հողինը, որոնք կասկածի ու քընտադատութեան հերետիկոսութեան մէջ կ'իյնան: Միեւնոյն ատեն, խորհրդային դրականութիւնը, նկարչութիւնը, թատրոնը եւ շարժանկարը կը ճգնին ամէն գնով ապացուցանել, թէ գոյութիւն ունին: Ընկերվարական իրապաշտութեան ար-

(1) Հայաստանի մէջ՝ գործածական բացատրութիւնն է սոցիալիստական սէպիզմ:

տաղարութիւնը կը զնահատուի տպագրուեալ միլիտանտներէ զնկոմիսիոններ բռնող պոստատաներով ու կոտակներով, դարեր կազմող ժամերով: Հագարաւոր դրական ջննադատներ, տեսարաններ, արուեստի ջննադատներ, մանկավարժներ գլուխ կը պատուեն եւ շունչ կը հատցնեն անոր նիւթապաշտական նկարագրով եւ արածախոհական (դիալեկտիկ) ընդհանր հիմնաւորելու, բացատրելու եւ հասկնալու համար: Եւ անձամբ պետութեան վարիչը, Համայնավար կուսակցութեան առաջին քարտուղար տնտեսական ուղիւնական հարցեր մէկ կողմ կը դնէ՝ կշռու ունեցող խօսքեր արտասանեալ համար ազգի զեղադատական հարցերուն մասին (2):

Ընկերվարական իրապաշտութեան ամէնէն ճշգրիտ սահմանումը արուած է Թորհրդային Գրողներու Միութեան կանոնադրութեան մէջ: «Ընկերվարական իրապաշտութիւնը խորհրդային սրբապետութեան եւ սրբական ջննադատութեան հիմնական մեթոտն է, — ան արուեստագէտին կը պահանջէ իրականութեան ճշմարտացի եւ պատմականօրէն թանձրացեալ ներկայացումը՝ իր յեղափոխական զարգացման մէջ: Միւս կողմէ, պարտաւոր է անտարելու աշխատանքներու դաստիարակական փոխակերպութեան ու դաստիարակութեան՝ ընկերվարութեան սղիով» (3):

Այս անմեղ բանաձեւը իբրեւ հիմ կը ծառայէ ընկերվարական իրապաշտութեան ամբողջ կառոյցին: Միանգամայն կը սահմանէ ընկերվարական դարաշրջանի եւ անցեալի իրապաշտութեան յա-

րաբերութիւնը եւ ամիս, ինչ որ զանոնք կը դատորոշէ. — մէկ թէ միւս իրապաշտութեան նպատակն է իրականին հաւանաբան ներկայացումը, բայց ընկերվարական իրապաշտութիւնը իրեն հետ նոր տարր մը կը բերէ, որովհետեւ կենսաբան կ'առնէ յեղափոխական իր շարժումիմ մէջ եւ դիտէ ընթացողներուն ու հանդիսատեսներուն միտքը կազմաւորել այդ հեռանկարին յարաբերաբար, այսինքն ընկերվարութեան ոգիով: Հին իրապաշտները կամ, ինչպէս կը կոչուին յաճախ, ջննադատ իրապաշտները (որովհետեւ կը ջննադատէին քաղցեմի ընկերութիւնը), — Պալլաք, Թոլսթո, Պետրով եւայլն... իրականութեան հարապատ պատկեր մը կու տային: Մակայն չէին ճանչնար Մարքսի հանճարեղ ուսմունքը, չէին կրնար նախատեսել ընկերվարութեան ապագայ յաղթանակները եւ, ամէն պարագայի մէջ, ոչ մէկ դադարող ունէին անոր հանելու համար որքեղբուսելիք իրական ու թանձրացեալ օղիինբուս մասին: Ահա այս էր անոնց որքեղբութիւնը, անոնց «պատմական սահմանափակութիւնը»:

Ընկերվարական իրապաշտութիւնը ինք իբրեւ զինք ունի Մարքսի վարդապետութիւնը. հարստացած է պայքարներու եւ յաղթանակներու փորձառութեամբ մը. Համայնավար կուսակցութիւնն է իր բարեկամ ու մշտաբնուս դաստիարակը, որ զայն կը ներշնչէ: Ներկայ իրականութիւնը նկարագրելով հանդերձ, կը հասկնայ պատմութեան ընթացքը եւ ակնարկ մը կը նետէ ապագային վրայ: Ան կը տեսնէ, հասարակ աշխարհն անսահմանի, «Համայնավարութեան տեսանլի զիծերը»: Այս ձեւով յոտակ յոտակ յարմարութիւն մը կը կազմէ անցեալի արուեստին յարաբերաբար եւ մարդկութեան արուեստի եղաշրջման ամէնէն բարձր զազաթը կը հասնի, կ'ըլլայ ամէնէն իրապաշտութիւնը:

Այս է, քանի մը բառով, մեր արուեստի ընդհանուր ուրուանկարը, դարձանայիտրէն պարզ եւ միաժամանակ բաւական առաճապական ուրուանկար մը, ա-

(2) Ավանդութիւն՝ խորհրդային ստալինական մտայնութիւնը ուղղուած զանազան ճառերով, արտասանութիւն՝ իրապաշտութեան եւ արուեստի սերտ կապին համար խորագրով «Գոմուստ» (Եմպուս), ԻԿ 12, 1957:

(3) Ազատագրութիւն՝ Թորհրդային Գրողներու Կոմիտէի Ա. համագումարին, Մոսկու, 1934, էջ 716:

նոր մէջ մտցնելու համար Կորթին, Մա-  
յակովսկին, Ֆրանկելը, Արակոնը, Էրեն-  
պուրկը եւ հորիւրաւոր ուրիշ ընկերվա-  
րական իրապաշտներ, մեծ թէ փոքր :  
Սակայն բա՛ն չենք հասկնար անկէ, եթէ  
մակերեսայնօրէն առնենք այս չոր բա-  
նածներ, առանց թափանցել փորձելու ա-  
նոր խոր ու թողարկեալ իմաստին :

Մեզ գրադէցնող բանաձեւը (գիրա-  
կանութեան ճշմարտացի եւ պատմական-  
օրէն թանձրացեալ ներկայացումը՝ իր  
յեղափոխական զարգացման մէջ) իր  
հիմին մէջ ունի նպատակին դադարարը,  
զապարարը այն իտէալին, որ ամէն ինչ  
կը պարփակէ եւ որուն կը ձգտի իրակա-  
նութիւնը — որուն ճշմարտացի պատկեր  
մը կը տրուի — յեղափոխական անդիմա-  
զրելի շարժումի մը մէջ : Սեւեռել այս  
շարժումը եւ օգնել ընթերցողին, փոխա-  
կերպելով անոր գիտակցութիւնը, մօտե-  
նալու նպատակին, — այս է իմաստը ըն-  
կերվարական իրապաշտութեան, որ մեր  
զարաբաշտին այն արուեստն է, որ յըս-  
տակօրէն զէպի սահմանեալ նպատակ մը  
կ'ուզուի :

Այդ նպատակը համայնափարութիւնն  
է, իբր երիտասարդ տարիքին՝ ընկերվա-  
րութիւն անունով ճանչցուած : Բանաս-  
տեղծը միայն թերթուածներ չի գրեր, իբր  
թերթուածներով կը նպաստէ համայնա-  
փարութեան կոտորածին : Նո՛յնքան բը-  
նական է անոր կողքին տեսնել, նո՛յն  
պարտականութեան լծուած, զանգակա-  
դործը, երաժշտադէտը, հողագէտը, ձե-  
ւաչին աշխատաւորը, ռոտիկանը, փաս-  
տարանը, մեքենաները, թատրոնները,  
թնդանօթները, թերթերը . . .

Ինչպէս մեր ամբողջ մշակոյթը եւ  
մեր ամբողջ սիւսեմը, մեր արուեստը  
ամբողջովին աստուածաբանական է : Ան  
հպատակեցուած է գերազոյն նպատու-  
կին, որ անոր կը շնորհէ իր ազնուակա-  
նութեան փաստաթուղթը : Վերջին հա-  
շիւտով, մենք բոլորս կ'ապրինք միայն  
համայնափարութեան դարձուտը փութա-  
ցընելու համար :

Կենդանիները այդքան հեռաւոր մը-  
տակաւուներու առանձնաշնորհը չու-

նին : Անոնք կը շարժին իրենց բնազդնե-  
րով — որոնք հեռուէն կը գերազանցեն  
մեր երազներն ու հաշիւները : Անասուն-  
ները կը խածնեն, որովհետեւ, այդպէս,  
կը իրածնեն եւ ոչ թէ խածնելու նպատա-  
կով : Չեն մտածեր ոչ վաղուան, ոչ հա-  
բըստութեան, ոչ Աստուծոյ մասին :  
Կ'ապրին առանց կնճռոտ խնդիրներ ար-  
ծարծելու : Մարդը ինք քացարձակապէս  
պէտք ունի բանի մը, դոր չունի :

Այս իրողութիւնը մեղի ելք մը փնտ-  
ուել կու տայ՝ ծաւալուն գործունէութեան  
մը մէջ կը փոխակերպենք աշխարհը բոս  
պատկերի մերում, բնութիւնը բան մը  
կ'ընենք : Աննպատակ դեռերը հաղոր-  
դակցութեան միջոցներ կը զառնան, ան-  
նըպատակ ծառը՝ ուղղութիւն ցուցնող  
կ'լեր :

Մեր մտածողութիւնը նուազ աստ-  
ուածաբանական չէ : Մարդը՝ կը ճանչը-  
նայ աշխարհը՝ անոր ընծայելով իր սե-  
փական վախճանականութիւնը : Կը հար-  
ցընէ. — «Արեւը ինչո՞ւ անհրաժեշտ է»,  
եւ կը պատասխանէ. — «Նուազութիւնը եւ  
տաքցնելու համար» : Նախնական ժողո-  
փուրդներու ռեպաշտութիւնը (անի-  
միզմ) առաջին փորձն է քացարձակու-  
անհեթեթ քառսը, անտարբեր տիեզերքը  
հետաքրքրելու համար մարդուն շահա-  
գորդուեալ կեանքով :

Գիտութիւնը մեզ չմերթադատեց հար-  
ցումէն, դոր մտնուկները կ'ընեն իրենք  
իրենց. «Ինչո՞ւ» : Անոր հաստատած  
պատճառականութեան ընդմէջէն իմանա-  
լի կը գտնայ թողարկեալ ու ձեւադեղծ-  
եալ վախճանականութիւն մը : Գիտու-  
թիւնը կը յայտարարէ. — «Մարդը կը սե-  
րի կոսպիկէն», փոխանակ ըսելու. — «Կա-  
պիկը ճակատագրուած է մարդուն նմա-  
նելու» :

Սակայն ի՛նչ ալ ըլլայ մարդուն ծա-  
ղումը, իբր երեւումն ու ճակատագիրը  
անբաժանելի են Աստուծոմէ : Նպատակին  
ամէնէն բարձր զապարարն է այս, որ  
կրնայ մատչել ըլլալ եթէ ոչ մեր հաս-  
կացողութեան, առնուազն անոր գոյու-  
թիւն ունենալը դիտնալու մեր փափա-  
քին : Ան նպատակն է այն ամէնուն, որ



է, եւ այն ամէնուն, որ չէ, եւ ասիկա անհուն նպատակ մըն է - եւ անկասկած՝ քնատուր է -, նպատակը ինք իր մէջ: Որովհետեւ ի՞նչ նպատակ կընար ունենալ նպատակը:

Պատմութեան մէջ շրջաններ կան, ուր նպատակին ներկայութիւնը բացայայտ է, երբ խեղճուկ կիրքերը կը կըլանուին Աստուծոյ որոնումով եւ երբ Ան բացէն կը սկսի Իրեն քաշել մարդկութիւնը: Այս ձեւով է, որ տառ իկաւ ջըրիստոնէական մշակոյթը, որ տիրացաւ նպատակին՝ թերեւ իր ամէնէն անմատչելի իմաստին մէջ: Այնուհետեւ Անհատապաշտութեան դարաշրջանը հռչակեց Անմիջ ազատութիւնը եւ մարդիկ սկսան խոնարհիլ անոր առջեւ՝ ինչպէս նպատակին առջեւ, Վերածնունդին հետ, Մարդկայնականութեան, Գերմարդուն, ժողովրդավարութեան, Ռոպեսփիտի եւ շատ մը այլ ազօթքներու: Այժմ մենք մտած ենք համաշխարհային նոր սխառմի մը դարուն մէջ, Ընկերավարութեան դարուն:

Շլացուցիչ լոյս մը ուղիորդէն կը հոսի այս գաղափարն: Ձեռն աշխարհը, զոր կ'երեւակայինք, աւելի նիւթական եւ աւելի համապատասխան է մարդուն պահանջներուն, քան քրիստոնէական դրախտը...», ըսած է խորհրդային գրագէտ Լէոնիտ Լէոնով համայնավարութեան մասին (4):

Բռտերը կը պակսին մեղի՝ անոր մասին խօսելու համար: Պանդափառութենէ շնչահեղձ կ'ըլլանք եւ, նկարագրելու համար մեղի սպասող այդ սքանչելիքը, կը զործածենք մասնաւորաբար ժխտական բարդատականներ: Հոն, համայնավար աշխարհին մէջ, ոչ հարուստ դոյութիւն պիտի ունենայ, ոչ աղքատ, հոն գոյութիւն պիտի չունենան ոչ դրամ, ոչ պատերազմներ, ոչ բանտեր, ոչ սահմաններ: Հոն գոյութիւն պիտի չունենան հիւանդութիւններ եւ ոչ ալ թերեւս՝ մահ:

(4) Խորհրդային ժամանակակից եռլիտուր Վիպակիր, ծնած 1899-ին:

Ամէն ոք պիտի ունէ ու աշխատի ա՛յնքան, ո՛րքան կ'ուզէ, եւ աշխատանքը, տառապանքներու տեղ, միայն ուրախութիւններ պիտի պատճառէ: Ինչպէս խոստացած է Լենին, զուտ ասկիէ արտաքնոցներ պիտի չիւնենք... Բայց ի՞նչ կ'ըսեմ:

«Ի՞նչ երանգներ եւ ի՞նչ քառեր պիտի բաւէին Ռեզիդենցիա կամար այդ վեհապալմի գագաթները, Ուր դաւիթնայր մայրերու քաղցրութիւնն Ամին եւ պոռնիկները զգաստ եմ ի՞նչպէս կոչանք...»:

Արդի միաքը անգոր է երեւակայելու աւելի գեղեցիկ եւ աւելի վսեմ բան մը, քան համայնավար իտէալը: Լաւագոյն պարագային կրնայ շրջաբերութեան վերահանել քրիստոնէական սիրոյ եւ Անմիջ ազատութեան հին տեսականները: Սակայն առայժմ ի վիճակի չէ աւելի թարմ նպատակ մը հրապարակ նետելու:

Արեւմտեան ազատական անհատապաշտը կամ ռուս սկեպտիկ մտաւորականը ընկերավարութեան յարաբերաբար կը զտնուի մտաւորապէս նոյն այն կացութեան մէջ, ուր կը զտնուէին հոռմէացի խելացի ու մշակուած աշուտականները (պատրիկ)՝ յաղթական քրիստոնէութեան դէմ-յանդիման: Պաշտեալ աստուծոյ մը հանդէպ նոր հաւատքը բարբորոս ու պարզամիտ կ'որակէին. կը ինդային այն խենթերուն վրայ, որոնք խաչը՝ հոռմէական այդ կառափնատը կը պաշտէին, եւ ապիմատ կը զտնէին Երրորդութեան, Անարատ Յղութեան եւ Յարութեան եւ այլն վարդապետութիւնը... Սակայն անոնց ուժերէն վեր էք նուազագոյն լրջութեամբ իսկ փաստաբարութիւններ հակադրել Գրիստոսի Բողոքին, իրրեւ այդպիսին: Ճիշդ է, որ դեռ կրնային հաստատել, ի՞նչ քրիստոնէական բարոյական օրինազգիքի լաւագոյն տարրերը Պրատոնէն փոխ առնուած էին (այժմու քրիստոնէաները եւս կ'ըսեն կը-

բնն, թէ Համայնաժողովները իրենց ազնւական իտէալը Աւետարանէն քաղած են): Բայց կընայի՞ն յայտարարել, թէ իրրեւ տիրոյ Առտուած յղացուած Առտուած մը վնասակար քան մըն էք, ասորը տօրէն Հրէշային: Մենք եւս կընա՞նք ըսել, թէ տիեզերական երջանկութիւնը, որ մեղի խոստացուած է Համայնաժողովարարացային մէջ, չարիք մըն է:

Մենք եւս պիտի չկարենայինք դիմադրել Համայնաժողովրդի տարիքնող դիպեցկութեան: Ետ կանուխ է նոր նըպատակ մը հնարելու համար, մեզ մեզմէ փրցնելու եւ հետամուտ ըլլալու համայնաժողովրդի ենդին՝ հետաւոր հորիզոններու:

Մարքոսի Հանճարեղ դիւորը Հաստատել դիտանչն է այն, որ երկրային զըրախտը, որուն մասին իրմէ առաջ շատ մարդիկ նոյնպէս երազած էին, ճակատադէրին կողմէ մարդկութեան նախաձեռնանուած նպատակն էր: Աւելի առաջ անցնելով առանձին անհատներու բարոյական ճիգերու շրջանակէն (Ռ'ար կս Թս-կնդար), Համայնաժողովրդի, Մարքոսի օգնութեամբ, մուտք կործնց տիեզերական պատմութեան մտրդին մէջ, որ ցարդ շտեննուած ուղղութիւն մը առաւ, դառնալով մարդկութեան դէպի Համայնաժողովրդի ընթացքին պատմութիւնը:

Մէկ հարուածով ամէն ինչ իր անգըր դրուած էր: Երկաթէ անհրաժեշտութիւն մը եւ իխտ նուիրապետութիւն մը անօրինկցին դարերուն զննցքը: Կապիկը բարձրացաւ ետեւի թաթերուն վրայ եւ սկսաւ իր յաղթական առաջընթացը դէպի Համայնաժողովրդի: Նախնական Համայնքի աշխարհը անհրաժեշտ էր, որ պէտք անկէ առաջ զար ստրկատիրութիւնը, ստրկատիրութիւնը անհրաժեշտ էր՝ աւատապետութեան կրեւան զարուն Համար. աւատապետութիւնը անխուսափելի էր՝ առաջ ընթելու Համար դրամատիրութիւնը, դրամատիրութիւնը անհրաժեշտ էր, որ պէտք անկէ ծնունդ առնէ Համայնաժողովրդի: Այսքան: Ոքոնչիլի նպատակը ձեռք բերուած է, բուրդը պահուած է, պատմութիւնը կ'աւարտի:

Անկեղծօրէն Հաւատացեալ մտրդ մը ամէն ինչ իր առտուածութեան կը վերագրէ: Անկորոզ է հասկնալու օտար հուսաք մը: Հաւատքը, զոր կը զնէ նպատակին մէջ, կը պահանջէ, որ արհամարհէ միւս հաւատքները: Ան փաստը կուտայ նոյն կոյր մոխրանդութեան կամ, եթէ կը նախընտրէք, սկզբունքային նոյն ոգիին՝ պատմութեան նկատմամբ: Քըրիստոնեայ մը, եթէ կ'ուզէ հետեւողական ըլլալ, պարտաւոր է նկատելու, որ Քրիստոսի ծնունդէն առաջ աշխարհի ամբողջ կեանքը Յիսուսի նախապատմութիւնն է: Միաստուածեանի մը աչքին, հեթանոսները դոյռութիւն ունին՝ յայտնարեւոյ Համար եղական Առտուած յղացքը եւ, վերջին հաշուով, որչ պատմութեան մէջ ետք, Հաննչու համար միակ Առտուած մը հաւատքին:

Այս բոլորէն ետք, կարելի՞ է զարմանալ, որ, կրօնական այլ հեռանկար մը մէջ, հին Հուրմը անխուսափելի Հանդրուան մը նկատուի Համայնաժողովրդի անտրոնորդը ճամբուն վրայ, որ իսպախաց արշաւանքները շրայտարտիւն իրենց ներքին իմաստով, զբխտունէութեան ետանդագին ճիգերով, այլ առեւտուրի եւ ճարտարտրուետի զարգացումով, խաղովք արտադրական ուժերու, որոնք դոյռութիւն ունին ամենուրեք եւ որ ներկայիս կ'ապահովեն դրամատիրութեան կործանումն ու ընկերաժողովրդի վարչաձեւի յաղթանակը: Իրական հաւատք մը անհաշտելի է հանդուրժողութեան հետ: Նոյնպէս, ան հաշտելի չէ պատմականութեան հետ, այսինքն՝ անցեալին նկատմամբ հանդուրժողութեան հետ: Ահա թէ ինչո՞ւ, Հակառակ անոք, որ մարքոսականները իրենք զիրենք պատմական նիւթապաշտութեան աշակերտ կը յայտարարեն, անոնց պատմականապետութիւնը կը սահմանափակուի կեանքը դէպի Համայնաժողովրդի իր շարժումին մէջ տեսնելու փորձին մէջ: Մը նացիտլ ձգտումները զիրենք զիչ կը հետաքրքրէ: Կը սխալի՞ն թէ իրաւունք ունին, փնտրել հարց մըն է: Սակայն անվիճելի է, ամէն պարագայի, որ արմարանօրէն Հալտ են իրենք իրենց հետ:

Կը բաւէ հարցնել արեւմուտքցիի մը - ինչո՞ւ Յրքանական Մեծ Յեղափոխութիւնը անհրաժեշտ էր, տարբեր պատասխաններու տարափ մը ստանալու համար: Բայց նոյն հարցումը տուր խորհրդային ունէ աշակերտի, չիտեղու համար աւելի կազմուած անձերու մասին, եւ իւրաքանչիւրը մեզի պիտի տայ ճիշդ եւ սպառիչ պատասխան մը, - Յըրանս: Մեծ Յեղափոխութիւնը անհրաժեշտ էր ճամբան հարթելու եւ այդ ձեռով փութացնելու համար համայնապարտօններն դարուտը: Երկար ատենէ ի վեր մարդիկ այդքան յստակ քայլարժեքներն մը չէին ունեցած աշխարհի մասին, թերեւս Միջին Դարէն ի վեր: Մեր մեծ առանձնաշնորհումը զայն վերադասած ըլլալն է:

Մարքսիզմի աստուածաբանութեան իսկութիւնը կը յայտնուի մասնաւորաբար իր վերջին տեսութիւններու յողուածներուն, բացարարականներուն եւ դործներուն մէջ, տեսարաններ, որոնք որդեգրեցին գիտութեան հրահանգներուն եւ անտեսական հրամանագիրներուն յստակութիւնը, կարակոնութիւնն ու ուղղակի ոճը: Իրբեւ օրինակ կարելի է մէջբերել Ստալինի դատողութիւնը զազափարներու եւ անտեսականներու նշանակութեան մասին, «Համայնապարտ (բաղձիկներու) կուսակցութեան համառօտ պատմութեան» (1938) Գ. դրութեան քաղուած (էջ 111):

«Կարելի է գտնագամ տեսակի բնդեանուր գաղափարներն ու տեսութիւններն ունենայ: Կամ ենամեցիները, ժամանակակիւրկները, որոնք կը ծառայեն ընկերային յետամնաց ուժերու շահերուն: Անոնց միտ բանին դանդաղեցնել է ընկերութեան զարգացումը եւ անոր առաջընթացը: Կան նորերը, յառաջդիմականները, որոնք կը ծառայեն ընկերային առաջապահ ուժերու շահերուն: Անոնց իմաստը դիւրացնելն է ընկերութեան զարգացումը եւ անոր առաջընթացը»:

Հոս ամէն բան հպարակեցուած է նպատակի գաղափարին: Նոյնիսկ այն բառը, որ չի ստատեր մարդկութիւնը

դէպի այդ նպատակը յառաջդիմել տալու դործին, իմաստ մը ունի, - արդէ՛ք ըլլալ անոր (անկասկած աստիկն ստատանան ունեցած է նման արժէք մը): «Գազափարը», «վերնաշէնքը», «հիմնաքարիքը», «բնական օրէնքը», «անտեսութիւնը», «արտադրական օւժերը», վերացական, անանմական այս բոլոր ստորոգութիւնները (ֆաքտորի) յանկարծ կենդանութիւն կը ստանան, միս եւ տրիւն կը դրենուն, աստուածներու եւ հերոսներու, Հրեշտակներու եւ ստանտոներու երեւոյթը կ'առնեն: Նպատակներու նմունք կու տան, եւ ահա փիլիսոփայական դրութիւններու եւ գիտական դասադիրքերու տողերուն ընդմէջէն կը ցնչէ կրօնական մեծ ճորհուրդի մը մայրնը: - «Վերնաշէնքը ստեղծուած է հիմնաքարիքին կողմէ՝ ճիշդ ու ճիշդ անոր ծառայելու համար...» (Ժ. Ստալին, «Մարքսիզմ եւ լեզուարանութեան հարց»):

Այս մեղով մարդկային մտածումին տիեզերական պատմութիւնը դոյութիւն ունեցած է, այսպէս ըսելու համար, միայն ճամբայ հարթելու զպատմական նիւթապաշտութեան» երեւման, այսինքն՝ մարքսիզմին, համայնապարտութեան փիլիսոփայութեան:

Մեր առջեւ ցցուած է ուրեմն արարչագործութեան այդ եզակի նպատակը, դիզեցիկ՝ յաւիտենական կեանքին պէտք եւ հարկադրական՝ մահուան պէտք: Եւ մենք կը դահավիժինք դէպի այդ նպատակը, խորտակելով բոլոր թուրերը եւ համբուն վրայ նետելով այն ամէնը, որ կրնար դանդաղեցնել մեր սանձարձակ երթը: Առանց սրտի ցաւի մենք մեզ ազատագրած ենք անդինական հաւատքէն, դրացիին հանդէպ սէրէն, անմին ապատութիւնէն եւ բառական ճմուռած ու մահուանը շատ աւելի ողորմելի այլ նոխապաշարուածներէ, քան այն խաղալը, որ կը պարզուի մեր տուջեւ: Յանուն նոր կրօնին, յեղափոխութեան հաղորատու մարտիրոսներ իրենց կեանքը ընծայարելիցին, իրենց տառապանքներով, քաջութեամբ եւ սրբութեամբ շուքի մէջ մզե-

լով առաջին քրիստոնեաներուն թաղա- դործութիւնները։-

Հիմնգնահայ աստղերը կարմիր երկաթով մեր կոնակիմ վրայ

ազնուապետներուն կողմէ գրաշմուճ են :

Մամոնի աւագակալութեանը մինչեւ վիզ մեզ ողբ-ողբ թաղած են :

Շոգեկառնքրու կաթասներուն մէջ ճախնները մեզ խորոված են

Մեր բերանը հալած կապար եւ ամագ լեցնելով :

Ուրացէ՛ք, կ'ոռոմայիմ ամռնք, - սակայն իրենց կրակէ կոկորդիլներն

երեք քառեր միայն կը հնչէիմ .

Կեցցե՛ք (միշտ) հումայնավարութիւնը :

(ՄԱՅԱԿՈՎՍԿԻ)

Ի այց միայն մեր կեանքը, մեր ա- րիւնք, մեր մարմինը չէր, որ մենք ազ- ւինք նոր Աստծոյն : Մենք անոր զոհարե- րեցինք միւսի պէս ճերմակ մեր հոգին եւ զայն ազմտեցինք աշխարհի բոլոր ազ- ատութիւններով :

Լաւ է ազնիւ ըլլալ, անուշեղէնով թէյ խմել, ծաղիկներ անկել, մշակել սէ- րը, խոնարհութիւնը, շարին անդիմա- դարձ ըլլալու եւ այլ մարդասիրական ա- ռաքիութիւններ : Սակայն զո՛վ փրկե- ցին, ի՞նչ փոխեցին աշխարհի մէջ այդ ճերմակներն ու կոյսերը երկարաձգեալ, այդ մարդասիրութեամբ տողորեալ ե- սաստիները, որոնք իրենք իրենց համար լրումայ առ լրումայ հանդիստ խղճմտանք մը շինեցին եւ անզենականին մէջ շատ փոքրիկ տեղ մը ապահովեցին :

Մենք, մենք փրկութիւն չուզեցինք մեզի համար, այլ ամբողջ մարդկու- թեան համար : Եւ զգացական հառա- շանքներու, անձի կատարելութեան եւ ի նպաստ սովեակներուն բարեախրական հանդէսներու տեղ, ձեռնարկեցինք տիե- ղերքը արբադրելու դործին՝ հետեւելով լաւագոյն օրինակ-կաղապարին, որ եր- բեւէ պոյութիւն ունեցած ըլլար, այսին- ղըն՝ շողորուն նպատակին, որ կը մօ- տենար մեզի :

Որպէսզի բանտըր առ յաւէտ ան- հետանան, նորեր կառուցինք : Որպէսզի պետութեանց միջն սահմանները փուլ զան, մենք մեզ շրջապատեցինք շինա- կան պարիսպով մը : Որպէսզի ապագա- յին աշխատանքը վերածուի հանդիստի մը եւ հաճոյքի մը, տաժանակիր աշխա- տանքի դրութիւնը մուծեցինք : Որպէսզի այլեւս բնաւ կաթիլ մը արեւն չթափուի,

մենք սպաննեցինք, սպաննեցի՛նք, ա- ռանց դադարի :

Յանտ'ն նպատակին, պէտք եղաւ զոհարելի ամէն ինչ, որ ունէինք պա- հեստի եւ գիմէլ միեւնոյն միջոցներուն, դորս կը դործածէին մեր թշնամիները, - հռչակել Ռուսիոյ ամենագորութիւնը, սուտեր գրել «Պրաւադա» թի մէջ (5), թա- փուր դարձած զահին վրայ ցար մը բար- ձրացնել, վերահաստատել սպայական ուսնոցները եւ խոշտանդութիւնը... Եր- բեմն այնպէս կը թուէր, թէ ամբողջա- պէս յաղթանակելու համար՝ համայնա- վարութեան կը պակտէր վերջին ողջակէզ մը, - հրաժարի՛լ համայնավարութենէն : Տէ՛ր, աէ՛ր, ներէ՛ մեզի մեր մեղ- քերը :

Վերջապէս մեր աշխարհը ստեղծուե- ցաւ, պատկերովն ու նմանութեամբ Աս- տուծոյ : Դեռ համայնավարութիւն չէ այս, սակայն ան արդէն շատ մօտ է : Եւ մենք ոտքի կ'ելլենք, յոգնութենէ դեղե- լուն, եւ ակնարկով կը շրջինք ամբողջ տիեզերքը, արիւնազանդ աչքերով, եւ մենք մեր շուրջ շինք տեսնել ցախ, ինչ որ կը յուսայինք զոնեւ :

Ի՞նչ ունիք խնդալու, սրիկանե՛ք : Ի՞նչ ունիք խառնելիք ձեր յղկեալ ե- դունդներով մեր բաճկոններուն եւ հա- մազգեստներուն փակած արիւնի ու ցե- խի ծրարներուն մէջ : Դուք կ'ըսէք, թէ համայնավարութիւնը այս չէ, թէ մենք հետացած ենք անկէ, թէ մենք տակաւին անկէ ունի՛ր հետու ենք, քան ոկկորդ :

(5) Բառախաղ - «Պրաւադա» կը նշանակէ «ճշմարտութեան» :

Այո՛, բայց ո՛ւր է ե՛լ ձե՛ր Աստուծոյ թաղաւորութիւնը՝ Յո՛յց տուէ՞ք: Ո՞ւր է դերմարդու ազատ անձնաւորութիւնը, զոր մեղի խոստացած էք:

Արդիւնքները բնաւ նման չեն այն նպատակին, որ առաջադրուած էր սկիզբը: Անոր հասնելու ի խնդիր վատնուած միջոցներն ու ճիգերը կը փոխեն անոր կերպարանքը՝ զայն անճանաչելի դարձնելու աստիճան: Հաւատարմութեան խորոյնները նպաստեցին Աւետարանի ամբողջմասն, որպէս այնուհետեւ ի՞նչ մնաց անկէ: Եւ այսուհանդերձ, թէ՛ Հաւատարմութեան խորոյնները, թէ՛ Աւետարանը, թէ՛ Սուրբ Բարթողիմէոսի մէջոք քրիստոնէական միակ մեծ մշակոյթ մը կողմէն միայն:

Այո, կ'ապրինք Համայնավարութեան մէջ: Ան չի նմանիր այլեւս այն բանին, զոր կը փնտռէինք, ի՛նչպէս Միջին Դարը՝ Քրիստոսի կամ ինչպէս ժամանակակից արեւմուտքի մարդը՝ ազատ զերմարդուն եւ կամ ինչպէս մարդը՝ Աստուծոյ: Եւ սակայն, յայտնապէս որոշ նրմանութիւն մը կա՛յ, այնպէս չէ՞:

Այո՛: Այդ նմանութիւնը կը կայանայ մեր բոլոր գործերը, մեր բոլոր մըտածումները եւ մեր բոլոր գիտաւորութիւնները հպատակեցնելուն մէջ այն երգական նպատակին, որ թերեւս երկար ատենէ ի վեր դարձած է իմաստէ պարզուած բառ մը, բայց որ կը շարունակէ մեր վրայ բանեցնել քննած (հիփոթոզ) ազդեցութիւն մը եւ մեղ միշտ առաջ կը մղէ՝ յայտնի չէ թէ ո՛ւր: Հետեւաբար, բացայայտօրէն, արուեստը եւ դրականութիւնը չկրցան այս դրութեան մամուլին մէջ չզանուիլ եւ չվերածուիլ, ինչպէս կը նախատեսէր լինին, պետութեան մեծ մեքենային զանազակին եւ պլուան անոնք զիտական կամ արուեստային, չեն կրնար ապագադարական բլլալ... Սուրբաբանի դրականութեան, աշխարհի ամէնէն յառաջդիմական զբաղանդութեան ուժը կը բխի այն իրողութենէն, թէ՛ զբաղանդութիւն մըն է, որ չունի եւ չի

կրնար ունենալ ուրիշ շահեր, բայց եթէ ժողովուրդին շահերը, պետութեան շահերը» (6):

Համայնավար կուսակցութեան մէկ հրամանագրէն քաղուած այս թեզը կարգաւոր, պէտք է անպատճառ յիշիլ, որ ժողովուրդի շահեր եւ պետութեան շահեր – որոնք ամբողջովին կը համընկնին պետութեան տեսակէտով – ըսելով մարդիկ ուրիշ բան աչքի առջեւ չունին, բայց եթէ միեւնոյն Համայնավարութիւնը, որ ամէն ինչի կը թափանցէ եւ ամէն բան կը կրնայ – «...Պրակտիկութիւնը եւ արուեստը անբաժան ժառը կը կազմեն համայնավարութեան Համար ամբողջ ժողովուրդի մղած պայքարին... Պրակտիկութեան եւ արուեստին ամէնէն բարձր պաշտօնն է զօրաշարժի ենթարկել ժողովուրդը Համայնավարութեան կառուցման ի խնդիր նոր յաղթանակներու նրաւման Համար» (անդ):

Արեւմտեան զրոյնները երբ մեզ կը մեղադրեն, թէ ստեղծագործելու, խօսելու եւսայլի ազատութիւն չունինք... Իբրեւ մեկնակէտ ունին անձի ազատութեան մասին իրենց սեփական հաւատքը, որ հիմը կը կազմէ իրենց մշակոյթին, բայց որ օրկանապէս օտար է Համայնավար մշակոյթին: Սորբրդային հաւատաւոր գրազէտ մը, ճշմարիտ մարքտական մը ո՛չ միայն նման մեղադրանքներ պիտի չընդունի, այլեւ պարզապէս զանոնք պիտի չհասկնայ: Կրօնական մարդ մը ի՞նչ ազատութիւն կրնայ պահանջել իր Աստուծոմէն: Չայն աւելի՛ եւս փառաւորելո՞ւ ազատութիւնը:

Ժամանակակից քրիստոնեաները, որոնք հրաժարած են իրենց ողբկան պահգէն՝ որդեգրելով անհատապաշտութիւնը իր ազատ ընտրութիւններով, ազատ մըրցակցութեամբ, ազատ մամուլով, երբեմն շարաշար կը դարձան զազատ ընտրութիւն» արտայայտութիւնը, զոր

(6) Կոմիտսի Կեդր. կոմիտի կրօնամագիթ՝ «Զվեստ» եւ «Ենիկերաս» համընկնելու մասին (14 Օգոստոս 1946):

Քրիստոս, կը թուի, մեզի ներկայացուցած էր: Ասիկա կը նմանի ապօրինի փոխառութեանը խորհրդարանական դրութեան, որով լաւ անտեսաժարութիւն ըրած են, իսկ որ չի նմանիր Աստուծոյ Քաղաւորութեան, զէթ անոր համար, որ դրախտին մէջ ո՛չ վարդապետը կ'ընտրուի եւ ոչ ալ նախագահը: Ընդունեալով որ Աստուած անհունօրէն տգաւա-հան է, ընտրութեան միայն մէկ ազա-տութիւն կու տայ մեզի, - հաւատալ կամ չհաւատալ, ըլլալ Իրեն կամ սատանային հետ, դրախտ կամ դժոխք երթալ: Գրեթէ նոյն իրաւունքն է, զոր մեզի կ'ըն-ծայ համայնաժարութիւնը, - ա՛ն, որ չի հաւատար, կրնայ բանա մնալ - որ ու-շինչով աւելի յոյժ է, քան դժոխքը - : Իայց անո՛ր համար, որ կը հաւատայ, խորհրդային դրազէտի մը համար, որ համայնաժարութեան մէջ կը տեսնէ իր սեփական եւ ամբողջ մարդկութեան գո-րութեան նպատակը (եթէ այսպէս չի մը-տածեք, տեղ չկայ անոր համար ոչ մեր դրականութեան եւ ոչ ալ մեր ընկերու-թեան մէջ), նման անել չի կրնար գոյու-թիւն ունենալ: Համայնաժարութեան հաստատացողի մը համար, ինչպէս ար-գարօրէն դիտել տուաւ Խրուշչեւ ար-ուեստի հարցերու մասին իր վերջին յար-տարարութիւններէն մէկուն մէջ, զար-ուեստագէտի մը համար, որ հաւատարմո-րէն կը ծառայէ իր ժողովուրդին, հարց չէ դիտեալ, թէ ազատ է կամ ոչ իր ըս-տեղծագործութեան մէջ: Հարցը սեղանի վրայ իսկ չի գար, - նման արուեստա-զէտ մը կատարելապէս դիտէ, թէ ի՛նչ-պէս պէտք է մտնեալ իրականութեան երեւոյթներուն, պէտք չունի գլարմո-րելու: Եւ ոչ ալ ինքնապարտադրանքի: Համայնաժարական իր համոզումներուն համաձայն իրականութիւնը հարազատ-րէն ներկայացնելը իր հոգիին մէկ պա-հանջն է. ամուր կը կենայ իր դիտարուն վրայ, զանոնք կը հաստատէ եւ կը պաշտ-պանէ իր գործին մէջն:

Ուրախառիթ նոյն գիւրութեամբ է, որ այդ արուեստագէտը կ'ընդունի կու-տակցութեան եւ կառավարութեան, Կեդ-

րոնական Կոմիտէին կամ անոր Ա. զար-տուղարին ցուցումները: Ո՛վ աւելի լաւ դիտէ, եթէ ոչ կուտակցութիւնն ու ա-նոր պետը, թէ ի՛նչ տեսակ արուեստի պէտք ունինք: Քանզի կուտակցութիւնն է, որ մեզ կ'առաջնորդէ նպատակին՝ հատման մարքսիզմ-լենինիզմի ըլլոր կանոններուն, քանի ան է, որ Աստուծոյ հետ տեսական շփման մէջ կ'ապրի ու կ'աշխատի: Ուրեմն կուտակցութեան եւ անոր պետին անձին մէջ մենք ունինք ամէնէն իմաստուն, ամէնէն փորձառու, ամէնէն ձեռնհաս առաջնորդը ճարտա-րարուեստական, լեզուաբանական, երա-ժրչական, փիլիսոփայական, նկարչա-կան, կենսաբանական եւ այլ հարցերու մէջ: Ան մեր բանակին եւ պետութեան պետն է միանգամայն, մեր Գրմապետը: Նո՛յնքան ծանր մեղք մըն է կասկածիլ անոր խօսքերուն, որքան՝ Արարիչի կամ-քին:

Ահա ասոնք են զեղադիտական ու հո-գեբանական այն ծանօթութիւնները, զորս անհրաժեշտ է դիտեալ, եթէ կ'ու-զենք թափանցել ընկերվարական իրա-պատութեան գաղանթին:

Ընկերվարական իրադաշտութեան գործերը այլպան են նիւթով ու ոճով: Իսկ իւրաքանչիւրին մէջ, տառացի կամ պատկերաւոր իմաստով, ակնհեւ կամ զողարկեալ ձևի մը մէջ, ներկայ է նը-պատակը: Կամ համայնաժարութեան եւ անոր կապուած ամէն բանի գոգեբարու-թիւն մըն է, կամ անոր բազմաթիւ թըլ-նամիններուն զէմ երգիծանք մը եւ կամ մէկ պատկերը կենքի՛ գիր յեղափոխա-կան զարգացման մէջն, այսինքն, կըրկ-նենք անգամ մը եւս, զէպէ համայնաժա-րութիւն իր շարժման մէջ:

Խորհրդային դրազէտը, որ որով նիւթ մը ընտրած է, կը փորձէ վայն ընդ-զըրկել ճշգորտուած համառօտութեան մը մէջ, գտնել անոր թաքուն կարեւու-թիւնները՝ թոյլ տալով ընդնմարել չը-քեղ նպատակը, որուն ուղղութեամբ կ'ընթանաք: Ահա թէ ինչո՛ւ խորհրդա-յին դրականութեան նիւթերուն մեծ մո-տը կը գտորոշուի արեւելումի աղըն-

բարի նմանութեամբ մը, յառաջագունէ ծանօթ, որ թէնև տեղի, ժամանակի, պարագաներու եւայլնի տարբերակներ կը պարունակէ... բայց անյեղի կը մընայ իր խոր թափին եւ գոյութեան պատճառին մէջ, - անպատ մը ե'ւս եւ միշտ յիշեցնել համայնազարութեան յաղթանակը:

Այսպէս, ընկերվարական իրապտելութեան իւրաքանչիւր արտադրութիւն, նոյնիսկ լոյս առնելէ տուալ, երաշխաւորուած է ուրախ հղրակացութեամբ մը: Այդ վախճանը կրնայ տխուր ըլլալ հերոսին համար, որ, պայքարելով ի իրենդիր համայնազարութեան, հնարաւոր ամէն վտանգ կը զննագրուէ: Բայց վախճանը միշտ ուրախ է նպատակի տեսակէտէն, որ զերկվեր է անհատէն. եւ հեղինակը, իր անունով կամ հերոսին քերտով, որ կը մեռնի, չի մոռնար հաւատքի հաւաստիք մը տալ մեր վերջնական յաղթանակի մասին: Կորուստ աւուրընները, խորտակուած յոյսերը, չիրազործուած երազները, ա'յնքան յատկանշական ուրիշ դրութեանց գրականութեան, հակառակ են ընկերվարական իրապտելութեան: Նոյնիսկ եթէ հարցը կը վերաբերի ողբերգութեան մը, ատիկա զբաւանս ողբերգութիւն» մըն է, հետեւողարար Վ. Վիշնեւսկիի խորագրին, զոր տուած է իր թատերախաղին (որուն վերջաւորութեան՝ հերոսուհին կ'անհետանայ եւ համայնազարութիւնը կը յաղթանակէ):

Համոզուելու համար այս ճշմարտութեան, կը բաւէ արեւմտեան եւ խորհրդային գրականութիւնէն քանի մը խորագրերէր բազմաաւութեան գնել, - Մէկ կողմէ, - «Ճամբարդութիւն գիշերուամ վախճանի» (Սէլին), «Մահը կէս գիշերիմ ետք», «Որո՞ւն համար կը հնչէ մահազանգը» (Հեմինգուէյ), «Ամէն անձ քայլովիմ առանձին կը մեռնի» (Ֆալաուտ), «Ապրիլու ժամանակը եւ մեռնելու ժամանակը» (Րլմարք), «Հերոսիմ մահը» (Օլտիկիթըն)... Եւ, միւս կողմէ, լայն տարածք մը վրայ - «Յրջանկութիւն»

նը» (Պաւլենկօ), «Առաջին ուրախութիւնները» (Ֆիտին), «Էաւ է» (Մայակովսկի), «Փախաբերու իրականացում» (Կաւերին), «Լոյսը՝ երկրի վերին» (Բարսեւսկի), «Յաղթականները» (Բազրիցկի), «Յաղթանակը» (Սիմոնով), «Յաղթականները» (Չիրիկով), «Գոթքում՝ յաղթանակի մը մէջ» (Փրիբաշեւ), եւայլն...:

Այս հիանալի նպատակը, որուն կը ձգտի ամէն դործ, կրթմն ուղղակիօրէն կ'ողեկոչուի գրական երկի վերջաւորութեան, ինչպէս որ փայտն կերպով ըրած է Մայակովսկի, որ Յեղափոխութեան ետք իր գրած բոլոր կարեւոր գործերը կը վերջացնէր համայնազարութեան մասին խօսքերով կամ համայնազար ապագայ կեանքի եւ պետութեան վերաբերեալ զարմանահարչ տեսարաններով («Եսրիպուար-ժաղ-օփերաներ», «150,000.000», «Ատր մասին», «Վլատիմիր Իլիչ Լենին», «Էաւ է», «Արագ ուժով»): Կորջի եւս, որ խորհրդային կարգերու տակ նախայեղափոխական շրջանի մասին դրեց առաւելաբար, իր վէպերուն եւ առումներուն մեծ մասը կ'աւարտէր («Արտումնովներու խնդրը», «Կիլիմ Սամգինի կեանքը», «Եղար Բալիչով եւ ընկ.», «Գոստիպան եւ ընկ.») յաղթանակող յեղափոխութեան մէկ տեսիլքով:

Նոյնիսկ այն պարագային, երբ գրապէտը չ'ընտրեր այդքան սխալի վախճան մը, այդ վախճանը գորութեան պէս, խորհրդանշականօրէն գոյութիւն ունի գործին մէջ եւ մղում կու տայ նկարագրներու եւ շէպերու զարգացումին: Օրինակ, մեր վէպերէն եւ նորովէպերէն շատերը կեդրոնացուած են գործարանի մը աշխատանքին, կեկարակայանի մը կառուցման, երկրագործական միջոցներու գործադրութեան եւայլնի վրայ... Տնտեսական այս լուծելի հարցը, որ գործողութեան ըլլաւթ թիւն է (կառուցման սկիզբը = հանպոյց, կառուցման աւարտը = վախճանական լուծում), ներկայացուած է իբրեւ անբաժնի մէկ հանգրուանը այն ուղիին, որ զերազմ

Նպասակին կ'առաջնորդէ: Այնքան յըստակորոշ այս տեսանկիւնէն դիտուած, նոյնիսկ թեքելք եղելոյթնեբը (ֆրօսե-սիւս) կրնան ստանալ թատերական տաամաթիւք լարուածութիւն մը եւ հետաքրքրական դառնալ: Ընթերցողը յառաջատուականօրէն կը հասկնայ, թէ նակառակ բոլոր փնտնեքուն, մեքենայ-գործիքը ընթացքի մէջ պիտի դուրս կամ թէ ձեռնարկանակն կոյսուր, ի հեճուելու անմեղստ եղանակին, հաւաքած է ե-գիպտացորենի հարուստ հունձք մը, եւ հոր դերքը կը զօցէ, թեթեւ շունչ մը կը քաշէ, տեսնելով որ քայլ մը եւս առած ենք դէպի համայնազարութիւն:

Որովհետեւ համայնազարութիւնը, ըստ մեզի, պարտաւոր է պատմական ե-զիւլթիւն անխուսափելի ելքը ըլլալու, բազմաթիւ վէպերու մէջ իբրեւ դարձու-ղութեան զսպանակ տրուած է ժամանա-կի անողոք ընթացքը, որ մեզի համար կը դործէ: Վերադառնալ ժամանակին փնտրու-տաքնները չեն, այլ զփամանակի առա-ջընթացն է, որ կը կազմէ խորհրդային պրոպիւն խորհրդածութեան քեմաները: Ան կը փութացնէ կենսական շարժումը, հաստատելով որ անցնող ամէն օր, կորուստ մը ըլլալէ հետո, շահ մըն է մարդուն համար եւ ժօանցումն է ըզմա-լի էտէային, հոգ չէ թէ մէկ միլիմետր-րով:

Նոյն մեղով մեր դրականութիւնը յաճախ պատմութեան կը դիմէ, անցեալ թէ ժամանակակից, որուն զրուագները (քաղաքային պատերազմ, հողերու հա-մայնացում եւ այլն) եւս նոյնպէս հանդրուաններ են մեր ընտրած համբուն վրայ: Իժբախտաբար, ուելի հին դա-րաշրջաններուն համար, դէպի համայ-նազարութիւն վերելքը քիչ մը աւելի դժուար է ապացուցել: Այսուհանդերձ, նոյնիսկ ամէնէն հեռուոր դարերուն մէջ, խիլմիտ վրադէտ մը պիտի գիտնայ ջո-կել «յառաջդիմական» երեւոյթները, այսինքն այն երեւոյթները, որոնք սա-տարեցին ի վերջոյ մեր այժմու յաղթա-նակներուն ապահովման, կանխակալօ-րէն՝ այդ երեւոյթները յիշեալ դարե-

րուն կու տան այն նպատակը, որմէ զըր-կըւած էին: Գալով անցեալի յառաջդի-մական մարդոց (Մեծն Պետրոս, Իւան Աւել, Պուշկին, Ստենկա Բապին (7)), առանց ճանչցած ըլլալու զհամայնազա-րութիւնն բոլոր, շատ յատկօրէն կ'ան-դրադառնային, թէ լուսաւոր ապագայ մը կը սպասէր մեզի, եւ դայն անխոնջօ-րէն կը շեփոթէին իրենց պատմական վէ-պերուն մէջ, հրճուեցնելով ընթերցողին սիրտը իրենց պարմանալի կորովամտու-թեամբ:

Վերջապէս, գրադէտին երեւակա-յութեան կ'ընծայուի անսահման ուրիշ դաշտ մը, - հոգեբանական աշխարհը մարդուն, որ ներքնապէս նոյնպէս կ'ուղ-ղուի դէպի նպատակը, պայքարելով զիր գիտակցութեան մէջ եղած քաղցրի անց-եալի մնացուկներուն՝ դէմ, վերադաս-տիարակուելով կուսակցութեան կամ պինք շրջապատող կենքին ազդեցու-թեան տակ: Խորհրդային գրականու-թեան մէկ կարեւոր մասը դաստիարակիչ վէպ մըն է, ուր ցոյց կը տրուի անհատ-ներու եւ ամբողջ հաւաքականութիւնե-րու համայնազարական կերպարանափո-խութիւնը: Իրապէս, մեր գիրքերէն շա-տերը իբրեւ առանցք ունին հողեբանա-կան ու բարոյական այս եղալըմումը, որ կը հասնի մինչեւ ապագայ իտէալ մար-դը: Կորթի «Մայրը» օրինակ մըն է այդ առնչութեամբ, - խնդիրը կը դառնայ տղէտ եւ կրաւորական կնոջ մը գիտա-կից յեղափոխականի փոխակերպման շուրջ (գրուած՝ 1906-ին, այս գիրքը նը-կատուած է ընկերդարական իրապաշ-տութեան առաջին տիպար նմոյշը): Մա-կարենկոյի «Մանկավարժական քերթը-ւածը»՝ նոյնպէս (թէ ինչպէս երիտա-սարդ ոճրագործներ կը մտնեն պարկեշտ ու յառանգի ուղիին մէջ) կամ սակաւին վէպը Ն. Օստրովսկիի, որ մեր երիտա-սարդութեան կը պատմէ, թէ ինչպէս

(7) Ստենկա-Բապին, կոզակ եղակաւոր ա-նպիւրդ, ժողովրդային շատ կարեւոր ապե-տամբութիւն մը զիկավարքց 1686-1671:



պողպատը ջլոյեղուեցաւ՝ քաղաքացիական պատերազմի կրակին կամ համաշխարհային պատերազմի առաջին աշխարհամարտներու ցուրտին մէջ:

Երբ երկին անձնաւորութիւնը բաւական չափով բերազատարակուած է՝ ամբողջովին ուղղուած ըլլալու եւ ասոր պիտակցութիւնը ունենալու համար, կըրտայ անմիջապէս մուտք պարծել ընդհանուր յարգանքով շրջապատուած այն սուսանձաշնորհեալ զատուէ մէջ, զոր «Իրական Հերոսներ» կը կոչեն: Ընկերովարական իրապաշտութեան Սրբութիւն Սրբոցն է այս, անոր փորձաքարն է եւ պիտաւոր իրագործումը:

Դրական Հերոսը միայն բարի մարդ մը չէ, Հերոս մըն է, զոր կը լուսաւորէ ամէնէն իտէալական իտէալին լոյսը, տիպար մըն է, արժանի՝ բոլորին օրինակ ծառայելու, «մարդկութեան մէկ լիւր», որուն կատարէն ապագան կը տեսնուի», բառ Լէոնիտ Լէոնովի սահմանումին: Ան անթերի է՝ կամ եթէ թերութիւններ ունի, փոքր չափի վրայ են (կը պատահի երբեմն, որ խիստ բարկութեան մէջ ինչայ), որպէսզի որոշ ճշմարտութիւն մը պահէ եւ նաեւ կարենայ իր մէջէն քննելիք բան մը ունենալ՝ ամէն օր աւելի ու աւելի բարձրացնելու համար իր քաղաքական ու բարոյական մակարդակը: Սակայն եւ այնպէս, այդ թերութիւնները պէտք չէ շատ մեծ ըլլան եւ մասնաւորաբար պիտի չկարենան դէմ երթալ անոր հիմնական բարեմասնութեանց՝ հաւասար ուժով: Շատ դժուար է թուել զրական Հերոսի այդ բարեմասնութիւնները, — գաղափարաբանական համոզուածութիւն, յանդիմութիւն, խելացութիւն, կամքի ուժ, հայրենասիրութիւն, յարգանք՝ կնոջ, զոհարարութիւն ընդունակութիւն եւայլն, եւայլն... Ամէնէն էականները, բնականաբար, պայծառատեսութիւնն ու մաքրութիւնն են, որոնց միջոցով կը տեսնէ նպատակը եւ Անոր կողմը կ'ուղղուի: Ուրիշ՝ ապշեցուցիչ ճշգրտութիւնը՝ իր բոլոր արարքներուն, ճշակին, մտածումներուն, ըզպացումներուն եւ արողութեանց, Ինք-

նախտահարէն դիտէ ինչ որ լաւ է եւ ինչ որ զէչ է, միայն զայն կամ գոչ կ'ըսէ, սեւն ու ճերմակը չի շփոթեր, անոր համար ներքին կասկածներ, վարտնումներ, այլուծելի հարցեր, անսուզելի զաղտնիքներ չկան, եւ անգամ ամէնէն խառնափնթոր խնդրին լուծումը դիւրութեամբ կը գտնէ, ուղղակի՝ նպատակին քաշելով:

Երբ առաջին անգամ հրեւաց կորեկի պործին մէջ, 1900-1910-ի միջեւ, եւ երբ ան հրապարակաւ հռչակեց իր բանաձեւը. — «Միշտ պէտք է յոտակօրէն այդ կամ ոչ ըսել», շատեր զարմանքով համակուեցան անոր բանաձեւերուն յիսուածութիւնէն եւ անթեքելի վճռակամութիւնէն, իր շրջապատին քարոզ կարգալու եւ իր սեփական առաքելութեան վրայ պերճաբար մենախօսութիւններ արտասանելու ձգտումէն: Ձեխով, որ յաջողած էր կարգալու «Մանր քաղփնիները», ամօթահար յոնքերը պոստոց եւ Կորեկի խորհուրդ տուաւ թիչ մը մեղմացնել իր Հերոսին ճոճան յայտարարութիւնները: Ձեխով ժամտախտի չափ կը մտնար յաւակնոր միտքէն եւ կը գտնէր, որ այդ բոլոր շնչուն զարժուածքները (Փրոպ) ուսաբնաւորութեան խորթ պարծենկոտութեան մը Հետեւանքն էին:

Բայց Կորեկ հաշուի շատաւ ըսուածը: Ան չվախցու ոչ մեղմարանքներէն եւ ոչ ալ ծաղրանքներէն զայթակղած մտաւորականութեան, որ ինք իրեն Հետ մըցելով կը կրկնէր, թէ նոր Հերոսը համարակ է եւ սահմանափակ: Կ'ըմբռնէր, որ ան ապագայի մարդն է եւ որ ճամբայ պիտի կտրեն սուրի պէս անողքելիօրէն շխալ եւ ամուր մարդիկը միայն» («Մանր-քաղփնիները», 1901):

Այդ օրէն ի վեր երկար ատեն անցած է եւ շատ բաներ փոխուած են: Իրական Հերոսը ներկայացուած է զանազան կերպարանքներու մէջ, այս կամ այն ձեւով զարգացնելով այն զրական տարրերը, որ հարազատ էին իրեն, մինչեւ այն պահը, ուր չափահաս դարձաւ, ամրացաւ եւ վերականգնեցաւ իր ամբողջ վիճակը: Երեսունական

թուականներուն էր, երբ խորհրդային գրողները լքեցին իրենց խմբաւորումները եւ Հրատարեցան գրական հոսանքներու այլազանութենէն՝ պրեթէ միաձայնութեամբ որդեգրելու համար լուսագոյնն ու ամենէն յառաջդիմական հոսանքը, - ընկերփարական իրապաշտութիւնը (8) :

Կարգաւորվ զերջին երեսուն տարիներուն գրական արտադրութիւնը, մարդ առանձնապէս լաւ կը զգայ զրական հերոսի ամբողջ զօրութիւնը, - նախ եւ առաջ լայնօրէն տարածուած է, գրականութիւնը ամբողջովին լեցնելու ատարձան: Կարելի է գտնել գործեր, ուր բոլոր Հերոսները գրական են: Ասիկա բընական է, - մենք կը մտենանք նպատակին, եւ եթէ արդիական խնդիր մը յուզող գիրք մը նուիրուած չէ թշնամիներուն գէժ պայքարին, այլ նուիրուած է, օրինակ, առաջապահ կոլեկտիվ մը, ուրեմըն բոլոր անձնաւորութիւնները կրնան եւ պէտք է ըլլան յառաջդիմական, - բացասական տիպեր ցոյց տալ անտուզն արտօրինակ պիտի ըլլար: Ահա թէ ինչու կը տեսնուին վէպեր եւ առամաներ, ուր ամէն ինչ տեղի կ'ունենայ Հանդարտօրէն, ինչպէս օայլակի մը վրայ: Եթէ պայքար մը զոյութիւն ունի Հերոսներուն միջեւ, ասիկա միայն յառաջդիմականներուն եւ գեր-յառաջդիմականներուն միջեւ է, լաւերուն եւ լաւագոյններուն միջեւ: Անոնց Հեղինակները (Բարսեղի; Սուրբով, Սոֆրոնով, Վերտա, Գրիբաշով եւայլն) (9) երկինք բարձրացուցան եւ իրրեւ օրինակ արդուեցան ուրիշներուն: Ընչէն է, որ ՁՕ-րդ Համագումարէն ետք, շատ ալ յայտնի չէ թէ ինչու, թեթեօրէն դիրք փոխուեցաւ անոնց հանդէպ եւ մարդիկ սկսան զերէն նայիլ անոնց ա'յն պատրուակով, թէ զանպայքար» (ճանկոնֆլիկտային») գերականութիւն մը մշակած էին: Եւ Հակառակ անոր, որ Ն. Ս. Խրուշչեւ անոնց պաշտպանութիւնը օտանձնեց եւ այդ ձեւով մեղմացուց այն մեղադրանքները, որոնց նշանակ էին, այդ քննադատները տակաւին երբեմն իրենք զիրենք լսելի կը դարձնեն կարգ մը մտաւորականներու զատողութեանց մէջ - ինչ որ կատարելապէս անարդար է:

Փափաքելով ամօթով չմնալ Արեւմուտքի առջեւ, երբեմն կը դադրինք արժամարանական ըլլալէ մենք մեզի հետ, եւ կը մղուինք մեծաշնորհ յայտարարութիւններ ընելու անձնաւորութեանց այլազանութեան ու մեր ընկերութեան շահերու բազմազանութեան մասին եւ, Հեռուաբար, բազմաթիւ կարեկրութեանց մասին ներքին պայքարներու (ՔՅՓիի) եւ Հակասութեանց, զորս գրականութիւնը կոչուած է ցոլացնելու:

Ա. Գ. ՍԻՆԵԱՎՍԿԻ

(Շար.)

(8) Գրական խմբաւորումները ընդունեցան եւ փոխադրեցան Խորհրդային Գրողներու Միութեանը, որով առաջիկ համագումարը տեղի ունեցաւ 1934-ին:

(9) Միջակ տաղանով գրողներ, որոնց քաղաքական կատարծալ յարմարադաշինքը Մտալինեան մրցանակի արժանացուց շատերը:



# ԴԵՎՔԵՐ

## Գ. ՎԱՐՈՒԺԱՆ

Հայաստան:

Ու Հայոց դարերը, ուզանքու հին կարուան, անցելին հետու, մէղուճուշու խորունկներէն եկող: Ու Հայոց մեծ տուրքերը, մեծ յատկացումները, մեծ ու վերջ շունչոյ հատուցումները՝ ինքնալինելութեան մը, ինքնատիպ ոճի մը, բացարձակ բանի մը բնաւ չյաղկեցող, այլ միշտ բաղձապատկուող ծարաւներուն համար վճարուած: Մեծ տուրքեր, որոնց մեծ անուններն են՝ արիւն, նահատակութիւն, դիր: Լոյսին երթալու անվերադարձ ցանկութիւն: Եւ այս բաներուն ու բացատրութեանց նմանը եւ անոնց մեծ հոմանիշները, - հերոսութիւն, ընդդիմութիւն, բարոսութիւն, ապրելու եւ տիեզերականութիւն մը նուաճելու կարժիր կամք, ինքիբ հաւաքականութիւնը հասարակէն ազատագրելու եւ իրրեւ պատմութիւն ու իտէլայ զայն ճարտարապետներու գերիվեր ուխտ, երդում:

Ազգային մեծ տուրքերը, - հա՞րկ է միթէ ըսել - համամարդկային մեծ ուխտեր են, մեծ արարքներ, ճակատագիրի նման բաներ, - անխուսափելի եւ չքեղ: Հայրենապահութեան ու Հայրենական անյապ ծարաւին մէջ, մեծ տուրք մը չէ, փոքր տուրք մըն է դրամը: Պետական է, պարտոգիր ու պատիկ: Կը բարեզարդէ երկրին մակերեսը, կը զննեցկացնէ, կու տայ փայլ: Անհրաժեշտ է Հացի ու հարուստի այդ հասարակ տրեսեանութիւնը:

Այդպէս չէ արիւնը: Մեծ վճարում է, պարտադիր ըլլայ թէ ազատ: Հայրենական է աւելի քան պետական, ու կը



յաւերժացնէ երկիրը, կ'ընդլայնէ զայն ողկկան տարածութիւններու եւ խորիտներու վրայ: Աւելի բարձր տնտեսութեան հիմք է քան որեւէ դրամ:

Հայրենիքն ու համայն աշխարհը կ'ընդլայնեն ու յաւերժական որակներու մէջ կը գետնդնն մանաւանդ՝ ողկկան ու յեղափոխական վճարումները, հագիի եւ մտքի յատկացումները, որոնք ամբողջական եւ առատ հատուցում են:

Այսպէս՝

Հիմնական ու յաւիտենական վճարում է ողկին, Հիմնական ու յաւիտենական վճարում է Արուեստը, Հիմնական

ու յաւիտենական վճարում՝ ճշմարտութիւններ որոնող միտքը:

••

Արդ եւ միշտ, մենք այն ժողովուրդն ենք, որ հսկայական եւ բարկ վճարումներով դարձած է ազգ: Որոշ երկիր, որոշ պատմութիւն, որոշ մշակոյթ: Սահման: Ու ոգեկան ու աշխարհագրական այդ սահմանին մէջ՝ մարդկային տեսակ: Դարձած ենք այսինքն՝ ինքնատուութիւն, ոճ:

Եւ Հայկ նահապետէն ասդին ու այն օրէն ի վեր երբ կրցանք սեփական առասպել հիւսել մեր լեռներուն վրայ եւ ապառաժներուն շուքին տակ, մենք այլեւս մարդերու խառնափնթոր բաղմութիւն չենք, ոչ այ հոս հոն ցրուած տարտամ հաւաքականութիւն ենք: Սենարին եւ բարեխոնան մարդերու զորչութեան վրայ թքելէ յետոյ, մենք արդէն վերելք կատարող եւ բարձր ինքնատուութեամբ օժտուած ազատներ ենք, անկաշկանդներ: Առանձին եւ անօրինակ ոճ ենք, բարիք մը այսինքն: Ու բարձունք մը նաեւ՝ վասնզի բարիք եւ բարձունք մըն է ինքնատուութիւն մը կամ ոճ մը ըլլալը: Իմաստութեան եւ ինքնազոտման այդ զերիվեր կէտին հասնելու համար, մենք պիտու պտոյտ տուող հարկեր վճարած ենք այն ամէնէն՝ խորհրդաւոր մէկ հարկահաւաքին, որ մեր հայրենիքն է, - Հայաստանը:

Վճարած են դարերը: Վճարած են հայրենիքին, Հայաստանին նահանգ առ նահանգ, դաւառ առ դաւառ, տեղ առ տեղ:

Այսպէս՝ Վճարած է Այրարատեան աշխարհը, Տարօնը, Սիւնիքը, Վասպուրականը, Կարինը, Կիլիկիան, Հոն ուր ապրած է Հայը, երկրէն ներս թէ դուրս: Հայրենական մեծ հարկատուներու շարքին է նաեւ Սերաստիան, որ տուաւ մշակութային անձման Ուխտի մը հիմնադրը, - Մխիթար Սերաստացին: Տըւաւ մեր յեղափոխութեան ամէնէն պանծալի գէմքերէն մէկը, - առաջադիական

Մուրատը: Ու տուաւ Հայ ազգին ամէնէն տոկուն եւ շքեղագիր մէկ բանաստեղծը, - Դանիէլ Վարուժան:

••

Բրզնիկ: 1884:  
Ու Վենետիկ: Ու Կանտ: Ու Պոլիս: 1915: Այսչ: Ու Ապրիլեան համատարած մառախուղ, ու համատարած մահ:

Կը տեսնէ՞ք, խիտ կեանք մը. փայլուն եւ ահռելիօրէն ամփոփ, ազամանդի պէս: Հարուստ, հոծ, եղբրական վերջաբանով պոյութիւն մը՝ երեք տասնամեակի վրայ տարածուող: Դրէք ասոր մէջ մանկութիւն, վճիտ ջուրեր, ուռնիներ, լոյսով ու ջերմութեամբ ողողուած մաքրամաքուր բնութիւն մը, պանդուխտ հայր մը, կռուելի տխրահագագ երգեր, ազգատութեան ու կարօտի մէջ հարուժալ եղած բոյր ու բարութիւն մայր մը, ապա նաեւ երկար, կարծես անառաւօտ ձմեռնազիշերները Սերաստիոյ ցուրտ տարածութիւններուն վրայ: Ու թոնրատուն, ու չեքիաթ: Ու լինկիթիօր, ու էնիշերի:

- «Հովը կու դար բուխերիկին մէջ մերթ եւ մերթ դեւի ձագի նման լար»: Հայկական Բարձրաւանդակի գէշեր է ասիկա, հոն ուր Օսմանցի կայ:

Դրէք երեք տասնամեակի նոյն կարճ ժամանակաշրջանին մէջ յետոյ երկու տարուայ Պոլսոյ կեանք եւ պատանեկութիւն: Կոտորածի գէշ թուական մը ճիշդ այդ օրերուն, երբ տասներկու տարեկան զերգայուն տղեկ մը արեան անհուն սարսափի մը մէջ յուսահատօրէն իր հայրը կը փնտռէ ու կը գտնէ զայն բանտի մը խորը, ճրիօրէն ամբաստանուած: Պոլիս մը, որ զարոց եւ Մօտայի ծովագի է միայն ու Դուրեանի շիրիմ. որ անծանօթ, չեղու եւ կարծես թշնամի շքեղութիւն մըն է միշտ, ու նոյն ատեն ստեղծալի, անմիջապէս քովիդ կեցած իրարեւ հայր ու բարեկամ պանդխտութիւն՝ քանի որ հայ ես ու մանաւանդ դաւառնէն:

Դրէք կարճ այդ կեանքին մէջ նաեւ

չորս տարուայ Վենետիկ մը, ու կատարի կապ մը զբարբաբն ու Հայոց բաղմամբ արթնացնող պատմութեան հետ: Երկրորդ կատարի, մոլեզի կապ մը այս անգամ՝ ինչ որ ուսում է, ինչ որ նորութիւն, ինչ որ գեղեցկութիւն: Ու գեռ որքան ուրիշ կատարութիւններ՝ որոնք մեր հոգին գէպի լոյսն ու Անհունը կը դոճարեն շարունակ: Այլիան, իսալական գրականութիւն, մեծ դի խոհեր, երազանք: Յոյսեր, սրունք դեզ կ'ուտեն ոչ թէ իրենք կշտանալու, այլ քեզ կշտանցնելու համար միայն:

Պիտի դնէք սուպ Կանա քաղաքը իր համայնարանով, եւ աշխարհ մը տառապանք նորին ու աշխարհ մը ընթերցումներ: Հնդկական լայնահուն մատենարաններ, հարկական գրականութիւն ու Մեթերլինկ: Պիտի դնէք ժրնեւ ու Հայ յեղափոխութիւն, ապստամբութիւններ, իարգեր, Ֆետայի, «Դրոշակ», Լեմանի ին եւ Միամանթո: Անվերադարձ յարումներ, գաղափարական գետնի վրայ. անբախտելի եւրոպականութիւններ՝ զրշի մարդէն ներս:

Յետոյ՝

Պիտի վերադառնաք Պոլիս, պիտի շնաք, պիտի երթաք ու երկու տարի մնաք գաւառ: Հոն է Զպուքեարեան Դանիէլը. պիտի ամուսնանայ, պիտի վարէ նուիրեալ դաստիարակի կեանք, պիտի տայ իր առաջին դուրս-գործոցը: Գրական Ողիմպոսի բնակիչ է այլեւս ու պիտի մնայ հոն, քանի Հայ բարած տարօրինակ եւ յամա սրբութիւնը, քաջութիւնը ուրիշ խօսքով, կը շարունակ կեանքի եւ գեղեցկութեան պայքարը, ապանջը ճիւղերի մեծ ձայներուն:

Քանի մը տարի եւս Պոլիս, ու խաւար մրրիկներուն ամէնէն խաւար տեսակը պիտի աւարտէ միլիոնաւոր Հայերու հետ նաև այս քաղաքիկ Հայուն կեանքը: Զօհրայ, Զարդարեան, Երուխան, Միամանթո: Ու Սերաստիոյ ամէնէն պայծառ սա աստղը Հայ գրականութեան երկնակամարին վրայ: Ան որ հացը երգած էր ու կը պատրաստուէր երգելու

դինին: Ան որ եղէզնեայ գրչով երգած էր ծիրանի Հայաստան մը, բորբ եւ հեթանոսական, ու Հայութիւն մը՝ Վահագնեան օրերէն ի վեր դիւցազնական եւ շքեղ: Հսկայ պապերու, հսկայ հովիտներու եւ հսկայ խրախճանքներու գոռ ասմունքող մը՝ որ իր ուղեղը վերածած էր բազիլներու առջև ծիսացող իմաստներու կնիքուկի մը:

Կը զարմանա՞ք:

Հայրենիքները աշխատանքի, ստեղծարարութեան եւ ինքնալուսարման աստուածային կայքեր են, միւս բոլոր ազգերուն համար: Թուրքին տեղն է միայն, որ Հայրենիք չէ իրեն, այլ ներքին անստեղծութիւններու ընդարձակ արօտավայր մը: Տասնէն տասնըհինգ միլիոն հայուող սեւ խուժանի մը անօթութեան առջև գրուած հսկայական պնակ մըն է ամբողջ Անատոլուն: Թուրքը զարեք է վեր Հայրենիքի մը չէ որ կը նայի, այլ պնակի մը: Կամ սեռականութեան ու բընապի իննէչութեանց միջավայր մըն է իրեն համար իր Հայրենիքը, կամ ալ պանդներու եւ ինքնախաւարման լայն տարածութիւն: Ամբողջ Փոքր Ասիան գարեր շարունակ Օսմանցիին համար եղաւ մթութեան եւ անգթութեան պարենաւորութիւն վիթխարի կեդրոն մը: Որստութեան կարմիր ու սեւ դասընթացներ աւարտեց հոն ամէն դիւղի եւ քողաքի մէջ, ու քալեց Արեւմուտք, ու քալեց Արեւելք, ու քալեց Հարաւ, հիւսիս: Զարունակներ, չի լմնոր:



Դանիէլ Վարուժան: Մարմար, լոյս, սրտի եւ մտքի քանդակագործութիւն մը, քերթուած առ քերթուած, սող առ սող դրեթէ: Երեւակայութիւն մը՝ միջօրէի արեւի մը պէս պայծառ, բարկ, թունդ: Այս բառերուն եւ ստոնց մերձակից ուրիշ քանի մը բառերու կը վերածուէր Դանիէլ Վարուժան, իր քերթողական լայն վաստակին մէջ: Իր արուեստով հիացող բոլոր հին ու նոր գրիչները, ոմանք շատ գրեւով ոմանք քիչ, գրեթէ նոյն բաները ը-

սին այդ արուեստը բնորոշած ատեն, փանի մը էջ եւ Հաստափոր մենագրութիւններու նոյն գատումները թեւադրել՝ վաւերական տաղանդի նշան մը պէտք է Համարել: Այդպէս է Վարուժան. տասը էջ, թէ Հարիւր տասը՝ բնորուշումի նոյն բառերն են միշտ:

Մարմար, լոյս քանդակագործութիւն:

Ասոնց ետին կայ բուն սէր մը, կիրք մը, պաշտածունք մը գրեթէ: Կայ հեռունքը, վերերն ու խորունկները Հասնելու հզօր արամազրութիւն մը, քայելու եւ շարունակելու գերփոխք եռանդ մը, տենդ մը: Բանաստեղծը կ'ուզէ նրաւածան նոր լուսագրիւրներու առջեւ կենալ եւ արուեստի նոր ճառագայթ ըմպել միշտ: Խորունկ եւ յետակ կամք մըն է ան այդ ուղղութեամբ: Գրարարն ու աշխարհաբարը իրենց տօնական ու մերթնազմական յարդարանքներով կը սպասարկին մեծ քերթողի այդ մեծ կամքին, ինչպէս հրամանատարի մը:

Վարուժան լոյսի եւ կրակներու մեծ անտեսագէտ մըն է նաեւ, վարպետ մը: Գիտէ բառերը դժբաժնել վարպետ սուսերամարտիկի մը սուր պործածելուն պէս: Ու գիտէ մանաւանդ իր երեւակայութեան նժոյզը վարել, արաբական հին անապատներու հին էմիրի մը ազնուական բարձր հմտութեամբ: Վկայ՝ իր Բն-ՔԱՍը, Հրեղէն քերթուած մը, Հրեղէն մի մը կենդանացնող ու զայն արձակող վերելքէ վերելք, բարձունքէ բարձունք, ոլորտէ ոլորտ:

Մեր լեզուի աշխատաւորներուն ամէնէն գերընտիրներէն է ինք, նոյնիսկ փոքր յանցանքներու եւ մանր շուարումներու պարագային. քերթողական կալուածի շքեղագոյն անուն մը, որ կոչուած է իր օրը ունենալու: Հայոց դպրութեան մեծ տօնացոյցին մէջ, բոլոր մեծերու կողքին:

Ունի՞նք շատ անուն իր անունին քով դրուելու արդար իրաւունքով: Չունինք: Նարեկացին վեր ու դուրս համարելով նոյնիսկ մեծ տաղանդներու բոլոր միջրէականներէն, կրնանք Վարուժանին

քով խաղաղօրէն դնել անխաղաղ Միամանթօն, արիւն, սէր եւ աստուածային ցաւեր տրտնջացող Դուրեանը: Ու Մեծարենցը, փոքր ղիջողութեամբ: Ու Թէքէնանը, ու Չարենցը, նորէն փոքր ղիջողութեամբ: Ուրիշ ո՞վ որ գնենք այդ անունին քով, կրնանք հետզհետէ խղճի հարցեր ունենալ:

Բանաստեղծութիւնը, երբ կը սկսի անով դրողիլ բարձրատաղանդ Բրդէնիցին, նուաճութեան է որ կը կատարէ Հայոց մէջ, Պսօփորի ափերուն: Նուաճումնի՞ր՝ որոնց ոչ տարողութիւնը սուգարական է եւ ոչ ալ փայլը: Միամանթոյնի հետ, անոնք մէկ անգամէն կ'իտապատկեն կարծես մեր բանաստեղծութեան որակը իրենց կարճ ժամանակին մէջ:

Այսպէս. —

Յե՛նին Սի՛ՐՏԸ կրակէ մատան մըն է ամէն բնթերցողի ձեռքին մէջ, իր հրատարակութեան օրերուն: Հայկական Պոլիսը, այս հեռուներէն իսկ կը զգաս, թէ կ'աճի այդ դրքով, իբրեւ միտք, իբրեւ զեղեցիկութիւն, իբրեւ շունչ: Կը Հարստանայ մեր բանաստեղծութիւնը սպրտմով, դաղափարով, ուժով ու արտայայտութեամբ: Յրացրով ու Համարձակութեամբ: Կենսքով: Ու մանաւանդ կենսքով: Վարուժան, յեղափոխութեան օրանշունով քալող բոլոր բանաստեղծներուն եւ ոչ բանաստեղծներուն պէս, քաջ է ըստ ամենայնի եւ անվերապահ: Արտայայտութեան փայլուն եւ կոտ սպնդականութեամբ մը ծայրագոյն լրջութիւնով ան կը վերադարձնէ ժեզի քաջութիւնը որ ունէինք եւ զոր կորսնցուցինք, ինչպէս մարդ պիտի կորսնցնէր իրեն հասած ամէնէն զեղեցիկ աւանդը, զատապարտուելով անկէ ետք ստրկութեան հազար բարդոյթի ու բարոյական դաւկութիւններու:

Կրնա՞ր միթէ տարբեր ըլլալ Սեբաստիոյ պայծառ տղան:

Հայոց Աշխարհի մոայլ լուսներուն մրայ յեղափոխութիւնն ու Աւարայրիցը վերսկսած էին արդէն: Հայերը կը բերեղանային՝ իբրեւ սիրտ, իբրեւ գը-

բակն ու զինական կամք: Մարդէ մարդ անցնող ապստամբութեան սրբազան հասնարակ:

Վր տեսնէր Վարուժան:

Գային Սիամանթոն եւ «Գրոշակ»ի դատելի Ղարիպը — Ահարոնեանը: Գար Ռուբէն Զարդարեանը: Հարկ էր շորորդ շքեղարարատ հոգի մը եւս, յեղափոխութեան կողմը աւելի ծանր, աւելի ստատուածակշիռ դարձնելու համար: Ներշնչուելու ըմբոստութեան մրրիկներէն եւ մրրկային խօսքեր նետելու դէպի Սասուն եւ անդին, դէպի Վան եւ անդին, դէպի Երզրում եւ անդին: Ձէնքի խմբակներուն թիւը կ'աւելնար, պէտք էր Գաւենար նաեւ մտքի խմբակներուն թիւը: Հայոց ստրկախաւար աշխարհին մէջ ըմբոստութեան ծիրանի լոյսը ծաղիկ էր վերջապէս. ստատուածային կերպարանքներ կը շարժէին Հայաստան տախարհի լեռներուն վրայ: Ու Սիամանթոն ամպտոպներու եւ ուրականի իր բանաստեղծութիւնը սկսած էր, ի տես Հայկական տատապանքի այս անօրինակ բարկուածին: Ահարոնեան եւ Զարդարեան Ազատութեան զստան ճանապարհներու, խորհրդաւոր ու հին, ու Վահագնեան բաղնիներու, զամբռութեւ, զարնուած որոնողներու եւ հոգեկան արեւափայլ Սուլթաններու զովքը կը հիւսէին հոյակապ էջերու մէջ, լեզուական անկորնչելի գեղեցկութեամբ, թարմութիւն ու եռուող ներարկելով արիւն ու խանդ ու երիտասարդութիւն կորսնցուցած մեր պարականութեան:

Վերադարձ, յեղափոխութիւն ու հեթանոսութիւն կար մթնոլորտին մէջ: Աշտիստներ, Անահիտի եւ Աստղիկան մեհեաններ, կորուսած կոտորուածներ խորունկներէն կ'ելլէին կարծես վեր, դէպի մակերես, դէպի ապստամբութեան եւ յոյսերու գեղեցիկ ներկայ մը: Գրակաճութիւնը իր օրհաններուն անունը կը փնտռէր հեթանոսական անուանացանկի մը մէջէն — ԲԱԳԻՆ, ՄԵՀԵՄԵՆ, ՆԱԽԱՍԱՐԳ:

Աւելի առաջ, երիտասարդ թատերադիր մը, Էւեոն Շանթ, Հին ստատուածնե-

րու սուկալի ներդառի մը կազմակերպած էր, Հայրենադարձի յաղթական արշաւ մը դէպի Սեւանի կրթող կապոյտները:

— Ներողութիւն, Որդի Աստուծոյ, թոյլ տուր այլեւս որ պահ մըն ալ դրադինք Հայութեամբ ու Հայաստանով:

Սկսած էր ամէն տեղ ա'յս դառնալ տիրող մտայնութիւնը:

Ու այդ օրերուն հեթանոսացան կարծես դէնքի եւ մտքի բոլոր խմբակները, բոլոր գինուորները: Սրբ ջասնընտրութեամբ Գրիտոսով ու քրիստոնէութեամբ երզում ընող միւս բոլոր ազգերը ի՞նչ էին բռնած արգէն, չէին մոռցած խաչն ու աւետարանը, չէին հեթանոսացած. քանի՞ կրամ արդարութիւն ունէին ու քանի՞ միլիէկրամ խիղճ...  
Ձ

Վարուժան Հայ դրողներու այս յեղափոխական ու հեթանոսական երթին մէջ եղաւ ամէնէն շքեղներէն: Ոչ ոք իր ընկերներուն մէջ կրցաւ իրեն չափ ետ երթալ, հեթանոսանալ, գեղեցկութիւն եւ կուռք պաշտել: Ոչ ոք՝ երկրպագուն ըլլալ լոյսին ու կիներու մարմնին մարմար մերկութեան: Ան կրցաւ իր ընկերներուն մէջ ռեւէ մէկէն աւելի կարուելի ներկայէն ու ամբողջականօրէն ապրիլ Բագոսական Հայաստանի մը մէջ, նասասարգեան օսկեմննդայ տօնահանդէսներու անվերադարձ հմայքին ենթակայ, գուսան դառնալով, ու խմելով գինի, ու խմելով արեւ:

Հեթանոսական Հայաստան, հեթանոսական Հայութիւն, հեթանոսական ազատ ու մեծ տեսիլք: ՀԱՂՃԸ եւ հսկայ նահապետներու ահաւոր ցանկութիւն. սուպետականութիւն, մարտ ու մահ:

Մթնոլորտ է Վարուժան, իրականութեան ու երազանքի բացառիկ համակցութիւն, գեղեցկութեան եւ ուժի խոր վարկ:

Թող ոչ ոք մէկ վայրկեան չկասկածի: Յեղին Սիրտը տարողութեամբ դրքի մը դիմաց, որեւէ մեծ ազգի մեծ գրակահոսութիւն հպարտութիւն միայն պիտի ըզ-

գար: Քի՞չ պիտի հպարտանար նաեւ  
ոեւէ լուրջ ապսի լուրջ քննադատութիւն՝  
կարգալէ ետք լաւադէններու, Տալիթա-  
ներու եւ Հարճի ու Արեւելեան Բաղնիք-  
ներու բարձրատաղանդ քնարակերին շն-  
քանոս Երգերը:

Այո, թող ոչ ոք կասկածի: Մտտենա-  
դրութիւններն ու անոնց խորութիւնը  
չափած ամէնէն ներհան քննադատները  
հինգ ցամաքամասերուն վրայ, շատ ըսե-  
լիք պիտի չգտնէին գիտողութեան ճամ-  
բով Վարուժանին վերջին երեք գործերը  
քննած պահուն:

Վարուժանին դիւանը հարուստ է եւ  
մաքուր: Տոկուն:

- Հովիբ՝ Կ'անցնին, ծովիբ՝ Կ'անց-  
նին...

Ապուրջբերեան Դանիէլ բանաստեղ-  
ծին խոր ու համամարդկային շունչին  
հաղորդունէն ետք սնկամ մը, ալ ո՞ր  
մէկ գրականութիւնը, Հին ու Նոր Աշ-  
խարհի մէջ, պիտի կրնար մատ բարձ-  
րացնել ըսելու՝ թէ՛ ինք կը ճանչնայ ա-  
ւելի լայն, մաքուր եւ վարակիչ շունչ,  
աւելի ընդհանրական եւ անչափանդէր  
մտահոգութիւն, հասն ու հասցին բարու-  
թիւնը երգի, աշխատանքային սիրոյ  
բարձր կշռոյթի եւ գեղեցկութեան վե-  
րածելու ընդունակ:

Ձենք ճանչնար աշխարհի բոլոր դը-  
րականութիւնները, նոյնիսկ անոնց կե-  
որ: Բայց ինչ որ տեսած ենք եւ կը ճանչ-  
նանք, մեղի իրաւունք կու տայ կարծե-  
լու, որ շկայ, գոյութիւն չունի որեւէ  
լեզու եւ տաղաչափութիւն, որպէսզի կա-  
րենայ հաց մը այս աստիճան համով ըն-  
ծայիլ:

Հացին Երգը:  
Բուն հացն է ասիկա, աշխատանքէ  
մը, բարութիւնէ մը, հողէ մը եւ աղօթ-  
քէ մը ծնունդ տաւ: Հացի մը մայր ե-  
զող այս հիմնական առաքինութիւնները  
չեն վերաբերի միայն բանաստեղծին,  
անոր տաղանդին ընտան պատկերացու-  
մը իրրեւ, այլ նաեւ ու մանաւանդ ա-  
նոնք կը վերաբերին բանաստեղծը լոյս  
աշխարհ ըրած ժողովուրդին: Հայուն  
հացն է, որ առաւելաբար մաքուր է եւ

կը բաշխուի ու կ'ուտուի հարադատին թէ  
օտարին կողմէ բոլորովին ազատ, ան-  
դատն եւ անդժնդակ կերպով մը: Թող  
չըսեն մեզի, մենք գիտենք ուրիշին հա-  
ցերը, դիտենք...

Արեւի, քրտինքի, անձրեւներու եւ  
Աստուածամօր մը ամէնօրեայ բարեխօ-  
սութեանց քաղցր մէկ արդիւնքն է Վա-  
րուժանին եւ իր հիւրապալտ ժողովուր-  
դին հացը: Երգէ ծնած եւ ոչ թէ սպա-  
նութիւնէ եւ արիւնէ: Աէրէ՛ եւ ոչ թէ  
տեսողութիւն գրկող նախանձէ եւ արեւ-  
լուծիւնէ, անօթի ժողջ բարոյական քա-  
ցախներ եւ ցեղային սպաննող մտաղէ  
մը:

Հայուն եւ իր բանաստեղծին հացը:

Հայ աշխատաւորին գերազոյն ըն-  
ծան է ան. ամէն հայ զայն աստուած-  
այն մտի մը, նշխարի մը պէս կ'ընդու-  
նի շարունակ եւ այդպէս ալ կը բաշխէ  
մօտին եւ հեռուն: Ինչ տուածներ կապ-  
ուած են այդ հացին, մանաւանդ Հա-  
յաստանի մէջ: Այսուհանդերձ, Վարու-  
ժան, նորէն հայու յատուկ վեհանձնու-  
թեամբ մը, զանց ըրած է անոր կապուած  
կրակի, սեւի ու դժոխքի բաժինը: Ու-  
ղած է, որ հացի համերգին մէջ սեւ ճայն  
մը չբարձրանայ երբեք, չաղաբառէ ար-  
ար, կալը, սալերուն գեղեցիկ ճամբան,  
ջաղացքը, փուռը, ալիւրն ու խմորը:  
Ուղած է (հայ սրտին ու ազնուութեան  
թարգման ըլլալով) որ հայ բանաստեղ-  
ծին երգած հացը բիւի ու զայ մեզի, ինչ-  
պէս լոյսը կը բիւի եւ կու գայ գարնան  
օրերու ամբասիբ արեւի մը խորունկէն,  
ինչպէս ջուրը՝ չղափայլ աղբիւրի մը  
կարծես հոգիէն:

-- Հովիբ Կ'անցնին, ծովիբ Կ'անցնին,  
Ու ցորեաններս յուշիկ յուշիկ  
կ'արքանան...

Յուշիկ յուշիկ արթնցող այս բա-  
նաստեղծական ցորեանէն է, որ Վարու-  
ժան պիտի պատրաստէ իր հացը, Ե՛րգը  
այսինքն, ու բաշխէ հանուրին: Գեղեց-  
կութեամբ ու տեսակ մը անհունով յեց-  
ուած հաց մըն է ասիկա, որ հողի եւ  
հիւրասիրութիւն կը բուրէ: Հացը կ'անց-



նի տյևես իր ընթացիկ եւ նոյնիսկ ոչ ընթացիկ իմաստէն անդին, նշանակելու համար Վարուժանեան վաստակին մէջ՝ Երզ, Սէր, Լոյս, Իտէալ եւ ինչ որ կը բուսնի Բանտկանութեան եւ սրտի հեռաւորագոյն ու բարձրագոյն արտերուն մէջ: Այսպէս:—

Հաց չէ միտն ստիկոս, այլ նաեւ սրբութիւն է, հողիի պայծառութիւն, սիրոյ եւ աշխատանքի լայնածիր սահման: Ու նորէն:—

Հա՞ց է տոխա, թէ հացէ աւելի, հայրական անհուն տրամադրութիւն մը, ծնողական բարձր կերպով ու խորհրդաւոր կերպարանափոխութեամբ արտայայտուած հանուր մարդկութեան վերեւ: Հա՞ց է, թէ կեանքին վրայ աշխատանքի ու սրբութեան կանաչ հովանի մը տնտնելու բաղձանք, իր ենթագիտակից վիճակին մէջ:

Վարուժան: Ունինք իրմէ աւելի լուսեղը, աւելի հեռուն գացածը, մրրկայինն ու զարտու-


ղին, տարատաղանդ մարդիկը՝ այս ու այն անունին մէջ: Շատ չեն բնաւ, քայց ունինք: Չունինք սակայն բանաստեղծութեան մէջ իրմէ աւելի բարձրորէն հաւասարակշիւը: Լոյսերու եւ ստեղծարար մեծ ուժերու զարմանալի եւ շքեղ հաւասարակշիւութիւն մը կայ իր մէջ: Կերպարանափոխութիւն մը՝ հարուստ եւ հարըտացիոյ: Իր բարձր տաղանդին մէջ կայ ինքը, գերպահանջ համեմատութեամբ մը կայ իր ժողովուրդը, նորէն՝ դերագանց աստիճանի մը վրայ: ու կոյ ապա ընդհանուր մարդկութիւնը, որ չի կրնար այլեւս իր կարգին դերագանց չըլլալ:

Իր սեփական լոյսէն զատ ուրիշ շատ աստղերու լոյսեր կը վտռին այն աստղին մէջ, որ Դանիէլ Վարուժան կ կոչուի եւ որ Հայաստանեայց Աշխարհի բացառիկ աստղերէն է, Մեսրոպ Մաշտոցէն ու Ոսկեզարու մեծերէն ասդին, ինչպէս Նարեկացին, Դուրեանն ու Սայաթ Նոփան, ինչպէս Արոյեանն ու Բաֆֆին, ինչպէս Սիամանթօն ու Չարենցը:

Ե՛ր. ՊՅՍԱՃԵԱՆ



«ԲԱԳԻՆՆԻ ԳՐԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐԷՆ



«Զուր է անցիւր արար-աշխարհի էստան  
 իրար.

Զուր կը պտայ մէկը շի գէն, միաները  
 զար դեռ կը վազեն:

Զուր է ըսիլ՝ աշխարհի մէջ անմահ,  
 ազատ, հարուստներ կան.

Լոկ զուռնի ճեճ է իրական»:

Քառասուն ամենայն զիգի մը պատմութիւնն է ակնկալածարքը: Մեն պատերի Ուրբաթ օրը, վանքին է՞ծը կը մանէ Լիկեցի, կը գողնայ խաւը, կ'էլէ կտուր բու կտուրիմ չգիտես ուրք: Տակնուգրայութիւն մը կը սակզոնի անմիջապէս: Բարցաւանուծի, բարիքի ու բարբոթութեան խորհրդանիշ խաչին կողմուտը կ'այնկոծէ ողջ գիւղը: Է՞ծը փնտելու եւ խալը վերագանկու անհրաժեշտութիւնը հրամայական կը դառնայ մէկէն: Ետտով երեւան կու զան կարկառուն գէմբերը, աղօթքով, սուրով ու իմաստութեամբ մարդոց տաղանդներուն ու հարցերուն լուծում մերող ուժերը՝ - Տէր Մարտիկն, ասպետ Քաթարեա եւ Ուստա Մակարը: Է՞ծը փնտելու եւ խալը վանկու այս հրատապ ինդրին առիթով՝ Զուր Գեղցիք կը բաժնուին երկու մասի, կը ստեղծուի պաշտօնողական ճակատ մը եւ յեղափոխական ճակատ մը: Պաշտօնողականները աէքսէրին մասնաճամբ ուղղութիւնը կը նախընտրեն ու կը հետեւին տէրտէրին, իսկ յեղափոխականները Քաթարեա ասպետը կը կարգեն իրենց ղեկու ու կ'իջ-

նան ճամբայ: Մէկ կողմէ Աստուած, աղօթք, խնամակութիւն ու միւս կողմէ՝ կորով, կարեւորութիւն, խոյանք:

Տկրուերն մարդերը, նոյն գիշերը, իրենց փնտասուցիներուն ընթացքին, իրենց գիմայ ցըցուած կերպարանքի մը ի տես՝ կը կարծեն, թէ դտան են է՞ծը, որ դայի փոխակերպուած կանգնած է իրենց դէմ: Կը յարձակին վրան: Բայց շուտով կը պարզուի, թէ ո՛չ է՞ծ է ու ոչ դայի իրենց վթնամբն, այլ դրո՛նած են պարզապէս կոծուի մը վրայ: Կորանք: Յուսարեկութիւն: Չբայ կը հասնի Քաթարեա անտարբէր պատգամաւորներէն մէկը ու կը հարցոյ՞, թէ Քաթարեա սպանած է ղեկը ու վերահաստատած խախտած խաղաղութիւնը: Զուռնի ճամբ ու սէնդը, ի լուր այդ ուրտի կանչներուն՝ իր պատշգամին վրայ կը յարանուէր գիւղին իմաստունը՝ Մակար, «Տան սեւ կատուն ռաւերուն է՞ծը»: Մակար կը յիշէ իր սպարած մղձաւանջը: Կտուռն, զոյգ Քաթարեան վերայ կանգնած, է՞ծի կերպարանք արած ու որդի դարձած՝ մեն պատերի նոյն գիշերը կը բանէ

ձեռքէն, կը հանէ վեր ու կը տանի հետը զիս ու ծովերք, ցոյց տալով ու պատճելով մարդոց ահաւոր իրականութիւնը, քէնծրը, բռնութիւնները, աստիճանացած հրդեհները, շնչին ու փուռ զատճաններով սարքած կոհիւնները, ու տակաւին անոնց յիմար արարքներուն արիւնստ հետեւանքները, անշան մտաժախտութիւններէ ստախցած ձեռ նախնիները:

Այս ահաւոր գըրջուպոյտնէն վերադարձած, տառելի իմաստացած, միայն զուռնի մէնին իրականութեան նաւասացող Մակար կը ժտենայ ժողովուրդին, բայց անոնց ուրախութեան եւ յաղթանակի տօնին մէջ պահաւ քան մը կը կրնասէ:

Բայց քէ թաքս, ո՛րք է Մալլան, որ զայ պարէ մեզ հետ ուրախուհանէր երկար ըլլայ թաքս, որ աշխարհը հասցուցիր հաս:

Բայց քէ թաքս, կարծես աշխարհ կատարեալ չէ, քանի մալլան մեզի հետ չէ:

Մալլան, Զոր Գեղէն անդին զանուշ զեղի մը մէջն է ու զիւրը իրն է, ունի միտք, զուրմեհեր, հորհեր ու աղաթին եւ երեք անգամ Մեզքէ զացած մարդ է: Թաթոս նամբայ կ'իջնայ զայն բերելու համար: Կը մերկայաւոր տեղւոյն վերջ ու կը զլիստառի: Կը պարզուի, որ Թաթոս ստղեալը, իրբեւ զեւ սպաննած է Մալլայի ծեղը:

Ա՛յ, ե՛ն չորին, վա՛յ ե՛ն օրին, Լուրամի տող, իճմինն պատգամ, Որ քարտուանով Մեքէ գնաց երեք անգամ:

Յուստիարութիւն ու ըրուպարութիւն: Խուճապ: Տէրտէրին հաստարիմ բազմութիւնը եւ Թաթոսին սպանները իրար կ'իջնան: Եօթը զիւրէն յաղթանակին անսկստարութեան մասակցելու եկանները զլիւրէն կը վերադառնան: Եռուով կը հանին Մալլային միտարները, որուրէ կ'անցնեն ընտելութիւնը ու փլատակի կը վերածեն զիւրը:

Այսպէս կ'աւարտի Զոր-Գեղի պատմութիւնը: Հեքիաթը կ'ըսէ, թէ Զոր-Գեղին տեղ բլուր մը կը մնայ հիմա, կը մնայ ցամաք աղբիւրին տեղը եւ վանքին մէկ պատը: ու բլուրի տակէն, սմէն Ուրբաթ ձեռ պատերին Զոր-Գեղցիք թափօք կ'ազած:

Փնտառուի կ'իլին էծը,  
Այ, ե՛ն էծը, ե՛ն չար էծը,  
Որ տնկեր էր իր կարն ազին,  
Որ քօզեր էր կանաչ այգին,  
Որ մտեր էր բակը վաճկին  
Ու գուցեր էր խաչը անգին:



Այնտեղ մարտի պատմութեան համաստադրութիւնը այս է ու ամբողջութեանը զրի աւելում է պարզապէս համազօր դարձնելու համար մարդոց թաքուն արարքներուն մասին կատարուած ստուգումները: Մարդոց մտքին ու երեւակայութեան տեսարար ներկայացող եւ ենթական շարժումի մէջ զնոյ ուժերու բացալարումին նուիրում չորս մըն է ան, որ մարդը դրած իրական կացութիւններու մէջ՝ կը պնդէ անոր հոգին եւ շարունակ կը հոգնէ ու կը ծաղրէ անոր մտաժախտութիւնները, հերոսութիւններուն ու մեծազորութիւններուն տուն առող պատճաններուն խախտութիւնը:

Այնտեղ մարտին մէջ, ի հարկէ, այն չկայ եւ ոչ ալ խաչ կայ: Կայ մարդը միայն, առեղծուածային իր յարեւանական նկարագրով, միջմայրէ միջմայր, խանուածքէ խանուածք, արիւնէ արիւն տարբեր մարդը, խաղաղ, բռնակալ, շնարար, արիւնարբու: Այժը շար ոգին է, շար լուրը, խանակիլը, մասհոգութիւն ստիպող երեւոյթը, որ աշխարհին կը ներկայանայ զանազան կերպարաններով, տեղ մը զայլէ կերպարանք կ'անէ, տեղ մը դեւի, տեղ մը կատուի, տեղ մը կը երկայանայ նոյնիքն մարդուն կերպարանքով, մէջն անգամ երբ վախ մը, սարսափ մը պատճառելով: Իսկ խաչը խաղաղութիւնն է, արդարութիւնը, հայրենիքի զաղափարին տակ իմանալի զեղեկութիւններուն ու կեցութիւններուն ամբողջութիւնը: Մէկը վտանգն է, միւրը՝ վտանգի ենթական, վտանգին ու վտանգի հնարհուած հարստութեան զիտակցութիւնը, որ շարժումի կը մղէ հոգիները ու կը ստեղծէ բախումը:

Համաստեղ երկու աշխարհներ հանած է զէժ զիմաց, երկու կրօններ, երկու զիւրեր, նոյն զիւրը եւ երկու մտայնութիւններ: Ու հակընդդէմ ուժերու այս բախումին մէջ մերկացուցած է մարդուն հոգին, ցուցադրելով անոր յարափոփոխ, դիւրախար, տանջալի նկարագիրը: Մարդ կանին կամ պարզը մարդկութեան էութիւնը

կրծող այս տկարութիւններուն աւերիլ գործու-  
նէութիւնը ամէնորեայ քաղցեաց դարձած է զը-  
րոզին ու բժժ հանած անոր անկեթեթութիւնը,  
յիմարութիւնը ճիմազելի ընծայող դերակատար-  
ներուն անձնակազմը՝ էնժը, զայլը, ջորին, կու-  
տուն, այսինքն՝ կասկածը, դիւրաբորբոք խա-  
նչւածքը, միամտութիւնը, ընչաբազումութիւնը,  
բիրտ ուժին կիրարկութեան համար անոր բնազ-  
դական հակումը:

Աստուածներէն, աստարաններէն, արուեստ-  
ներէն ու գիտութիւնէն ստալ մարդուն մէջ կա-  
յին աղքատ գործուն տկարութիւնները ու ոչ մէկ ուժ  
կրցաւ հակադէմ անոնց զորութեան: Այնքանո-  
մարտին մէջ շէտը զրուստ է այս կէտին վրայ:  
Անհասարակ ներքին կեանքին վրայ նկատած լոյսե-  
րը տարբեր արդիւնք է մը առջեւ չին դնել մեզ:  
Նոյն վկայութիւնը կը բերին նաեւ Համաստեղի  
կէս դարու փորձառութիւնները: Քանի որ զա-  
րու մարդը բազմաթիւ ասիթներ ունեցաւ հաս-  
տատելու ներքին խօթութիւններու այս զրուստ-  
րութեանը: Նոյնը հաստատելու ամէնէն աւելի աս-  
տիթներ ունեցաւ հայ մարդը: Ատիթ շարունակու-  
նէն, որ խաղաղ սպիտի, սպիտի իր արտոյժ, Աս-  
տուածմով, երգով: Այն էլ խոստովութիւն սերմա-  
նեց իր շուրջը, հաշիւ լզիտեցող շաւի մը առաջ-  
նորոգեց վտանգաւոր ճամբաներէ ու ջորիքի մը  
ստեղծեմ թիւրիմացութեամբ սկսաւ արեւահան-  
չութիւնը:

Այնքանոմարտին մէջ իրապէս կայ մեր ժո-  
ղովուրդին մէկ պատկերը, կայ՝ լեզուական ու  
ունական շորհներին սնկախ պատճառներով, իր-  
բեւ խանութեամբ, ոգի, շարժում, թիւրեւս սմանց  
տարբերակ թուի այս հաստատումը, բայց ու-  
շաղիք ընթերցում մը շուտով կրնան պիտի բե-  
րէր յեղաշին բողիկացուցիլ տարբերը, գործին  
ու իր գործին մէջ: Համաստեղ, իր գործը շա-  
տախելու ու կառուցանելու պահուել, մեծապէս  
օգտագործած է իր ժողովուրդին փորձառութիւն-  
ները: Այնքանոմարտին մէջ զորքույն ուժերուն  
նախադասարկներէն մէկը հայ ժողովուրդն է, իսկ  
միւսը՝ մեր գործուոր թշնամին: Իրապէս իսկ ու  
օրհնութիւն (Տէր Մարութէ) Եկած է մեր ժառո-  
գուրդը, աշխատանք ու արժանապատուութիւն  
(Քաթոս) եկած է ու եկած է ճամարութեան որո-  
նում եւ ամենաբաշխ իմաստութիւն (Առտա Մա-  
կար): Բայց աստեղանկից վայրենութիւնը, բիրտ  
ուժը ինչ-որ անկան պատրուակով մը, ծեր լո-  
րիքի մը աստուղը պատճառ բռնկում՝ եկած ու

վերաբն բնացած է մեր խանութեամբ խորհրդա-  
նըրող խային, աշխատանքին ու իմաստութեան  
վրայ:

Մեր կեանքին մէջ է հնուց անտի երեւան ե-  
կած այս հակադրութիւններ, է հարկէ, պիտի  
մշտին հայ դրապէտը, որ կատարէր այս երկու  
ուժերու բախումն հողիկան ու ընկերային զըր-  
դապատճառներուն հետադարձութիւնը եւ հաղոր-  
դէր ընթերցողին:

Այնքանոմարտին մէջ կայ մեծ պատճառ-  
ներուն մզմաւանջը, մեծ նախճիւրներուն նախազ-  
դուցումը ու ասոնց հետեւանքներուն մէկ իրա-  
կան մանրանկարը՝ դիպի մը աւերումը եւ դի-  
ղացիներուն ջորքը: Այս աղբերակութեամբ չի  
վերջանար ի հարկէ գործը: Որովհետեւ կայ  
ստեղծելի վերականգնումի փորձը, ինչպէս եղած  
է մեծ փորձութիւններու հետեւող մարդկութեան  
ողջ պատմութիւնը: Կայ որոնումը: Անկեղան ի-  
րաւունքը մեզ զգուշաւ տալանապէս: Իր աստե-  
նէն դուրս եկած եւ ուրիշէր աստեղաններուն մէջ  
մտած շարն է մէկ կողմէն ու միւս կողմէն զայն  
զգնանելու յամառ ճիւղը կայ մարդոց մէջ, ար-  
ունք անվկանդ յայտով մը, ամէն տարի

Փնտրտուի կ'իջիմ էմը,  
Ա՛յ, ե՛ս էմը, ե՛ս չար էմը:

Այս անվկանութիւնը, որոնումը, յայտ ինք-  
նին կը հերքէ Համաստեղի այս գործը յոռեան  
գործ համարող մարդոց պիտուքը: Մնաց որ,  
զրապէտի մը ջով Լաստեանութիւնն ու յոռեան-  
տութիւնը մեծ նշանակութիւն չունին արդէն: Կա-  
րեւորը հարապատ ըլլալն է, ընդգրկուած ներքին  
համապատասխան մեւ ու ճաւաղու անոր կարո-  
ղութիւնը: Աշխարհի խուլ մէկ անկան մէջ, իր  
եզուն հետ ու արտին զիմաց սպառող խոնարհ ու  
բարբի մարդ մը ներկայացնող դրապէտը չի կըր-  
նար նոյն մարդը միւսը, երբ կը ճեղքարկէ անա-  
ղակի մը կենդանաբերը սալու գործին: Փրագէ-  
տի մը մեծագոյն յատկանիւններն մէկը այնու-  
կերպիւր այս ընդունակութիւնն է, այլապէս  
տիպարներու մորթին մէջ ժանկու եւ հոմապա-  
տասխան արտրեկուս մէջ անոնց վարքը ընու-  
թաղիքու ունկողմնակալ վերաբերումը: Բարբի,  
ազնիւ, խաղաղ տիպարներուն ջով՝ բարբի, ազ-  
նիւ, խաղաղ են Համաստեղի բառերը, բայց մեծ,  
արիւնյալ ու յաւիտեական երեւոյթներուն հո-  
ղեանական աստուղը կազմելու համար զրապէտին

ժողովրդունք շունթիք միենայն կեցուածքը պահանջելու: Ատիկա պիտի նշանակէր սահմանափակել զբողոքն կարողութիւններն ու իրաւասութիւնները: Ճիշդ է, որ Համաստեղ իր պատմութեանը պարզութեամբ ներկայ չէ այս գործին մէջ, բայց նոյն Համաստեղն է դարձեալ, զրահան տարրեր սեռ մը նուաճած եւ տիեզերական Հարցեր քննարկող նոյն Հնաքրքիր Խորհուրդը, խորհով՝ իրապաշտ, միջոցներով՝ որու Լուսաղէտ, աշխարհահայնացիով՝ հայ:

Համաստեղի լեզուն եւ ոճը ունին Վասուղի Դաւիթ գիտցազներգութեան եւ մեր Ժողովրդական բանահիւսութեան լեզուական ու անուան մթնոլորտն սարրեր: Այս օգտագործումը լայն շարժի մը վրայ կիրարկուած ըլլալով Կանգերձ խոցելի չի դարձներ զգործը, որովհետեւ անոնք ստացած են նա՛ր բովանդակութիւն, անխոցած են աստեղի, հարստացած՝ արուեստագէտին նոր արուածներուն բերած նպաստներով:

Օգտագործել՝ հարստացնելով:

Համաստեղ այս ճամբով անհասկանալի ստացած է իր լեզուն ու ոճը: «Այծնստմարթի տիպական յատկանիշներով ատենանացած երեք տեմ-

նասրութիւններէն եւ էջերէն մեծ մասին մէջ բարտառը դուռ բանաստեղծութեան հարձակոյնն ու շարքաւ: մասերը կը հանդիսանան լեզուական ճիւղերն ու սեռական շնչու երանգաւորումները:

«Այծնստմարթի զիմաց դիտողութիւնը, որ պիտի ուզէինք որմանադրել, գործողութեան գանդալութիւնն է: Ընդհանրապէս բոլոր բաժիններուն մէջ զգալի է այս սկարութիւնը, որ սուկայի ակնբախ կը գտնուի բախումները նախորդով շարժումներու ընթացքին:

Այս գործին ստալ ու հաջ, Համաստեղ գործած է գրել տասնմէն բանաստեղծութիւններ ու պոէմաներ: «Այծնստմարթը, սակայն, բազմաթիւ չէ անոնց հետ. «Այծնստմարթը գործ մըն է, որ կը դրսեւորէ սաղանդաւոր գրագէտին բանաստեղծական ուղի շնորհները:

Յաջորդ էլլին վրայ արմանադրուած հասուական ընթացումը թեքին կ'երաւիտարէ մեք Լզրակայութիւնը:

Պ. Մ.



ՀԱՄԱՍՏԵՂ**ԱՅՄԵՏՈՄԱՐ**

(Հառուած)

«Ես, ես այստեղ, ես ամէն տեղ, ծերուկ Մակար,  
Սկզբանէ միշտ ես կայի, երբ ուր Աստուած իսկ դեռ չկար:  
Մարդերուն հետ, մարդային վեր, ես կամ ու կամ,  
Ես եմ, Մակար, ու պիտի գամ ի միւս անգամ:

Մարդուն, հազին, տարրին մէջն եմ ու միշտ ես կամ:  
Մարդիկ, գար է որ կը սպասեն ի միւս անգամ,  
Ի միւս անգամ նորէն ես է որ պիտի գամ:

Աստուածները մարդկային են, շատեր եկան ու պիտի գան.  
Աստուածներուն եղայ քուսր, եղայ անոնց յուզարկատր.  
Ես եմ, որ կամ յաւերժական  
Ես ամէն տեղ ու յաղթական:

Առանց ինծի աշխարհի հսկայ գերեզման է.  
Ես եմ կեանքը, ես եմ Մահը, որ անմահին շատ նման է.  
Ես էժը չեմ հնազան, ինչպէս դուն կը տեսնես.  
Ես պատկերն եմ քու հոգիիդ, էժը դուն ես:

Աստուածները ուրիշ բան չեն, ծերուկ Մակար,  
Լոկ երեխի խաղալիքներ, հողէ շինուած մտրդոց տկար:  
Կեանք-շարժման մէջ յաւերժական  
Մահուան գուեշտն է իրական:

Էդ կրկնուին ես եմ տէրը,  
Ես կը բաժնեմ ամէն մէկուն իրեն դերը.  
Էս կրկնուր մարդու հոգուն, խռոր գլխուն մէջ է, Մակար:  
Ա՛յ, էդ բեմին բեմավարը ես եմ, Մակար,  
Մարդիկը լոկ դերակատար:

Էս Ձոր Գեղը կտուր կտրամ քառասուն տուն,  
Շատ լաւ յաղցար գուեշտն հսկայ ու իմաստուն,  
Եւ մանուսանդ աղա թաքսոն ու Տէրտէրը  
Շատ լաւ տարին իրենց դերը:

Մէկը գնաց գետինն ինկած կոնդին հաջեց,  
Մէկն իր սուրը խեղճ ջարհին վրայ քաշեց:  
Նպատակը նայնն է Մակար, նայնը ըրին Ալեքսանդր եւ թէ կեսար.  
Թէ՛ եին, թէ՛ նոր աշխարհները քու աչքովդ արդէն տեսար:

**ԹԱՏԵՐԱԿՆԵՆ**

**ԽՆԴՈՒՔԻ ԵՐԵԿՈՅ**

Այս անունն սակ, Պէյրուսի Համազգայինի Գասպար Իփէկեան թատերախումբը, 18 Մարտ 1968-ին, ինչպէս նաև 20, 26 եւ 27 Մարտին, Կանդուսեան կը ներկայացնէր զանազան տեսարաններ Արփիար Արփիարեանին, Յակոբ Պարոնեանին, Նշան Պէլիկեանին:

Եթէ Յակոբ Պարոնեան, Հակոբեան անցնող տարիներու թիւին եւ Հակոբեան քնարուած տեսարաններուն թատերական պարտանախնդներէ եւ արտեստի գուրդ տեսարաններ ըլլալուն, զեռ կը պահէ իր ինչուք պատճառով դէմը, (որովհետեւ վերջէ ի վերջոյ իրաւ արուեստագէտի մը տկար դոքտերէն անուած տեսարաններ են, որոնք ինչքան ալ շարունակներ զրական ու արուեստի արժէք, շնն կը զարդ չկրնի արուեստագէտին կնիքը, որով շարունակ, ու տեղ տեղ): Երբեք կարելի չէ ըսել, զօրախումբը, Արփիար Արփիարեանի ՎԱԳՆԻ Բարեբարները կտորին համար, ու Նշան Պէլիկեանի «Յուզումը» մէջ արարող թատերակին համար:

Արփիար Արփիարեանի այդ յօդուածը, թե՛րեւս ուժեղ՝ որպէս ամբաստանագիր, իր ժամանակներու շարին աւելի պահպանողական քանի մը աղաներու հասցէին, ուժեղ չէ որպէս ինքնուրուագիւն կտոր, եւ շուտով, առաջին քանի մը տողերէն անդին կը դառնայ ծանրապըծուց: Իսկ խնդրով, ափսոս, երբեք չի պատճառներ: Ինչուքի երեկոյն մը դուրս գտնուող յօդուած մըն է, որ բնին վրայ կարող զորձեցին թատերախումբին խումբ մը զերկատարներ:

Նշան Պէլիկեանի զրուածքը, ժամուրի մէջ արուած Հետաքրքրական շուրջերու սահմանին մէջ ինչոք անէրքստ մըն է, ուր փորձ կը կատարուի ընչաքաղցուցիչը հեղեղ, կամ Երեւանի զարմանք: Ժառանգ են՝ որոնք զօրախումբը ներքին պարունակութիւն շունչներով, ինքն կը զարման անդին յեն կը զարման անցնել: Եթէ իտաղարկութեան մէջ, տեսարանի վերջին մասին զերկատարներու խամաճիկային արարաններ ըլլալը արտայայտող համապատասխան շարժում:

ձեւը քիչ մը ինչուք կը բերէ, անկէ դուրս, ինքն վրայ իրարու քով, եւ իրարու ետեւէ ինչու շուրս գիտնորը ոչ ինչուք կը բերեն (այս արքունք, զօրախումբը) այլ հիւանդագին բանի մը զգալութիւնը:

Յակոբ Պարոնեանին ընտրուած տեսարաններն էին միայն, որ կը պահանջէր առաջացնել, իրենց պարզութեան մէջ, սովորական կեանքէն անուած ընթացիկ տեսարաններով, ուր փոքր պատահարներ, փոքր սպորտներ, սակայն զէթ տեղ տեղ արուեստագէտի վրձինով պոստալ ընթացիկութեան մը կը յաջողին վարակել Կանդուսեան ժողովուրդը:

Պարունակութեան այս տկարութիւնը կը փոխարինէին զերկատարները, մեծ մասով, իրենց իտաղարկութեան մ. Սարգիսեան Պարունեանին տեսարաններու մէջ, ըլլայ վաճառականի դերով, ըլլայ զինչիկ իտաղարկ Տիմիթէոս աղայի դերով: Յակոբ Բարեբարեան, ժամանակորայն Արփիարեանի Յուս տեսարանին մէջ, Զաքար աղայի դերով: Տիկ. Նէլլի Մինասեան Տիմիթէոս աղայի կնոջ դերին մէջ մանաւանդ: Պրն. Վարդգէս Վարդապետեան, Պէլիկեանի «Յուզումը» թատերակին մէջ Տօթի. Մանուկի դերով, մանաւանդ մահէն ետք, խամաճիկներու բաժնին մէջ: Տիկ. Զ. Եանթի «Ականջի ցաւ» տեսարանին մէջ: Թաթու Այնճեանի՝ Վարդ Մարտիրոսեանի դերին մէջ: Մեղրակ Թահմազեան՝ «Անցորդ Զոհեր»-ուն առաջին գուն անցորդը:

Երկրորդ անգամ կը զարմանի նաև արդիական ժողովուրդը ինչպէս թատերական, արտարարութեան ըմբռնումին եւ ստեղծագործութեան մէջ (Յ. Արունեան) որոնք համար մասնաւոր յիշատակութեան մը արժանի է, քանի որ ընտրուած կատարներուն տկարութիւնները մեծ մասով այդ ասորիներով Եանդուցեան ինքնին վրայ:

Հանելիկ նաև, ընթերցանութիւնը յարապարի մէջ, թէ Գասպար Իփէկեան թատերախումբը պարտաստելու վրայ է, եւ Կանդուսեան պիտի հրաժարէ, թատերական արուեստի մեծ անուններէն Լուիսի Փիլոսոֆիայի «Պատուախոնք»-ութեան Հեղանքը թատերակը, 1968 Ապրիլ 20-ին:

Ներկայիս տրուած թատերական երեկոները համարելով զիւրին զուարճութեան երեկոներ, թատերի եւ արուեստի ըմբռնման մը համար, պիտի սպասենք Փիլոսոֆիայի թատերակի ներկայացման:

Բ. Փ.

# Հոգևարներ

Յոթ օր դատարանի գանդաց նիստում լուսավորվում էր Ա. Գ. Մինեազյանի և Եռ. Մ. Դանիելի զբաղմունքները: Դատարանում զինվորները արձակուրդի են գալիս և կարճատև ժամույսում լսելով հրատարակվող հեղինակների:

Փետրուար 13-ին դատարանը լսեց մեղադրանքը Դանիելի վերջին խոսքը: Փորձելով ներքին իր գրումների հեղինակական էությունը, նա, սակայն, յուշադրեց, որ իրեն մեղադրում է նաև ինքն իր գրումներով, որ զբաղվում էր հեղինակների հետևանքներով և արտասանում էր զրուցումները և արձագանքները: Դանիելը խոստովանեց, որ Մինեազյանի և իր գրումներում թաղանթի շուրջը անտակառուցելի և մեղադրողի համար վերադարձված շատ պնդումներ կան:

Մեղադրուող կողմի նի.թերը, իրենց՝ մեղադրանքների, վկանների, էզոպիտիզայի ջուջ-ժուջները, ներկայացրած փաստաթղթերը անհերքելիորեն ապացույցին, որ Մինեազյանի և Դանիելը զբաղվում են սոցիալիստական հայրենիքը, նրա ժողովրդին, թշնամու զաղափարական զենք են առնել զայլաբանում սովետական պետության դեմ:

ԹԱՃԱԹ զեղադրյալ դատարանի քրեական գործերի պետական կուրիան, որի կազմի մեջ մտնում էին ԹԱՃԱԹ զերազմի դատարանի նախագահ Լ. Ն. Սմիռնովը, ժողովրդական ատենակալներ Ն. Ա. Ձեյնան և Պ. Բ. Սոկոլովը, Մինեազյանի և Դանիելի մեղադրանքները ԹԱՃԱԹ քրեական օրենսդրության 70-րդ յոդուածի առաջին մասով:

Դատարանը Ա. Գ. Մինեազյանի դատապարտանքի համար արտասանեց իրեն անձի մեղադրանքները զազուցում, Եռ. Մ. Դանիելին՝ հինգ տարի բանտարկության՝ իրեն անձի մեղադրանքները զազուցում:

# ՋՐՊԱՐՏԻՉՆԵՐԸ ՊԱՏԺՈՒԵՑԻՆ



Սիմիազյանի փաստերնախի զազուցում կախարչը բանա կը քալի...

Դանիելում ներկայ գտնուող՝ աշխատանքների, հասարակայնության և Մանուկի զբաղմունքի կազմակերպության ներկայացուցիչները դատավճիտ ընդունեցին նախահարուժիչներով: Ջրաբանները արժանի պատիժ ստացան:

ԳՅԱԼԻ  
ԵՎրական Թերք, 1966, քիւ 8



### ... ՉԱՄՉՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Դիմացի էջի լուրը, մենք կարողացինք նախ Վերական թերթին մէջ. բառացիորէն նոյնը, բայց այս անգամ թեթեւցած սրտով, տեսնեք ուրիշ անոց, ԹԱՄՍ դործակալութեան թղթակիցին անունով: Կը նշանակէ, թէ պաշտօնապէս բանաձեւուած լուր մըն է եւ ոչ թէ թերթին կողմէ խորհուրդած արածագրութիւն մը: Այս պարագային լուրը ոչ մէկ առանձին նշանակութիւն ունի, բայց նշանակութիւն պետի ունենար մեղի համար, պիտի ունենար անպայման, եթէ մեր գրողները կամ թերթերուն խմբագիրները փութային եզո՞ծ հաւատաքնութեան իրենց բաժինը բերել:

Այս ուղղութեամբ գտան փորձեր ունինք մենք ու դարերը չեն կրնար ընել ամօթ մը, որ կարգ մը գրողներ կապեցին իրենց անունին, հաւատաքնութեան ենթաբերուած ուրիշ գրողներու՝ Չարենցին, Բակունցին եւ ասոնց ընկերներուն առիթով: Պատմութիւնը ծանօթ է ու ողջ մնացած ծառայած խոնքերուն ողբերգութիւնը կը շարունակուի: Չմանրամասնենք: Նման անհանոյ կացութիւն մը անեղծուեցաւ նաեւ Փաստերնաքի առիթով: «Տօ՛քար ժիվակօ» վէպի դժբախտ հեղինակին դէմ շղթայագրեւորուած խաչակրութեան անմիջապէս արձագանքեց Հայաստան ու քննադատներէն մէկը՝ Վազգէն Մնացականեան չմարտնեցաւ. «Իմեկ տխրահաշակ Փաստերնաքի օրինակին» ու գրել:

«Բայց անա գտնուեց մի մոլախոտ, որը օղակուելով, բարձրացաւ իր սնամէջ փառասիրութեան գագաթը եւ այլևս շուրջը ոչինչ ու ոչ ոքի չտեսաւ, քացի իր սնամէջ «ես»-ից եւ այն ողորմութիւններից, որ նրան տուել են հայրենիքին դաւաճանելու համար: Փաստերնաքը նաեւ հեռուարութիւնից չկարողացաւ հասկանալ Հոկտեմբերեան ռեալիտիւնը եւ նրա վերադարձիչ ուժը մեր Հայրենիքի ժողովրդների կեանքում: Աւելին, նա պարզապէս չկարողացաւ այլևս թաքցնել իր առեւտրիւնը սովետական իրաւիքներէն նկատմամբ, յայտ աշխարհի համեմատ երկար տարիներով փայփայած «Տօ՛քար ժիվակօ» ծաւալուն գրպարտութիւնը, շահելով համակրանքը այն մոլախոտերի, որոնք, հայ բանաստեղծի դիպուկ արտայայտութեամբ, սպրում են «աշխարհի շայակն ելած»: Փաստերնաքն էլ էլը մտնում մաշակել այդ շայակի հաճոյքը, մտնանալով դատմութեան երկուստարդութիւնը եւ իր սապատար ծերութիւնը»:

Այս տղերէն հազիւ քանի մը տարի անց՝ վերականգնեցաւ Փաստերնաքի փառքը: Հայաստանի թերթերուն մէջ նոյնիսկ մեծերու կարգին կէ լիւրի անիկա ու դժուար թէ Վազգէն Մնացականեան կրկնէ իր «Մոլախոտը», անամէջ «ես»-ը, «հայրենիքի դաւաճանը», «ծաւալուն գրպարտութիւնը» կամ փորձէ անպատ մը եւս լիւրի կղերաբախտ գրողին ռապատար ծերութիւնը:

Գրականութեան մէջ չկայ անիկ ծանր պարագայ, քան երէկուայ տղօթքը կամ Հայոյանքը չկարենալ կրկնելու իրողութիւնը: Հայաստանի գրողները թէ՛ իրենց տղօթքներուն, թէ՛ Հայոյանքներուն հետեւանքները լայնօրէն ու լայն ժամանակի մը վրայ սպրեցան, կ'ապրին: Կը բաւէ՛: Մինեմովսկիի եւ Դանիէլի տրուած դատաւճիտը «ժափահարութիւններով» ընդունողներուն հետ անհրաժեշտ չէ ձայն բռնել ու ամչնալու նոր պատճառներ կուտակել: Կը բաւէ՛:

### ԵՐԳ, ՀԵՌԱԳԻՐ, ԽՆՁՈՐ ԵՒ ՏՈՒՆ...

Իրենց անընդունակութիւնը անպարկեշտ եզանակներով հանդերձող սովորական դպիրներու կարգին, ցաւալի է անշուշտ, երբ մարդ կը հանդիպի արդէն անուն ունեցող եւ տաղանդի վկայութիւններ տուած զէմքերու: Հայաստանի պրակտիկական մէջ օրինակը մէկ չէ: Ու անկէ զերծ չէ նոյնիսկ Խմբի, կը թուի, թէ «Կուսակց»-ին ու «Երգ-Սրգոց»-ին հեղինակը ասան ասան երգ կը գրէ ուրիշին եղանակով, հետագիրներ կը յղէ ուրիշին բառերով, խնձոր կ'ուտէ օտարներու խնձորենիէն ու տուն կը կառուցանէ այլոց ոճով:

Հրանտ Թամրազեան իր «Գրական ուղիներում» հատորին մէջ կը խօսի Խմբի «Երգ Իմ» բանաստեղծութեան մասին, մէջբերումներ կը կատարէ անկէ եւ ապա դիտել կու տայ, թէ

«Այստեղ ակնյայտ է Վ. Մայակովսկիի «Ամբողջ մայնով» պոեմի նախերգանքի բանաստեղծական մտքերի եւ թեւաւոր խօսքերի կրկնութիւնը»:

Նոյն քննադատը, քիչ մը աւելի անդին.

«Իմիմի Ձեզ» բանաստեղծութեան մէջ կայ «եռագրի նման երգը կարն պէտք է լինի» մի շատ լաւ տող, որը, ի դէպ, նոյնպէս Մայակովսկիի նշանաւոր տողն է» (Տրուած է ռուսերէն):

Անցեալ տարի, «Գրական թերթ»-ին մէջ, Ս. Աղաբաբեան բանաստեղծութեան մասին յղածաւարք մը գրեց, որուն, ի միջի այլոց, անդրադարձաւ նաեւ Գ. Մահարի: Մահարի իր գրութեան մէջ անկ մը կ'ընդգծէ.


«Աղաբաբեանը նիշդ կերպով գտել եւ կազմ կողքի է դրել ռուս բանաստեղծ Սայուսիցի եւ Իմիմի «եռագրերը», այսինքն միեւնոյն խնձորի մասին գրած նրանց երկու բանաստեղծութիւնները, որոնք նման են իրար մէկ ծառից բնական երկու խնձորի նման... Գծարխտաբար խնձորենին պատկանում է Սայուսիցիին»:

Պարագան մտահոյզը դարձաւ ուրիշն: Աւելին: Քանի մը շարք առաջ, «Նայիցի»-ի մէջ սպուռեցաւ Խմբի անտիպ մէկ քերթուածը, «Հայ Տուներ»: Հիւրընկալ թերթը «չափագիտական տարազի մը պէս յստակ ու մշտնջեն, գեղեցիկ ու գիտաւոր» բառերով բնութարան է քերթուածին տրուած մասը, ուր կը կարդանք.

Մեր մեքագատառ մագաղաթներում՝ Չորս տղերի մէջ,  
 Ու հեքիաթներում՝ Որանց գուր չէ, որ  
 Մեր խաղիկներին Մենք կոչել ենք... տուն.  
 Այն խորտու-ւտրուտ Գ. ԵՄԻՆ

Եթէ «չափագիտականը», «յստակը», «ճշգրիտը», «գեղեցիկը» եւ «գիտաւորը» կը վերաբերին Խմբի քերթուածին նաեւ այս մասին, ապա ուրիշն պէտք է հաւանութիւն իրմէ անոնք եւ շուրջին Ս. Կապուտիկեանին, 1959-ին գրած «Երգը, մեր երգը» քերթուածին սա մասին համար-Յրգը, մեր երգը... Հայրենի հող է,  
 Տանիք ու լո՛յս է նա մեր հագում.  
 Գրաւ համար էլ նրա չորս տղեր  
 Մեր հայոց լեզուով կոչում է տուն...

Կը մնայ մագիքի, որ այս քերթուածին խաղեր խաղայ Խմբի եւ շատ խաղի չեւերէ ուրիշները:



**ՇՆՈՐՀԱԿԱԿՈՒԹԵԱՄԲ ԱՏԱՑԱԾ ԵՆՔ**

«ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ», Տօթ- Ռուբէն Թագաթեան, Կիպրոս:

«ՄՈՐԵՐ» (Քերթուած), Շահպան, Հալէպ:

«ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԸ ԴԱՐՆՐՈՒ ՄԵՋԷՆ» (ուսումնասիրութիւն).  
Վահրամ Կոօբեան, Երուսաղէմ:

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 20 Լ. ՈՍԿԻ  
ԱՐՏԱՍԱՀԻՄԱՆ 7 ՏՈՒԱՐ  
ՀԱՏԱՎԱՅԱՌ 2 Լ. ՈՍԿԻ



Վարչութեան հասցէն։—

**G. SASSOUNI**

Rue Sélim Boustani, Beyrouth - Liban

digitised by A.R.A.R.@